Մոլախինդ, Կարոսն, Ջաման, Սամիթ,
Անիսոն, Թանթրվենի, Մոշայ, Վուշ։

### Լուսաբանութիւն.

Զշնալեզուն չուտեն անդէայք։ Եզնալեզուն յաճախ բուսանի ՚ի բերլիա. ուստի և տարեալ եղև յեւրոպիա։ Շնախաղողն է խոտ ինչ յոյժ թունաւոր։ Բաղեղն է ազգ մի բուսոյ, որ պատատի զծառովք, որով և լինի վնասակար նց։ Որթն՝ է թուփ կամ տունկն խաղողոյ։ Ճակնդեղն ասի և՛ բազուկ։ Զմոլախինդն ուտեն ոչխարք, բայց երիվարք, կովք և այծք ոչ։ Միջատք չուտեն զթանթրվենի։ Ջուր ծաղկան թանթրվենւոյս օգտակար է յոյժ լուսոյ աչաց և զօրութեան։ Վուշն է բոյս կտաւոյ, որ յաճախ գտանի յեգիպտոս։

## ԴԱՍ. Դ.

Խստոր, Գրաս, Սոխ, Շուշան, Ծնեբեկ,
Յակինթ, Հալուէ, Կնիւն, Գրտու, Որիզ։

Լուսաբանութիւն.

Ոռլոն, ասի նաեւ՝ կաղաբոյս։ Ցակինթն՝ է անուշահոտ ծաղիկ ինչ. նաեւ է ակն պատուական։ Հալուէն՝ է ծառ մի, յորմէ ելանէ աւիշկ ինչ պատուական։ Որիզ կամ բրինձ է ունդ ինչ քաջայայտ։

## ԴԱՍ. Ե.

Ցախ, Կինամոն, Դաբնի։

Լուսաբանութիւն.

Ցախն՝ է չորացեալ ճիւղք, կամ չերտք ծառոյ եւ թփոյ։ Կինամոն, կինամոմոն կամ դարչին՝ է ծառ ինչ, մեծութեամբ նման ձիթենւոյ. որոյ կեղեն է անուշահոտ, որ եւ 'ի գործ ածի 'ի կերակուրս, եւ 'ի դեղորայս։ Ընտիր կինամոնն բուսանի 'ի սէյլան եւ զկնի նը 'ի չին։ Յարմատոյ կինամոնի ելանէ քափուրն։

## ԴԱՍ. Զ.

Փեգենայ, Մաթուզենի, Ծմակատունկ։

Լուսաբանութիւն.

Փեգենայն, է բոյս ինչ մշտադալար. յորմէ կազմեն զդեղթափ ընդդէմ թունից։ Զմաթուզենին ախորժանօք ուտեն այծք. բայց ձիք ոչ։ Ծմակատունկն բուսանի 'ի ծմակի, ուր արեւն ոչ ծագէ։

## ԴԱՍ. Է.

### Փրփրեմ, կամ Ընձուռուկ։

Լուսաբանութիւն.

Փրփրեմն է ուտելի բոյս ինչ թթուաշ և պարարտ որոյ ծաղիկն բացեալ լինի 'ի միտասանէ մինչև ցերկոտասան ժամն միջօրէի։

## ԴԱՍ. Ը.

Մրտենի, Նռնենի, Նշենի, Կեռասենի, Տանձենի, Ջղարենի, Խնձորենի, Սին, Վարդենի, Մորենի։

Լուսաբանութիւն։

Դատաւորք, և իշխանք աթենայւոց զգենուին զպսակս արարեալ 'ի մրտենեաց իբր այլաբանական նշան իշխանութեան։ Տեսակք խնձորենեաց 'ի Հայաստան' գտանին իբրև 400։

## ԴԱՍ. Թ.

Կապպար, Մեկոն, Լեմոնենի,
Ակոնիտոն, Հողմածաղիկ, Եղբորոս։

Լուսաբանութիւն.

Մեկոնն արտադրէ զափիոն։ Ակոնիտոնն է խոտ ինչ թունաւոր։ Հողմածաղիկն է ծաղիկ մի յոյժ գեղեցիկ։

որոյ մերձաւորապէս հաշուին 200 տեսակք. Եղլորոս որ և ասի՝ կոճ վրայի՝ համարեալ էր ՚ի նախնեաց իբր ազդուագոյն դեղ խելագարութեան.

## ԴԱՍ. Ժ.

Ջոպպայ, Ընամուխ, Ծոթրին, Կպտուախտա.

## ԴԱՍ. ԺԱ.

Կաղամբ, Շողգամ, Մանանեխ, Բողկ.

## ԴԱՍ. ԺԲ.

Ունդ, Լուբիա, Ոլոռն, Ոսպն, Բակլայ.

## ԴԱՍ. ԺԳ.

Հազար, Եղերդ, Դառաճիճ,
Ոզողն, Կանգառ, Օշինդր.



## ԴԱՍ. ԺԴ.

Վարունգ, Դդմենի, Եղինջ, Թթենի, Կաղնի,
Սնձենի, Սօս, Թեղօշ, Մայր, Նոճի.

## ԴԱՍ. ԺԵ.

Ուռենի, Բեւեկնի, Կանեփ, Կաղամախ, Գիհի.

## ԴԱՍ. ԺԶ.

Կորեակ, Նարդոս, Հայի, Թզենի, Ժանտաթզենի.

## ԴԱՍ. ԺԷ.

### Մամուռ, կամ Լօռ.

### Լուսաբանութիւն.

Մամուռն է կանաչ խոտ ինչ իբրեւ զբուրդ, որ բուսանի 'ի ծովու, կամ 'յեզերս նր̃ 'ի վր̃ քարանց. կամ յափունս գետոյ. եւ կամ 'ի գիջին եւ 'ի խոնաւուտ տեղիս, եւ զկեղեւովք ծառոց, եւ մերթ զաղբերօք.

## ԽԱՌՆՈՒՐԴՔ.

| | | | |
|---|---|---|---|
| Պտուղ, | Միրգ, | Ողկոյզ, | Խնձոր, |
| Ծիրան, | Ալոճ, | Նուռն, | Շլոր, |
| Նուշ, | Տանձ, | Կեռաս, | Թուզ, |
| Զիթապտուղ, | Ընկոյզ, | Կաղին, | Մեշուկ, |
| Կորիզ, | Սերկեւիլ, | Ելակ, | Թութ, |
| Հաստապտուղ, | Վարդ, | Պղպեղ, | Կոճապղպեղ, |
| Ջմուռ, | Ռետին, | Զիւթ, | Գաղխէժ, |
| Արմատ, | Կանիթ, | Ծղօտ, | Ցօղուն, |
| Բուն, | Արմ, | Հիւթ, | Բալասան, |
| Կեղեւ, | Ոստ, | Ճիւղ, | Տերեւ, |
| Ծաղիկ, | Բողբոջ, | Ընձիւղ, | Փուշ, |
| Կոճոն, | Կոկոն, | Փայտ, | Տախտակ. |

Պտուղն՝ է ընտիր մասն տնկոյ, որ արտադրի 'ի փթթիլ կոկոնից՝ սնեալ անտի ոպ̃ մանուկ 'ի ստեանց. սա յոմանս է հատ մերկ, ոպ̃ խաղողն. յոմանս է փեճենկաւոր, ոպ̃ նուշն, և յոմանս պատենաւոր, որպէս ցորեան։ Տեսակք ողջոյն ուտելի պտղոց յաշխարհի՝ հաշուին իբրև 12000.

Ողկոյզ կամ խաղող է քաղցրահամ պտուղն որթոյ. որ իւրով ախորժահամ ներգործութեամբն զուարթացուցանէ, ջերմացուցանէ և զօրացուցանէ զմարդ. և դեղ է ակար ստամոքաց, ըստ վկայելոյ Ածեղէն տառից՝ թէ, * Գինի ուրախ առնէ, և իւղ զուարթ||։

Ձիթապտուղն տևէ յերկարագոյնս, և պարարէ և անուշացուցանէ զկերակուր մարդոյ. և ևս վառեալ՝ լոյս տայ նմա 'ի գիշերի։

Վարդն է ծաղիկ ինչ յոյժ անուշահոտ և յոյժ գեղեցկատեսիլ քան զայլ ամ̃ ծաղկունս, որ և ասի թագուհի ամ̃ ծաղկանց.



# ՀՈՂՔ ԵՒ ՀԱՆՔ

## ԴԱՍ. Ա.

Հողք նշանաւորք՝ են

Կիճ, Աղաբաստր, Գաճ.

Լուսաբանութիւն.

Կիճ կամ մարմարիոն՝ է տեսակ ինչ աղնիւ և կարծրանիւթ քարի, որ ըստ քիմիականաց՝ է լուծանելի յաղ թթուոյ.

Աղաբաստր կամ չիչ՝ է ազգ ինչ աղնիւ թափանցիկ կճոյ, յորմէ գործեն շիշ իւղոյ անուշից. ոչ լինի սա յեռանդեան ընդ թթուոյ աղի.

Գաճ կամ բուռ՝ է սպիտակ նիւթ ինչ նման կրոյ, որ դժուարաւ ընկղմի 'ի ջուր.

## ԴԱՍ. Բ.

Հողք նշանաւորք՝ են

Սունկ, Ցեխան.

Լուսաբանութիւն.

Սունկն՝ է քար ինչ գորշագոյն, թեթև, ծակոտկէն և դիւրաբեկ. ելանէ 'ի խորոց հրաբուղխ լերանց.

Յեսան՝ է քար ինչ կարծրացեալ յօղ և յիւղ. և մի ըթ նշանակէ զքարն, յորոյ վր̄ սրեն զերկաթեղէն գործիս։

## ԴԱՍ. Գ.

### Հողք կարծրացեալք՝ են

| | | |
|---|---|---|
| Գայլախազ, | Յասպիս, | Վանակն, |
| Զմրուխտ, | Փորձաքար, | Ակատ։ |

### Լուսաբանութիւն.

Գայլախազն է քար ինչ կարծր. որ ՚ի գործ ածի ՚ի հրացանս. ընդ բեկանիլ սոր̄՝ վերամնան ՚ի նմին այնքան սրագոյն ծայրք, մինչ զի այնու կարէ ոք ՚ի գործ ածել ոպ̄ ածելեօք առ ՚ի կտրել զինչ և իցէ իրս։

Յասպիս՝ է պատուական քար ինչ կարծրանիւթ, որ ունի զգոյն կանաչ նման զմրխտոյ. լինի և ս դեղնագոյն, կապուտագոյն, կարմրագոյն և սպիտակ. բայց կանաչն է ազնուագոյն։ Բազումք ՚ի քարանց աստի ունին տեսանել ՚ի վր̄ իւրեանց՝ զպէսպէս երակս և բիծս կերպաւորեալս ՚ի ձև ծառոց կենդանեաց և այլոց նմանեաց։ Ըստ բժշկաց՝ արգելուն զհոսումն արեան։ Զօրացուցանեն զստամոքս. շիջուցանեն զանբարեխառն տապ տենդին. սրեն զտեսութիւն աչաց. և ընդդէմ թունից լինին դեղթափ։

Վանակն, որ և ասի բիւրեղ՝ է քար ինչ սառնորակ, թափանցիկ և լուսապայծառ ըստ նմանութեան ջինջ սառին։ Սա ըստ բազմաց՝ է հիւթ ինչ իբր և զջուր

որ 'ի խորս երկրի, կամ 'ի ծերպս և 'ի խոռոչս ապառաժից սաստիկ ցրտութեամբ սառուցեալ կարծրանայ. և այնպէս երկարատև մնալով՝ զգենու ըզ-բնութիւն քարի, և լինի անլուծանելի հանգոյն բազմագունի ական։

Զմրուխտ՝ է քար ինչ պատուական և կանաչագոյն. և է ելեքտրական շփմամբ։

Փորձաքար կամ մահակ՝ է քար ինչ, յոր շփեալ զոսկի կամ զարծաթ՝ փորձեն զորպիսութիւնն։

Ակատ՝ է քար ինչ պատուական, և բաղադրեալ 'ի բիւրեղէ և 'ի հողոյ։

## ԴԱՍ. Դ.

### Հողք աղապալենք՝ են

Բորակ Պաղլեղ Պաղլեղաքար, Աղ։

Լուսաբանութիւն.

Բորակ՝ բորակ, աղբորակ՝ կամ չնչբորակ՝ է աղ ինչ հանեալ 'ի հողոյ, 'ի գոմոյ, յախորակաց, յորմոյ, 'ի ժայռից. ևն։

Պաղլեղ որոյ են բազում տեսակք՝ է նիւթ ինչ ոչ զբորակ կամ՝ զաղ. փայտ թրջեալ կամ՝ թացեալ 'ի ջուր պաղլեղին՝ ոչ այրի դիւրաւ։

Պաղլեղաքարն՝ է գանձ պաղլեղի՝ զոր 'ի կիր առնուն վիրաբոյժք։

Աղն գոյանայ 'ի ջրոյ ծովու և յերկրային հիւթոյ. զոր հասարակօրէն լուծեալ ցանեմք 'ի վերայ կերակրոյ: Աղն խառնեալ ընդ ձիւն և ընդ սառն՝ սաստկացուցանէ զցրտութիւն. և յիւղ խառնեալ՝ սակաւ ծախի իւղն 'ի լապտերի:

## ԴԱՍ. Ե.

Հողք դիւրալուծք՝ են

Սաթ, Ծծումբ, Զաւիկ.

Լուսաբանութիւն.

Սաթն, որ և ասի՝ բազմագունի ակն՝ է ազնիւ քար ինչ դեղնագոյն. յորժամ թացեալ զսա 'ի ջուր և 'ի հուր մերձեցուցեալ՝ վառի իբրև զմոմ, և ոչ ծախի. բայց յորժամ ձէթ արկցի 'ի վերայ նորա՝ փոխանակ առաւել բորբոքելոյ՝ շիջանի. Իսկ 'ի բժշկականութեան ունի զբազում օգտութիւնս. և է յոյժ ելեկտրական:

Ծծումբ՝ է հանք ինչ դեղնագոյն, որ ելանէ յերկրէ իբրև զկոշտ երկրի, մասունք նորա են ձիթայինք, յորժամ 'ի հուր մերձի՝ վաղվաղակի բորբոքի, և հանէ զհոտ գարշելի. Ոչ լուծանի սա 'ի ջուր:

Զաւիկ, որոյ երեք են տեսակք, այն՝ կարմիր, սպիտակ և դեղին, է հանք ինչ, որ ելանէ յերկրէ իբրև զքար, զորս լուծեալ 'ի գործ ածեն 'ի նկարս, և յայլ դեղօրայս մարդկեք. է բնութեամբ թունաւոր. և մնասաբեր, մանաւանդ սպիտակն. և է կարի իմն վառելի:

# ՄԵՏԱՂ ԿԱՄ ՀԱՆՔ

## ԴԱՍ. Ա.

| | | | |
|---|---|---|---|
| Հրահալելի, | Ոսկի, | Արծաթ, | Անագ, |
| Պղինձ, | Երկաթ, | Կապար, | Արոյր, |
| Պողպատ, | Մագնիս, | Սպիտակ, | Նօթ, |
| Կինաբարիս, | Ապակի, | Մարգարիտ, | Քարահանք. |

### Լուսաբանութիւն.

Հրահալելի, մետաղ կամ հանք՝ նշանակէ զինչ և իցէ իր, որ յերկրէ ելանէ, և կարէ հալիլ հրով և ձուլիլ. որպիսի է ոսկին, արծաթն, եւն.

Ոսկին ՚ի մէջ հանքայ զառաջին տեղին ունի, ոպ̄ և ՚ի մէջ քարանց՝ ադամանդն. Է ևս տեսակ մի նորագիւտ և ազնիւ հանքի կոչեցեալ փլատինայ՝ ոպ̄ զոսկի, բայց սպիտակ իբրև զարծաթ. զի զօրէն ոսկւոյ ոչ ժանգահար լինի. Ասի թէ՝ 16 ունկի ոսկւոյն՝ ոսկեզօծ արասցէ զարծաթի թել մի, որ բաւական իցէ պատել զբոլոր հողագնտովս.

Մի գարեհատ արծաթն կարէ սփռիլ կամ ընդարձակիլ իբրև չորս հարիւր ոտնաչափ.

Պողպատն է տեսակ ինչ կարծրագոյն երկաթոյ, որ գտանի ՚ի հանքս երկաթոյ.

Մագնիսն՝ է քար ինչ երկաթախառն ձուլեալ յերկաթոյ ՚ի քարէ յիւղոյ և յաղէ. որոյ չորք են գըլխաւոր զօրութիւնք. Ձգել, Վանել, Ուղղել և Հաղորդել. Ձգելով զօրութեամբն յինքն յափշտակէ զերկաթ մինչև 60 լիտրէ. Եթէ առկախեսցին երկու մագնիսք՝ դիմեն առ իրեարս փոփոխակի ձգելով ըզմիմեանս. Վանիչ զօրութեամբն՝ եթէ իցեն բ̅ այլ և այլ բևեռայ՝ վանեն զիրեարս. Ուղղիչ զօրութեն մագնիս ինքնին միով բևեռաւ իւրով ՚ի հիւսիսա կողմն, և միւսովն ՚ի հարաւակողմն հայի. որով հնարեցաւ կողմնացոյցն նաւուց. Իսկ հաղորդիչ զօրութեամբ զյատկութիւն իւր հաղորդէ երկաթոյ և պողպատի առանց կորուսանելոյ ինչ յիւրմէ.

Սպիտակն՝ է կապարն փոխարկեալ ՚ի կիր սպիտակ, որ ՚ի գործ ածի ՚ի նկարս.

Կինաբարիս կամ տինաբարիս՝ է ծծումբ խառնեալ ընդ սնդկի.

Մարգարիտն՝ է սպիտակ գոհար ինչ բոլորակ, որոյ յարգ և պատիւն քաջայայտ է ՚ի մէջ ամ̃ ազանց, և մանաւանդ տիկնայց. Ընտրելագոյն մարգարիտք գտանին ՚ի բահրէն ՚ի ծոցն պարսից. Հիանալի է յոյժ գոյացութիւն մարգարտի ՚ի գաղտակերեայն. քանզի ամենայն խիտ աւազք մանրագոյն անցեալ ընդ մասունս գաղտակերեային ժողովին յընդունարան այսր խեցեմորթի. ուրանօր զօդին է̅ միմեանս և տարամադրին, և լինին մարգարիտս, որ բ̅ այլևայլ նիւթոյ և եղանակի

լինին այլ և այլ գունով և ձևով, մեծ և փոքր։ Ըստ այսմ և առաջք ստորագոյնք անցեալ ընդ ճղճղկեն գոյացուֆի երկկամանց՝ զնստին ՝ի բուշտոն, և անդ վանանակնանան․ յորմէ պատճառի քարն ՝ի բուշտն։ Յուլիոս Կեսարոս ընծայեաց Սերուիլեայ մօրն Բրուտոսի զմարգարիտ մի, որ արժէր 80,000 ձքին կամ վենետկեան ոսկի, որ առնէ իբրև 400,000 ռուփի հնդկաց։

Քարահանքն է մետաղ կամ հանքքարանց, յորս գոյանան զանազան քարինք։ Քարինք ոչ այլ ինչ են տիրապէս, եթէ ոչ հող կուտեալ և մածուցեալ ՝ի մի ՝ի հիւթոյ ինչ, որ առ սակաւ սակաւ չնդելով՝ տայ մասանց հողոյ առաւել սերտ միաւորիլ ընդ իրերաց։ Եւ յայնսակս ըստ օրինակի հողոյ բաժանին և քարինք յերիս սեռս, յապակենիութս, ՝ի կրանիութս, և ՝ի կաւանիութս։ Ապակենիութքն են առաւել կարծր և ծանր քան զայլ քարինս, և կայծ արձակեն հարեալք պողպատիւ։



# ՄԱՐԴԿԱՑԻՆ
# ԱՆԴԱՄԱԶՆՆՈՒԹԻՒՆ

## ԴԱՍ. Ա.

Մարմին, Անդամ, Ոսկր, Աճառ, Մսան,
Ջիղ, Երակ, Շնչափող, Միս, Մկան,
Կաշի, Թաղանթ, Թել, Մազ, Գանգուր.

### Լուսաբանութիւն.

Երակք են խողովակք ինչ որք հաւաքեն և դարձուցանեն անդրէն զարիւնն ՛ի ծագաց շնչերակաց կամ ներդից առ սիրտն.

Մկանունք ՛ի մարմին մարդոյ՝ հաշուին իբրև 446. Պաշտօն մկանանց է նախ կատարել զշարժմունս մարմնոյ յաւէտ զկամայականս. Երկրորդ խառն ընդ ջլաց տան մարմնոյն զոյժ և զթեթևութիւն.

Շնչափողք, կամ՝ շնչերակք են խողովակքն, որք ելանեն ՛ի խորոց սրտի, և անտի բաժանեալ յանդամս՝ բաշխեն զարիւնն առ իւրաքանչիւր մասն մարմնոյ.

Եւրոպայի կանայք գանգրեն և խոպոպեն զհերս գլխոյ իւրեանց ջեռուցեալ երկաթով. իսկ կանայք նախնի յունաց՝ առ ՛ի բացայայտել բանիւ զսուգ և զդառնութիւն սրտի իւրեանց վն մեռեալ ընտանեաց և բարեկամացն՝ հատանէին զհերս գլխոյ իւրեանց և նոյուն նուիրէին գերեզմանի.

## ԴԱՍ. Բ.

| | | |
|---|---|---|
| Խելք, | Ուղեղ | Ճարպ, |
| Արիւն, | Կաթն, | Մաղձ։ |

Լուսաբանութիւն.

Խելք կամ ծուծ՝ նշանակէ զուղեղն գլխոյ կենդանւոյն։

Մաղձ կամ լեղին՝ է հասարակ անուն երկուց հիւթոյ կենդանւոյն. որոյ մինն է դեղին. իսկ միւսն սեաւ։ Գոյանան նք ըստ մեծի մասին 'ի խախայոյն 'ի կծու և 'ի դառն կերակրոյ. և պատճառեն ըզպէսպէս հիւանդութիւնս և զախտս՝ մանաւանդ ըստամոքայ։

## ԴԱՍ. Գ.

| | | | |
|---|---|---|---|
| Գլուխ, | Գագաթն, | Երեսք, | Դէմք, |
| Ակաւառակ, | Ճակատ, | Յօնք, | Արտեւանունք, |
| Աչք, | Բիբ, | Ապխտակուց, | Աղբիւր, |
| Քունջ, | Արտասուք, | Ունկն, | Բլթակ, |
| Քունք, | Ունչ, | Պռունգն, | Այտ, |
| Շուրթն, | Բերան, | Լինտր, | Ատամն, |
| Ծնօտ, | Լեզու, | Կզակ, | Մօրուք, |
| Պարանոց, | Ծոծրակ, | Որկոր, | Ուս, |
| Ողն, | Կուրծք, | Գիրկ, | Կուշտ, |
| Երիկամունք, | Փոր, | Պորտ, | Ազդր, |

| | | | |
|---|---|---|---|
| Զիստ, | Ծունկ, | Սրունգն, | Ոլոք, |
| Թամբ, | Ոտն, | Ոտնամատն, | Կրունկն, |
| Գարշապար, | Ներբան, | Բազուկ, | Ընթ, |
| Ընթատակ, | Արմունկն, | Դաստակ, | Ձեռն, |
| Ողն | Ափ, | Մատն, | Ծկոյթ, |
| Մատանեմատն, | Միջնամատն, | Ցուցամատն, | Բոյթ, |
| Կռուփ, | Բուռն, | Եղունգն, | Ցօդք։ |

## Լուսաբանութիւն։

Բոլոր ատամունք մարդոյ, են 32։ Առաջին ատամունքն որք բուսանին ՚ի տղայական հասակի՝ են ութ, կրծիք կամ հատուք կոչեցեալք, որք են յառաջոյ կողման բերանոյն։

Սրունգն բաղադրեալ է յերկուց ոսկերաց։

Ոտնամատն կամ մատունք ոտից՝ բայց ՚ի բութէն, բաղադրեալ են յերից ոսկերաց, իսկ բոյթն՝ յերկուց ոսկերաց միայն։

Դաստակ կամ դաստակ ձեռայ՝ պարունակէ զութն փոքրիկ ոսկերս։

Իւրաքանչիւր ձեռին հաշուին 27 ոսկերք։ ՚Ի մէջ ամ ազանց. մանաւանդ հայոց. պարսից և յունաց, սովորութիւն է՝ խոստանալ զհաւատ իւրեանց կամ զերաշխաւորութիւն տալով զաջ ձեռն իւրեանց։ Իւրաքանչիւր մատն ձեռին բայց ՚ի բութէն՝ ունի զերիս ոսկերս, իսկ բոյթն զերկուս միայն։

## ԴԱՍ. Դ.

Խռչափող, Թոք, Շունչ, Սիրտ,
Դուռն, Աղիք, Լեարդ, Փայծաղն։

### Լուսաբանութիւն.

Շունչն՝ ըստ փիլիսոփայից, է անօսր և նուրբ ոգիք օդատեսակք, որք իբրև զնուրբ գոլորշիս ծնեալ լինին 'ի սիրտն զօրութեամբ ջերմութեանն, և մղէն զարիւն յիւրաքանչիւր անդամս, որոց 'ի զօրանալն՝ զօրեղանայ կենդանին, և 'ի պակասիլն՝ լքանի, և նուաղի։

Դուռն ի բժշկաց՝ նշանակէ զվերնաբերանն ստամոքսայ։

## ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ ՄԱՐԴՈՅ.

## ԴԱՍ. Ա.

Տեսանելիք, Հոտոտելիք, Ճաշակելիք, Լսելիք, Շօշափելիք։

### Լուսաբանութիւն.

Զգայութիւնն տեսանելեաց ազնուագոյն է, և աննիւթականագոյն քան զայլ ամ զգայութիս. զի առա-

ւել հեռաձիգ է և անայլայլելի քան զլսողութիւնն, և առաւել պայծառ ծանօթութեանց տպաւորիչ 'ի հոգին քան զայլ զգայութիւնս. որովհետև բազմայայտագոյն ևս իմանամք զոր տեսանեմք, քան զոր լսեմք և հոտոտեմք, կամ ճաշակեմք և շօշափեմք. Այս զգայութիւն միայն՝ երևեցուցիչ է իրաց. իսկ այլ զգայութիւնք՝ են միայն զեկուցիչք և յայտարարք նոցին առանց երևեցուցանելոյ. վն՝ այս զգայութին կարևորագոյն է քան զամենեսին, որում այլք սատար են և լրացուցիչք իբր ծառայ և արքանեակք նորուն, զորս կառավարէ նա. և առանց սորա՝ ոչ են նոքա ձեռնհաս ոչ պարուն է զուարճացուցանել զմարդ. իսկ սա առանց նց բաւական է 'ի բերկրութիւն և յերջանկութիւն մարդոյ յասոր կեանս. քանզի չիք ինչ քաղցր և զուարճալի իբրև զլոյս, յոր աչք միայն վայելեն.

Զգայութիւն հոտառութեան առաւել նուրբ է քան զճաշակելեացն. մինչ զի հոտառութին՝ ոչ այնչափ որիշ զգայութիւն թուի 'ի ճաշակելեաց, որչափ ազնուագոյն մասն և լրումն նր. քանզի հոտառութին է իբր համառութիւն գոլորշեաց. Այս զգայութիւն է առաջնորդ և իբր փորձաքար ճաշակելեաց. զի զոր կամիմքն ճաշակել, նախ հոտոտելով զննեսցուք զլաւութին՝ և ապա մատիցուք յուտել.

Ճաշակելեացն զգայութի առաւելու քան զշօշափելեացն. ըստ որում ճաշակն կարգեալ է առ լոյծ մարմինս և առ հիւթս ամբարձինդ մարմնոյ 'ի հա-

մասութն. իսկ շօշափումն առ պինդ մարմինս 'ի զգ-
գայութն և եթ։ Զգայարանք ճաշակելեաց թուին առաւել լինել 'ի մարդն, քան յայլ կենդանիս. զի որովհետև փափկութն մարդկային մարմնոյ պահանջէ և սնունդ փափուկ. այս հարկ է և համառութեան նորա լինել սուր և փափուկ. որով կարասցէ ընտրութիւն առնել և որոշել 'ի մէջ վնասակար և օգտակարաց եղելոյն։

Զգայութն լսելեաց է առաւել աննիւթական քան զզգայութի հոտոտելեաց, ճաշակելեաց և շօշափելեաց. զի ոչ է զզգայումն թանձրանիւթ հանգամանաց մարմնոյ, այլ ուղխումն եղանակինց, կմ ուղխումն շարժման։ Աննիւթական սա, զի և եղանակ լսելութեանն լինի նուազ և իբր անզգալի այլայլութք ականջաց, մինչև եթէ չէաք հաւաստեաւ 'ի վերայ հասեալ պաշտաման այսր գործարանաց, յերկբայս լինէաք, թէ որո՛վ իւիք ձեռնհաս իցեմք 'ի լսել։

'Ի մէջ զգայութեանց մարմնոյ՝ թէպէտ ստորինն և առաւել նիւթականն է զգայութիւնն շօշափական. բայց ընդհանրագոյն է քան զայլ զգայութիւնս, իբր հիմն համարեալ նց ամի. քանզի այլ ամ զգայութիք մարմնոյ ոչ այլ ինչ են, եթէ ոչ այլ և այլ կատարելագոյն տեսակք զգայողութն։ Իւրաքանչիւր առանձին զգայութիւնք են յանդամս ինչ մարմնոյ միայն. իսկ շօշափականն կամ զգայող զգայութն ծաւալեալ է ընդ բոլոր մարմինն, քան զի բովանդակ մարմինն պէտս ունի զգայութեան առ 'ի խնդրել զօգ-

տակարան անձին, և զգուշանալ 'ի վնասակարաց։ Եւ զի մարմին մարդոյ է առաւել փափուկ և ազնիւ քան զայլ ամենայն կենդանեաց, և կեանք նր̃ պատուականագոյն և հարկաւոր քան զնոցայն. նմին իրի՝ այս զգայութիւն տեսչութ̃ արարչին է առաւել կատարեալ 'ի մարդն քան յայլ ա̃մ կենդանիս։

# ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ.

| | | |
|---|---|---|
| Տկարութիւն, | Վէրք, | Ջաղջախանք, |
| Ցաւ, | Խոցք, | Ականամետութ̃, |
| Ուռոյց, | Քաղցկեղ, | Ուրկութիւն, |
| Բոր, | Սպի, | Ժանտախտ, |
| Տենդ, | Լերդացաւութ̃, | Ծիւրումն, |
| Ջրգողութիւն, | Վէրնոտութ̃, | Կաթուած, |
| Քնափութիւն, | Մտաթափութ̃, | Գելումն, |
| Ջղացաւութ̃, | Թմբրութիւն, | Գանջութիւն, |
| Գլխացաւութ̃, | Ատամնացաւք, | Հարբուխ, |
| Հազ, | Կերկերումն, | Կշտացաւք, |
| Ընչարգելութ̃, | Դալուկն, | Թանչք, |
| Յօդացաւութ̃, | Խլրդենի, | Որովայնալուծութ̃։ |

# ԲԺՇԿԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դեղ, Երակահատութիւն, Փսխանք,
Մաքրողականք, Գրեխ, Ըմպելիք,
Դեղահատ, Սպեղանի, Օծանելիք։

## ԴԻՊՈՒԱԾՔ ՄԱՐՄՆՈՑ·

Հեծկլտանք, Փռնչիւն, Յօրանջումն, Ծիծաղ,
Հառաչանք, Դողումն, Շառագունութիւն, Լալ։

# ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ·

Աստուած, Աստուածութիւն, Տէր,
Տէրութիւն, Էութիւն, Ստեղծող,
Յիսուս, Քրիստոս, Փրկիչ,
Փրկութիւն, Ազատիչ, Ազատութիւն,
Բարեխօս, Բարեխօսութիւն, Մարդեղութիւն,
Յղութիւն, Ծնունդ, Փորձութիւն,
Այլակերպութիւն, Խաչ, Խաչելութիւն,
Յարութիւն, Համբարձումն, Հոգի Սուրբ,
Սրբիչ, Սրբութիւն, Մխիթարիչ,
Երկինք, Դժոխք, Փառք,
Տանջանք, Աստուածպաշտութիւն, Անաստուածութիւն,
Մեղք, Պարգեւք, Երանութիւն,

## Լուսաբանութիւն։

Աստուած է էակ ինքն ինքեամբ․ յորմէ կախին և յառաջ գան այլք․ և յորում գտանի բովանդակ լրութիւն գոյից իբր յառաջնում աղբեր։ Զգոյ Նորա խոստովանին ամ՝ ազինք երկիրպագանել Նմա․ և ՚ի կարդալ զանուն Նորա ․ և ՚ի պաշտել զնա ծիսօք ինչ, որ պաշտումն կոչի՝ կրօն։

Քս՝ է նոյն ինքն Քս և Ած և Հայր․ որ է անեղ և անարար․ և է արարօղ սկիզբն ամ՝ եղելոց, ըստ ասացելոյն Պօղոսի երանելոյ, թէ՝ * Զի նովաւ հաստատեցաւ ամ՝ որ ինչ յերկինս, և որ ինչ յերկրի․ որ երևելին, և որ ոչն երևելին․ եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամ՝ ինչ նովաւ և ՚ի նոյն հաստատեցաւ։|| Նոյնպս թէ՝ * Զի ՚ի նմա բնակէ ամենայն լրումն Ածութեն մարմնապէս։|| Ըստ այսմ և Կիւրեղ աղեքսանդրացին ասէ, * Բովանդակ Ածութիւնն բնակէ ՚ի Քս յն, որպ հոգի բնակէ ՚ի մարմնի իւրում առանց որոշման և առանց խառնակութե, որ միաւորեալ կակայ է ս և անշփոթ։|| Ըստ այսմ միոյ և Սբ Յովհաննէսն ասէ Աւետարանիչ․ թէ՝ * Ի սկզբանէ էր բանն․ և բանն էր առ Ած․ և Ած էր բանն։ Նա՝ էր ի սկզբանէ առ Ած։* Ամենայն ինչ նովաւ եղև․ և առանց նորա եղև և ոչինչ՝ որ ինչ եղեն։|| Արդ՝ առ ՚ի աներկբայաբար խոստովանել և ցուցանել զԱծութի Քն, և զամենակատար հաստատութի և զգործակցութիւն Նր ընդ Այ Հօր, միով բանիւ նոյն ինքն Յս Քս եզրակացուցանէ, յա–

սէրն՝ *Ես և Հայր իմ՝ մի եմք։|| Եւ դարձեալ. *Ասէ ցնա Փիլիպպոս. տէր՝ ցոյց մեզ զՀայր՝ և շատ է մեզ. *Ասէ ցնա յն. այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ոչ ծանեար զիս Փիլիպպէ. որ ետես զիս՝ ետես ըզՀայրն. և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց մեզ զՀայր. *Ո՞չ հաւատաս եթէ ես՝ի Հայր՝ և Հայր յիս է։||

# ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ·

*Գիրք ծննդեան յի քի որդւոյ դաւթի որդւոյ աբրահամու։ *Աբրահամ ծնաւ զիսահակ։ Իսահակ ծնաւ զյակոբ։ Յակոբ ծնաւ զյուդա, և զեղբարս նր։ *Յուդա ծնաւ զփարէս և զզարա ՚ի Թամարայ։ Փարէս ծնաւ զեզրոմն։ Եզրոմն ծնաւ զարամ։ *Արամ ծնաւ զամինադաբ։ Ամինադաբ ծնաւ զնաասոմն։ *Նաասոմն ծնաւ զսաղմոմն։ *Սաղմոմն ծնաւ զբոոս ՚ի Հռեքաբայ։ Բոոս ծնաւ զովբեդ ՚ի Հռութայ։ Ովբեդ ծնաւ զյեսսէ։ Յեսսէ ծնաւ զդաւիթ արքայ։ *Դաւիթ ծնաւ զսողոմոն ՚ի կնոջէն ուրիայ։ *Սողոմոն ծնաւ զռոբովամ։ Ռոբովամ ծնաւ զաբիա։ Աբիա ծնաւ զասափ։ *Ասափ ծնաւ զյովսափատ։ Յովսափատ ծնաւ զյովրամ։ Յովրամ ծնաւ զոզիա։ *Ոզիա ծնաւ զյովաթամ։ Յովաթամ ծնաւ զաքազ Աքազ ծնաւ զեզեկիա։ *Եզեկիա ծնաւ զմանասէ։ Մանասէ ծնաւ զամոն։ Ամոն ծնաւ զյովսիա։ *Յովսիա ծնաւ զյեքոնիա, և զեղբարս նր առ գե-

րութեամբն բաբելացւոց։ * Յետ գերութեանն բաբելացւոց ծնաւ Յեքոնիա զՍաղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ։ * Զօրաբաբէլ ծնաւ զԱբիուդ։ Աբիուդ ծնաւ զԵղիակիմ. Եղիակիմ ծնաւ զԱզովր։ * Ազովր ծնաւ զՍադովկ. Սադովկ ծնաւ զԱքին։ Աքին ծնաւ զԵղիուդ. * Եղիուդ ծնաւ զԵղէազար։ Եղէազար ծնաւ զՄատթան։ Մատթան ծնաւ զՅակովբ։ * Յակովբ ծնաւ զՅովսէփ զայրն Մարեմայ՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս. յորմէ ծնաւ Յս, որ անուանեցաւ Քս։ * Արդ՝ ամ ազգքն յԱբրահամէ մինչև ՚ի Դաւիթ՝ ազգք չորեքտասանք. Եւ ՚ի Դաւթէ մինչև ՚ի գերութիւն բաբելացւոց՝ ազգք չորեքտասանք. Եւ ՚ի գերութենէն բաբելացւոց մինչև ՚ի Քս՝ ազգք չորեքտասանք։ * Եւ յի քի ծնունդն՝ էր այսպէս. Խօսեալ զմայր նր Մարիամ Յովսեփու, մինչչև եկեալ առ միմեանս. գտաւ յղացեալ ՚ի Հոգւոյն սրբոյ։ * Եւ Յովսէփ այրն նր, քանզի արդար էր՝ և ոչ կամէր առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա։ * Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա Հրեշտակ տն ՚ի տեսլեան՝ երևեցաւ նմա՝ և ասէ. Յովսէփ որդի Դաւթի, մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո. քանզի որ ՚ի նմայն ծնեալ է՝ ՚ի Հոգւոյն սրբոյ է։ * Ծնցի որդի, և կոչեսցես զանուն նր Յս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց։ * Այլ այս ամ եղև, զի լցցի որ ասացաւն ՚ի տնէ ՚ի ձեռն եսայայ մարգարէի։ * Ահա կոյսն յղասցի՝ և ծնցի որդի, և կոչեսցեն զանուն նր Էմմանուէլ. որ թարգմանի՝ ընդ մեզ ած։ * Եւ

զարթուցեալ յովսէփ ՚ի քնոյ անտի, արար ոպ հրա-
մայեաց նմա հրեշտակն տն, և առ յինքն զկինն իւր։
* և ոչ գիտէր զնա, մինչև ծնաւ զորդին իւր զանդ-
րանիկ, և կոչեաց զանունն նր յս։

Եօթնեակ պարգևք սբ հոգւոյն.

Իմաստութիւն, Իմացութիւն, Խորհուրդ,
Արիութիւն, Գիտութիւն, Բարեպաշտութիւն,
և Երկիւղ տն։

Երկոտասան պտուղք սբ հոգւոյն։

Ողորմութիւն, Ցնծութիւն, Խաղաղութիւն,
Համբերութիւն, Բարեգթութիւն, Բարութիւն,
Երկայնմտութիւն, Քաղցրութիւն, Հաւատ,
Համեստութիւն, Ժուժկալութիւն, Ողջախոհութիւն,

Եօթնեակ շնորհք սբ հոգւոյն։

Հոգի այ, Հոգի իմաստութեան, Հոգի հանճարոյ,
Հոգի խորհրդոյ, Հոգի զօրութեան, Հոգի գիտութեան,
և Հոգի ածպաշտութեան։

# ՁԻՐՔ ՄԱՐՄՆՈՑ ԱՐԴԱՐՈՑ

Պարգեւ, ձիրք կամ օժիտ մարմնոյ արդարոյ 'ի յարութեան՝ են չորք. Առաջին՝ անկրելութիւն, կամ անկրականութիւն, կամ լաւ եւս՝ անցաւութիւն նշանակեալ 'ի բանն. Սէրմոնի ապաթիոնաբեամբ, և յունէ ապաթեայ ապաթիոնաբեան. Եւ է անցաւութիւնն՝ կատարելութիւն զեղեալ 'ի յարուցեալ մարմինն՝ արտաքսիչ ամենայն ապականագործ կրից, ըստ պատմելումն, թէ՝ * Ոչ քաղցիցեն, և ոչ ծարաւիցեն, և ո՛չ ոք մեղիցէ նոցա, ո՛չ արեգակն՝ և ո՛չ տօթ. || Երկրորդ է պայծառութիւնն՝ նշանակեալ 'ի բանն, Սէրմոնի ոնուրգուբեամբ, և յունէ ֆոս:ֆ. Եւ է կատարելութիւն լուսաւորիչ բոլանդակ մարմնոյն, մանաւանդ 'ի դէմսն, և յայլ երեւելի անդամս շարժարեալս վ̄քն, ըստ տէրունական խոստմանն. * Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան երկնից. || Երրորդ պարգեւ կամ օժիտ է թեթեւութիւն կամ երագութիւն՝ նշանակեալ. 'ի բանն, Սէրմոնի ֆիրոկուբեամբ, և յունէ ոփրոսուբեամբ. Եւ է այս կատարելութիւն զօրացուցիչ մարմնոյ յամենայն ներգործութիւս և 'ի շարժմունս իւր. որով յական թօթափել կատարէ զգործ ինչ, կամ անցանէ տեղւոջէ 'ի տեղի, վերանալով յօդս, և իջանել 'ի բարձանց անաշխատ և անվտանգ, ըստ ասացելոյն. * Պայծառասցին, և իբրեւ կայծակն ընդ եղէգն ընթասցին. || Այսմ յարայոյց եւս վերաբերիլ Ամբակումայ մարգարէի 'ի Հրեշտակէ 'ի բաբելոն.

և Տեառն մերոյ գնալն 'ի վի՛ր ջրոյ։ Զորորդ օձ իտ
կամ պարգև. է նորբութի՛ կամ անօսրութի՛ նշանակեալ
'ի բանս, Սերմանի մարմին շնչաւոր, և յառնէ մարմին հոգևոր։
Եւ է այս կատարելութի՛ որով մարմինն յարուցեալ
բովանդակ ներքոյ անկանի հանձոյից հոգւոյն՝ ազատ
'ի մարմնական պիտոյից. որով արդարքն ական ըստ մարմնոյ
ասին հաւասար հրեշտակաց։

# ՀՈԳՒՔ.

Հրեշտակք, Դևք, Ցնորք, Հոգիք։

Լուսաբանութիւն։

Ցորոշումն կարգաց հրեշտակաց՝ այլաբանեն վար-
դապետք. Թէպէտ ոչ իմանայ ըստ դասակար-
գութեանց կոչման, այլ տուեալ անուն զքերովբէս,
յորս նստեալ Այ սովոր են ասել գիրք. իսկ սերովբէանոն
և զայլսն իմանայ զհրեշտակս՝ որոց յանձն են իմաստք
տէրութեանց, պետութեանց, և իշխանութեանց. որպ
մեքայէլ իշխան հրէից, և այլքն՝ յունաց, կամ պար-
սից, կամ քաղդէացւոց։ Բայց այլ վարդապետք հա-
մարին թուել զգլխաւոր դասս հրեշտակաց. ընդ ո-
րովք և ս առաւել վայրագոյն հոգիքն իմանին լինել
արարածք քի։ Այլ թէ ուստի՞ առեալ իցեն այսպիսի
անուանակոչութիւնք հրեշտակաց, բազում ինչ խօ-
սին վարդապետք և ճնաբանք. հաւանական իմաստ
ենչ առեալ 'ի գրոց, և կամ յաւանդութենէ։ Կաքի

հաւանելի թուի թէ եբրայեցիք այսոքիւք անուանբք որոշէյին զհրեշտակս՝ ըստ նմանութե երկրաւոր գլխաւորութեանց, յորս են զանազան աստիճանք պատուոյ և պաշտամանց։ Այսպէս տեսանեմք ՚ի գիրս Տոբիթայ. եօթն հրեշտակս անուանել, որք մատուցանեն զաղօթս սրբոց։ Եւ ահա առեալ է այս ՚ի կարգաց պարսկական թագաւորութեան, յորում կային եօթն խորհրդականք՝ աթոռակիցք արքային յորոյ ձեռն վարէր թագաւորական հրամանատարութիւն։

Ցնորք, տեսիլ առ աչօք, կամ զարհուրելի երեւոյթք, են այնք՝ զորս տեսանեն մարդիկք ՚ի քուն գիշերոյ. կամ յարթնութե՝ արտաքսեալ կախարդաց, կամ ներգործութեք դիւաց. և կամ յաղդեցութենէ ժանտ սև ամաղձից։

# ԻՄԱՑՈՒԹԻՒՆ

| | | |
|---|---|---|
| Միտք, | Բան, | Գիտութիւն, |
| Խիղճ մտաց, | Խորհուրդ, | Հանճար, |
| Յիմարութիւն, | Արհեստ, | Հնարք, |
| Փորձ, | Հաւատք, | Կարծիք, |
| Վրիպակ, | Կասկած, | Տարակոյս, |
| Զարմացումն, | Կամք, | Հրաման. |

Լուսաբանութիւն.

Խիղճն մտաց՝ ոչ է բնական ինչ զօրութի մտաց, այլ դատաւոր խթան. ինչ ՚ի յորդոր բարւոյ, և սանձայ-

կու չարեաց 'ի միտս մեր։ որում յայտյանդիման երեւի թէ ճանաչումն բարւոյ եւ չարի, միանգամայն եւ պարտաւոր լինելն մեր 'ի գիտելս առ բարին, յաստուծուստ տպաւորեալ է 'ի մեզ. վն՞յ եթէ զչարն արասցուք, յանցաւոր լինիմք առ ած՝ եւ արժանի դատանիմք առ 'ի նմանէ պատուհասի. իսկ եթէ զբարին՝ հաճոյանամք նմա եւ արժանի լինիմք առ 'ի նմանէ վարձուց։ Խիղճն մտաց չարչարէ զմարդ 'ի գործելն զչար, եւ ուրախ առնէ 'ի գործելն զբարի. արդ՝ զայս վիճակ տանջանաց կամ զուրախութիւն, ոչ է 'ի մեր կամս իշխանութե՞ն չիմանալ կամ արտաքսել 'ի մէնջ. զի անհնար է ումեք զերծանիլ 'ի խայթէ անտի մտացն խղճի, մինչեւ ճշմարիտ ապաշխարանօք ոչ մաքրեսցի հոգին 'ի գործեալ չարութենէն։

# ՆԻՒԹՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

## ԴԱՍ. Ա.

| | | | |
|---|---|---|---|
| Կրօն, | Կաթուղիկոս, | Պատրիարգ, | Հայրապետ |
| Եպիսկոպոս, | Վարդապետ, | Երէց, | Քահանայ |
| Սարկաւագ, | Քարոզիչ, | Դպիր, | Ածաշունչ |
| Սբ գիրք, | Աւետարան, | Շարական, | Տաղարան |
| Տօնացոյց, | Ժամ, | Աղօթք, | Կարգ, |
| Մաղթանք, | Քարոզ, | Պատարագ, | Մեղեդի |
| Սաղմոս, | Օրհներգութիւն, | Դաս, | Երգիչ։ |

Լուսաբանութիւն.

Կրօնն 'ի մեզ ածպաշտութի կոչի. որ եւ սահմանի

աւածքնութի բարոյական. որով պարտուպատշաճ պաշտօն ընծայի ա̄յ՝ իբրև առաջին սկզբան, որովհետև ոչինչ օգուտ գործէ լոկ գիտել և ճանաչել զա̄ծ առանց պաշտամանց. ոպ̄ առնէին հին փիլիսոփայք. այլ հարկ է պաշտել զնա թէ ներքին ա̄ծպաշտութ̄բ՝ հոգւոյն և թէ կրօնիւ, ց̄՝ արտաքին երկրպագութ̄բ համ̄ծխօք՝ զարժանաւոր մեծարանս ընծայելով նմին ՚ի ձեռն պատարագաց և պաշտամանց.

Եպիսկոպոս, դիտապետ կամ՛այցելու, նշանակէ զպաշտօնեայն և զտեղակալն ա̄յ, որ մատակարարէ զբան աւետարանին, և զա̄ծային խորհուրդս առ մարդիկ.

Քահանայն՝ նշանակէ զտէրն մեր Յս̄ Քս̄, որ եղև ճշմարիտ քահանայ յաւիտեան ը̄ կարգին Մելքիսեդեկի, և զինքն՚ի ներքոյ տեսակաց հացի և գինւոյ՝ հօր ա̄յ պատարագեաց. Քահանայագործութի̄ն է փոխարկումն գինւոյն և հացին՝ յարիւն և ՚ի մարմին քս̄ի.

Քարոզիչք, որք են առաջնորդք և վարդապետք, նա՝ են իբրև բուրանոյք անուշութեան հաւատոյ և ա̄ծպաշտութեան. զի յինքեանս կրելով զերկնային գիտութի̄ն իբր և իւղ անուշահոտ, կամ խունկ ընտիր ՚ի բանալ բերանոյն՝ ծաւալեն զանուշահոտութի̄ն առ ամենայն լսողս. Պարտ է Քարոզողին առաւել սիրել զգիտութ̄ն խօսիլն՝ քան զգեղեցիկ շարադրանելն, զի ասէ Օգոստինոս. բարի մտացն է առաւել սիրել զճշմարիտն՝ քան զճոռոմաբանս. զի զի՞նչ օգուտ է ունելն զբանալի ոսկի՝ եթէ ոչ կարէ բանալ զոր ինչ կամիմք. և զի՞նչ պակասութի̄ ունի փայ-

տեղէնն՝ եթէ կար՚ցէ բանալ զփակեալն. Ո՞չ ասէ Սենեքա, բանն որ ուսուցանէ զճշմարտութի̃, պարտի լինիլ պարզ. զի մի՛ զարդարեալ արտաքուստ արգելցէ զճշմարտութիւնն որ ՚ի ներքս.

Աւետարան, ՟Ա բառդ՝ յայտարարութ̃ բարեաց նշանակէ. Է գիրքն՝ յորում պատմի քարոզութ̃ փրկութեն՛ն ՚ի քէ. ՟Է որոշիմանի հրատարակութ̃ բովանդակ նոր օրինաց.

### ԳՐԻՉՔ ԱՒԵՏԱՐԱՆԻ՝ ԵՆ

Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս.

### Լուսաբանութիւն.

Մատթէոս՝ որ Թարգմանի, երգ կենաց, էր մի յերկոտասան աշակերտացն քի. գրեաց զաւետարանս իւր յերուսաղէմ քաղաքի ՚ի լեզու եբրայեցի, զկնի 8 ամի համբառնալոյ փրկչին, ՚ի խնդրոյ եկեղեցւոյն երուսաղէմի. Ունի գլուխս 355. Վկայութիս 32. Տունս 2600.

Մարկոս՝ որ Թարգմանի, բարձր պատուար, էր մի յերկոտասան աշակերտացն քի. Գրեաց սա զաւետարանս իւր՝ յաղեքսանդրաքաղաքի ՚ի լեզու եգիպտացի, զկնի 15 ամի համբառնալոյ փրկչին. Ունի գլուխս 233. Վկայութիւնս 15. Տունս 1600.

Ղուկաս՝ որ Թարգմանի յարութիւն, էր մի յերկոտասան աշակերտացն քի. Էր սա արուեստիւ բժիշկ. Գրեաց սա զաւետարանս իւր յանտիոք քաղաքի ՚ի լեզու ասորի՝ զկնի 17 ամի համբառնալոյ փրկչին. Ունի գլուխս 342. Վկայութիս 17. Տունս 2800.

Յովհաննէս՝ որ Թարգմանի, Հնազանդութիւն, էր մի յերկոտասան աշակերտացն Քի։ Սա՝ զկնի 53 ամի համբառնալոյ Փրկչին գրեաց զաւետարանս իւր յԵփեսոս քաղաքի, ՚ի խնդրելոյ եկեղեցւոյն ասիայ՝ ՚ի լեզու յոյն։ Ունի գլուխս 232։ Վկայութիւնս 15։ Տունս 1800։

Աղօթք են զրուցատրութի ընդ Այ. և նմա միայնոյ պարտին յայտնի լինել Այ հաճելի, և հաւանելի. զայնպիսի իրս հայցել, զորս Ած ճանաչէ լինել մեզ յօգուտ. Թէպէտև խնդրողին անյայտ են բազում անգամ։

## ԱՂՕԹՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ

Հայր մեր որ յերկինս. սբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց. և մի տանիր զմեզ ՚ի փորձութի. այլ փրկեա զմեզ ՚ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն։

## ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Ա. Եւ արդ՝ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս ՚ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութբ, զբարեգործիդ ողորմածութեան՝ զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

Ք․ Աղաչեմ զքեզ միայն խնամակալ մարդասէր, զը-
թած, կեցուցիչ. Տըրօղ, ամենեցուն պաշտպան. մի ու-
նայնասցի վաստակն աշխատութե փրկականդ կրից մար-
դացելոյդ վասն իմոյ. մի սուտ եղիցի քրտանցն կաթ-
ուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մանկութենէ աւուր
գիշերին. մի լիցի սոսնեբասեալ լուսոյդ երախտիս,
զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումս ինձ
պարգևեցեր. մի ջնջեսցին շնորհացդ աւետիս, զոր
կողից քոյ կայլակք նորոգեցին. մի անշահ եղիցին կը-
րիցդ պտուղք, զոր կարօտութեան իմում մատուցեր.
Մի պարծեսցի բանսարկուն վանեալ՝ զքո ստացեալս
իւրայունսն է. ահա յաղթեսցես կամօք քո՝ ըղձից
չարին. վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն.
կրկին պարտեսցի խայտառակեալն։ Մի անխայեր
զազատաբարդ քո բան, որ զստեղծեալս քո քեզ ընծայ-
եալ՝ վերստին առ քեզ դարձուցանել. զանձառն արա-
րեր բարերարութի՝ յանակնկալ ժամուն յուսահա-
տութե, յորժամ բնաւ իսկ կորեալ և օտարացեալ
էր կենդանութենն շարժողութի. մեռար անմահդ՝
և զմահացեալս նորոգեցեր. եթէ զկանոն համաձև-
ութեան օրինին փոխեցեր, արդ զդիւրինն և զհեշ-
տականն և զևս հնարաւորն մի արգելցես՝ սկզբնա-
ձիր ողորմածութե բարեգութ օրհնեալ և երկայնա-
միտ թագաւոր. Ազդեա բանիւդ ամենազօրդ, որ
զգոյութիւն լուսոյն ստեղծեր 'ի նախնումն աւուր
և վաղվաղակի փոփոխեալ գոյից 'ի լաւ անդր. և
փոխանակ զի ես ոչ խնդրեցի հեռանալ լուսոյդ, դու
դեղցես ինձ յայց՝ ճառագայթ ծագմամբ հայրենի կեր-

պիտ, և կոչեցայց առաջի քո ծառայս վնասապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ ՚ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ ՚ի զպարտսն հատուցանել, ահա շնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լոյսդ ՚ի խաւարի սրտիս վհատելոյ. Արդեւ և կնքեա զըն-թացմունս ելից, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ ՚ի յուշոյս իմ տեսութե. պահեա ինձ զշնորհ ամե-նապայծառ գանձուցդ մնայականաց. որով պատուա-կան գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ ՚ի քէն՝ անսահման բարի։

Է. Ահա ողորմեա ինձ՝ գթած, աղաչեմ զքեզ ողոր-մեա ինձ՝ Հզօր, կրկին ողորմեա. Մի փոխարկեր երկունս ցաւոյ՝ ըստ չարեաց իմոց բարիդ ամենեւին. մի բառնար ՚ի վտանգելոյս՝ զառ ՚ի քէն պարգև-եալդ շնորհ. մի կապտեր զփշրումն ամենօրհնեալդ հոգւոյ. մի լուծաներ զկնքեալ զկնիք արքունական պատկերիդ։ Մի յայտնեսցին փուշք մեղանացս ՚ի սրբութիւնս մտացս. մի խզեր զկապ միութեան՝ զընդ քեզ սիրոյն պնդութեան. մի մերժեսցես զար-ուեստ զօրութե՛ լեզուոյս յարմարութե. մի պակա-սեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ ՚ի զլուսոյդ մա-տունս բաշխել։ Մի զրեր ՚ի դպրութեան կենաց մա-տենից՝ զիմ անուն ապարտիս. մի պահեր. մի ինձ հա-մարիր. մի յիշեցուցաներ. մի ամաչեցուցաներ. մի նա-խատեր. մի ոսն հարկաներ. մի արձակուցաներ ըղ-մեղկութեան. մի ամբարեր զկորստեանցն. մի իբր բաս-գտեալ իմն ամբաստաներ. Մի յարուսցես ընդ իս ըզ-ծառն անիծից. մի արձակեր ՚ի յիս զսաղարթ վնա-

սուգս. մի՛ ընծիւղեր զնաղէկ մեղայս. մի՛ բերցես ըզ աւազ զնաման պալատուցս. մի՛ արտաքսեր զէութի պղտորս։ Մի՛ թողուցես ՚ի Ճիւղս երկրաստեղծ մատանցդ՝ զգիւտս գործոցս. մի՛ մատուսցես բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւն իմ յիշատակել. մի՛ մատնեսցես իմոյս կամաց զաւանդս հոգւոյս՝ վարել ՚ի գերութիւն. մի՛ աստէն զիս վարձաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես. մի՛ նուաղութեան այսր անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր. մի՛ ՚ի սակաւուց այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառսն շահեր. մի՛ ընդ հոլանիս վշտաց հեշտութեան՝ զանախտական զկեանսդ գրաւեր. մի՛ ընդ ստուերի այսր մթութեան՝ զանճառելիդ լոյս փոխանակեր. մի՛ զերասանակ մտացս լքցես՝ ըստ արտուղի հետս հետեւել. մի՛ զկամուրջ կենցաղոյս գրեսցես՝ ինձ հանգստեան բնակութի. մի՛ զհովիտ հանճարոյս ստուերական պահեր՝ ՚ի հանդերձեալսն ինձ հրապարակել։ Եթէ ամբարես զառանց հանճարոյ գործոյս իմ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ շտեմարանես ՚ի սրտի, աստանօրն կիզեալ անբոյ այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիւնս առանց յանդիման քեզ լինելոյ՝ իսպառ հալեցայց. եթէ տնկակից ինձ թողցես զմեղսն, ՚ի նոսին վատնեալ մաշեցայց.

Դ. Ակնարկեա՛ մի՛շտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա՛ գթած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութի բնութեանս մարմնեղէն յարկի

անգամոյս, յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղաց մերժեալ խապառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես՝ ամենակեցոյց Թագաւոր անմահ տէր յիսուս քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն.

## ԱՂՕԹՔ ՍՐԲՈՑՆ ՆԵՐՍԻՍԻ

1. Հաւատով խոստովանիմ, եւ երկիրպագանեմ քեզ. Հայր՝ եւ Որդի՝ եւ Սուրբ Հոգի. անեղ եւ անմահ բնութիւն. արարիչ հրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. Ողորմեա քո արարածոցս.

2. Հաւատով խոստովանիմ եւ երկիրպագանեմ քեզ անբաժանելի Լոյս, միասնական Սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն. արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան. եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս. եւ ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ: Եւ ողորմեա՛ ինձ բազմամեղիս.

3. Հա՛յր երկնաւոր՝ Աստուած ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդին քո սիրելի՝ ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկա՛լ զիս որպէս զանառակ որդին. եւ զգեցո՛ ինձ զպատմուճանն պառաջին, զոր մերկացայ մեղօք: Եւ ողորմեա՛ քո արարածոցս՝ եւ ինձ բազմամեղիս.

4. Որդի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ խոնարհ իջեար 'ի Հայրական ծոցոյ, և առեր մարմին 'ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան, խաչեցար՝ և թաղեցար՝ և յարեար 'ի մեռելոց, և համբարձար առ Հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա զիս որպէս զաւազակն յորժամ գաս արքայութեամբ քով: Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

5. Հոգի Աստուծոյ՝ Աստուած ճշմարիտ, որ իջեր 'ի Յորդանան և 'ի վերնատունն. և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ Աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին Աստուածային հրով քով, որպէս հրեղէն լեզուօք զառաքեալսն: Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

6. Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուան քո սրբոյ: Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

7. Տեսող ամենայնի, մեղայ քեզ խորհրդով, բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց: Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

8. Քննող գաղտնեաց, մեղայ քեզ կամաւ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի 'ի ծննդենէ Աւազանին մինչև յայսօր մեղուցեալ եմ առաջի Աստուածութեանդ քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս: Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս:

9· Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զ'երկիւղ քո սուրբ՝ ո՛չ ևս հայել արատ. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ իմոյ՝ ո՛չ խօսել զստութիւն. և սրտի իմոյ՝ ո՛չ խորհել զչարութիւն. և ձեռաց իմոց՝ ո՛չ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան. այլ ուղղեա զշարժմունս սոցա լինել ըստ պատուիրանաց քոց յամենայնի. Եւ ողորմեա քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս.

10· Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քո՝ զոր արկեր յերկիր, բորբոքեա յանձն իմ. զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ. և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց. և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ. և վառեսցէ ըզլոյս գիտութեան քո 'ի սրտի իմում. Եւ ողորմեա քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս.

11· Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ զիմաստութիւն՝ զբարիս խորհել և խօսել և գործել առաջի քո յամենայն ժամ. 'ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոց փրկեա զիս. Եւ ողորմեա քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս.

12· Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ. այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. Եւ ողորմեա քո արարածոցս՝ և ինձ բազմամեղիս.

13· Արքայ երկնաւոր, տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց քոց. և զօրացո զսիրտ իմ ատել զմեղս, և սիրել զքեզ միայն, և առնել զկամս

քո։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

14. Խնամող արարածոց, պահեա՛ նշանաւ խաչի քո զհոգի և զմարմին իմ ՚ի պատրանաց մեղաց, ՚ի փորձութենէ դիւաց, և ՚ի մարդկանց անիրաւաց, և յամենայն վտանգից հոգւոյ և մարմնոյ։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

15. Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի ՚ի վերայ իմ՝ ՚ի տուէ և ՚ի գիշերի՝ ՚ի նստել ՚ի տան՝ և ՚ի գնալ ՚ի ճանապարհ, ՚ի ննջել և ՚ի յառնել, զի մի երբեք սասանեցայց։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

16. Աստուած իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս զամենայն արարածս ողորմութեամբ քո, քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա՛ և պատրաստեա՛ զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

17. Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս ՚ի չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովորութիւն. և բևեռեա՛ ՚ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և զսէր արքայութեան. զի զղջացայց ՚ի մեղաց, և գործեցից զարդարութիւն։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

18. Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ ՚ի սրտէ իմ զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս։ Եւ ողորմեա՛ քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

19. Պարգևիչ ողորմութեան, պարգևեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով, և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

20. Թագաւոր Տէր, հրեշտակի բարւոյ յանձն արասջիր զիս՝ քաղցրութեամբ աւանդել զհոգի իմ, և անխռով անցուցանել ընդ չարութիւն այսոյն՝ որ են ՚ի ներքոյ երկնից. Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

21. Լոյս ճշմարիտ Քրիստոս, արժանաւորեա զհոգի իմ ուրախութեամբ տեսանել զլոյս փառաց քոց ՚ի կոչման աւուրն. և հանգչել յուսով բարեաց յօթեվանս արդարոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

22. Դատաւոր արդար, յորժամ գաս փառօք Հօր՝ դատել զկենդանիս և զմեռեալս, մի մտաներ ՚ի դատաստան ընդ ծառայի քում. այլ փրկեա զիս ՚ի յաւիտենական հրոյն. և լսելի արա ինձ զերանաւէտ կոչումն արդարոց յերկնից արքայութիւնդ. Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

23. Ամենողորմ Տէր, ողորմեա ամենայն հաւատացելոց ՚ի քեզ՝ իմոց և օտարաց, ծանօթից և անծանօթից, կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութիւն՝ որ առ իս յանցանաց. և դարձո զնոսա ՚ի չարեացն՝ զոր ունին վասն իմ. զի ողորմութեան քում արժանի եղիցին. Եւ ողորմեա քո արարածոց՝ և ինձ բազմամեղիս։

24. Փառաւորեա՛լ Տէր, ընկա՛լ զաղաչանս ծառա-յից քոց. և կատարեա՛ ՚ի բարի զխնդրուածս իմ՝ բա-րեխօսութեամբ սրբուհւոյ Աստուածածնին, և Յով-հաննու Մկրտչին, և սրբոյն Ստեփաննոսի Նախա-վկային, և սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին, և սրբոց Առաքելոց, և Մարգարէից, և Վարդա-պետաց, և Մարտիրոսաց, և սրբոց Հայրապետաց, և Ճգնաւորաց, և Կուսանաց. և ամենայն Սրբոց քոց երկնաւորաց և երկրաւորաց։

Եւ քեզ փառք և երկրպագութիւն անբաժանելի սուրբ Երրորդութեանդ՝ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

## ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԱԹԱՆԱՍԻ։

Լո՛ւր աղաչանաց ամերոց ո՛վ մենասրբուհի կոյս և յիշեա՛ զմեզ. Տո՛ւր մեզ պարգևս ՚ի քումմէ առա-տութենէ ՚ի լիութենէ քոյ շնորհաց, որով լցար անչա-փապէս։ Վասն այն հրեշտակապետն ողջունեաց ըզ-քեզ՝ կոչեաց զքեզ լի շնորհօք. և ա̄մ ազգք երանեն քեզ. Ամենայն քահանայապետութիւնք երկնից օրհնեն զքեզ. Ը̄ որս և մեք երկրաւոր քահանայապետութիւնքս աղաղակեմք առ քեզ. ուրա՛խ լեր բերկրեալդ լի շնոր-հօք, տէր ընդ քեզ. աղաչեմ՛ զ̄ք մեր մայր տիրուհի և Թագուհի մեր։

# ԱՂՕԹՔ ՍՐԲՈՅՆ ԵՓՐԵՄԻ.

Ո՜վ անարատ և ամբիծ կոյս Մարիամ՝ մայր այ՝ թագուհի երկնի և երկրի, և ամենագութ տիրուհի մեր, դու՝ ՚ի դասս սրբց վեհափառ, նահապետաց յոյս, սրբց ցնծութիւն։ Քեւ հաշտեցաք ընդ այ մերում։ Դու բարեխօս մեղաւորաց, անքոյթ նաւահանգիստ ալէկոծելոց, մխիթարութի աշխարհի, ազատիչ գերելոց, ցնծութիւն հիւանդաց, հանգիստ վշտացելոց, ապաւէն և փրկութի ամենեցուն։ Ո՜վ մեծազօր տիրուհի մայրդ այ՝ պատսպարեա՛ զմեզ ընդ հովանեաւ թեւոց քումոց գթութե, և ողորմեա՛ մեզ, զի ոչ գոյ մեր այլ յոյս ապաւինի՝ բայց ՚ի քէն կոյս ամենամաքուր. քեզ տուաք և քեզ ընծայեցաք ՚ի ծառայութի. անուն ծառայից քոց կոչեցեալ է ՚ի վերայ մեր. արա մի թոյլ տայցես արուսեկին քարշել զմեզ զկնի ՚ի դժոխս։ Զի կամք պատսպարեալ ընդ հովանեաւ պաշտպանութե քո, վյ առ քեզ միայն դիմեմք, և աղաչեմք ընկեր բարեխօս առ որդին քո, զի մի բարկացեալ վն մեղաց մերոց՝ մատնեսցէ զմեզ ՚ի ձեռս թշնամւոյն մերոյ սատանայի։ Ո՜վ կոյս լի շնորհօք լուսաւորեա՛ զմիտս իմ, և արծարծեա՛ զսիրտ իմ յերգս գովեստից քոց, և մխիթարեա՛ ՚ի հրեշտակական երգ՝ քեզ հաճոյական։ Ողջոյն քեզ խաղաղութիւնդ ցնծութիւնդ փրկութիւնդ և մխիթարութիւնդ տիեզերաց։ Ողջոյն, քեզ գերահրաշ պարծանք աշխարհի։ Դրախտ փափկութե, անքոյթ նաւահանգիստ վտանգելոց, աղբիւր շնորհաց, միջնորդ այ և մարդկան։

Կարգն նշանակէ զարարողութիւնս ամենայն պաշտա-մանց. Եւ մերթ՝ նշանակէ զկարգաւորութիւն. զաստիճան. զկրօն.

## ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ.

Ո՛վ Մայր գթութեան՝ կոյս ամենօրհնեալդ, ահաւասիկ կամաւ առ ոտս քո խոնարհեալ եմ ապաշխարող հնազան-դօրս, որ խոնարհ ապերախտութեամբ առ շնորհսն իմ, զոր ընկալայ քոյին միջնորդութեամբ՝ ի Աստուածորդւոյ դառնամ քեզ և իմ իմոյ. Բայց գիտեմ տիրուհի՛ թէ թշուա-ռութիւն իմ ո՛չ ՚ի բաց բառնայ յինէն զյոյս ապաւի-նութեան ՚ի քեզ, այլ և ևս առաւելու. զի գիտեմ, թէ թշուառութիւնք իմ առաւել ևս աղերսանօքն ՚ի քեզ զկարեկցութիւն առնուն. Արդ՝ ծանո՛ ինձ ո՛վ կոյս Մա-րիամ, թէ իցես առ իս լի տառապանօք և ողոր-մութեամբ որպէս առ նոսա ամենեսին, որք կարդան առ քեզ. Այլ շատ է ինձ զի հաճեսցիս հայել յիս, և կա-րեկից լինել ինձ, եթէ սիրտ քո վշտակից լիցի ինձ, չէ հնար քեզ թողուլ զիս ՚ի պաշտպանութենէ քումմէ, և եթէ դու պաշտպան լիցիս ինձ, ուստի՞ ունիմ ես երկնչել յո՛չ ումեքէ բնաւ, ո՛չ ՚ի մեղաց իմոց. վա զի չէ ինչ քեզ դժուարին բուժել զիս ՚ի վիրաց մեղաց իմոց. ո՛չ ՚ի դիւաց, վա զի զօրութիւն քո ա-ռաւել է քան զնոցայն. և ո՛չ յորդւոյ քումմէ, որ թէպէտ ունի իրաւունս զայրանալոյ ընդ իս՝ բայց ընդ աղերսարկելն քո, ՚ի հաշտութիւն բերի. Այլ երկնչիմ միայն, զի մի՛ ես ՚ի փորձութիւս իմ անփոյթ եղէց յաղաչելն

առնել զիս քեզ, և այնպէս 'ի կորուստ մատնիցիմ։ Բայց ահա զայն զայս խոստանամ այսօր առնել, այս է՝ զինել միշտ առ քեզ· վ՟յ և դու նպաստամատոյց լեր ինձ 'ի կատար հասուցանել զայն։ Հայեցայ առաջեմ զի այժմ է ժամ բարեպատեհ լինել զփափագ ցանկութե՟ քո, սփոփելով զիս զողորմելիս։ Ո՞վ մայր ա՟յ՝ արդարև մեծ է ապաւինութի՟ իմ 'ի քեզ· զի 'ի քէն ակն ունիմ շնորհաց զգթութե՟ մերոյս, 'ի քէն յուսամ ընդունել զզօրութի՟ չանկանելոյ միւսանգամ· զի եթէ հիւանդ եմ, դու կարող ես ապաքինել զիս ո՟լ բժիշկ երկնային· եթէ մեղք իմ տկարացուցանեն զիս, օգնութի՟ քո զօրացուսցէ զիս· զի ես բոլորովին վստահ եմ 'ի քեզ, վ՟զ զի դու յամե՟ կարող ես առաջի ա՟յ։

## Լուսաբանութիւն.

Հասարակաց կարծիք է ըստ Եւսեբիոսեան տարեգրութեան, և ըստ Նիկեփորոսի՝ թէ սրբուհի Կոյսն եկաց յետ համբարձմանն Ք՟ի զամս 14 ըստ յայտնութե՟ն՝ զոր յիշէ առաքեալն Պօղոս· և վերափոխիլն որա եղև 'ի ժամանակս կղոդեայ կայսեր յամի տեառն 48· գոլով նա 63 ամաց։ Զի երից ամաց էր նա՝ յորժամ ընծայեցաւ 'ի տաճարն· եկաց անդ զամս մետասան· և անտի խօսկացեալ եղև ընդ յովսէփայ· և 'ի հասակի 15 ամաց ծնաւ զՔ՟ն· և եկաց ընդ Ք՟ի զամս 33, և յետոյ զամս 14· ընդ ամենայն ամք 62· և 'ի մեռանելն 'ի հասակ 63 ամաց՝ փոխեցաւ յաստեացս։

# ՔԱՐՈԶ
## Ի ՎԵՐԱՑ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՈՐԴՒՈՑ
# ԱՌ ԾՆՈՂՍ.

Բնաբան.

Եւ էջ ընդ նոսա, և գնայր ՚ի Նազարէթ. և էր նոցա հնազանդ։ Ղուկաս. Բ. 50։

Սկսուած։

Կամիր Յովաբ. ընտանորդ ՚ի քեզ ամփոփեմ. և խնայեմ յԱբեսողոմ։ Ո՞չ գիտայեր զհրաման Դաւթի թագաւորի, որ պատուիրելով պատուիրեաց. խնայեսջիք ՚ի պատանեակն իմ Աբեսողոմ։ Եւ թէ գիտայեր, զի՞ է գիրկս մանկանս նեղաձիգ լինիլ յԱբեսողոմ կախեալ զկաղնւոյ։ Զի՞նչ ասիցէ հայրն ՚ի սիրելւոյ որդւոյ իւրմէ անզաւակեալ. կամ դու զի՞նչ ասիցես ՚ի կալառաջի հօրն՝ զորդի նր սպանեալ. ապա կամիր և մի՛ շարժեր զձեռն քո յորդին արքայորդւոյ։ Այլ զի՞ է ինձ աղաղակել։ Ընդ օդս՝ և ոչ յականջս հնչէ բարբառս. պատասխանեալ հերովք իւրովք կախեալ կայ զծառոյ Աբեսողոմ. խոյանայ Յովաբ զօրավարն, և ոչ միով, այլ երիւք նետիւք խոցեալ սպանանէ զկախեալն։ Իբր զի՝ Թէպէտ և կայր պատուէր

Հրամանի յորքայէ, սակայն և այնպէս քննումն իմ՝ զարժանի վրէժս եղեալ անօրէնն աբեսողոմ ապըստամբեալն ՚ի հօրէ. Նա՝ ոչ զարժանահաս միայն այլ և զհամեմատ խորոյ յանցանաց եղեալ զվրէժ. քանզի թուի թէ վն այնր երիւք նետիւք խոցեցաւ, զի զերրեակ սէրն՝ զոր պարտիւր առ հայրն, ոչ եցոյց յանձին, իսկ զոր սէր պարտիւր աբեսողոմ ծնողին. զայն՝ զոր պարտ է ամ որդւոյ ցուցանել առ ծնօղս իւրեանց՝ ըստ օրինակին քո, որ ստուգութե էր Յով. հնազանդ. Ընթերցուք զինչ յառաջիկայդ ասի.

## Առաջարկութիւն.

Պարտին որդիք ծնողաց իւրեանց սէր երեքկին.

## Բաժանումն.

Նախ՝ վն ծննդեան. երկրորդ՝ վն դաստիարակութե. երրորդ՝ վն սննդեան.

## Մասն առաջին.

ա. Յայտ է թէ ծնօղք հայեցեալ յորդիս՝ ունին երրեակ անուն. զի են ծնօղ, ուսուցիչ և սնուցիչ. ըստ որոյ և որդիք երրեակ սէր ընծայել ունին ծնողաց. այս զսէր յարգութե, հնազանդութե, և բարերարութե. Սկիզբն արասցուք յառաջնոյն. Ծնօղք հայեցեալ յորդիս ունին սկզբնութի. ապա սէր յարգութեան

վայել է նմա. զոր և ամ 'ի չորրորդում պատուիրա-
նի սաստիկ հրամայէ. պատուէր տայ շնոյն ևս և ըղ-
ձոյն ևս: Եւ ոչ վայրապար յերկրորդում տախտակի
տասնաբանեան օրինաց նախ առաջին այս պատուէր
դնի. զի արմատացեալ է, և ա իրաց ինչ հիմնեալ
'ի նոյն իսկ օրէնս բնութ. և 'ի կարգ սիրոյ առ ըն-
կերն՝ սա է գլխաւոր: Խնդրեցէք, յինչ առաւել հաս
տատեալ կայցէ սէր յորդութ. և զինչ 'ի մէնջ պա-
հանջիցէ չորրորդ պատուիրանն: Լուարուք զպա-
տասխանին: Պահանջէ զյորդութի 'ի բանս. և սոյին
արգելու ուստերաց և դստերաց՝ մի կսկծեցուցին չբա-
նիւք բերելով առ ծնողս կամ այնպիսեօք՝ որ տրտմութի
ինչ կամ վիշտ ներգործիցէ 'ի նոսա: Պահանջէ յոր-
դութի 'ի գործս արտաքինս. և արգելու որդւոց՝ այպա-
նել զծնողաց զորոյս, կամ ը անդէպ արարս նց ընչայս
առնել. կամ առաջի նց արհամարհանօք գնալ՝ ոչ
թէ ոչ լուիք իցեն ը իշխանութեամբ նց: Այլ և պա-
հանջէ, զի որդիք յանդիման լիցին ծնողաց իւրեանց՝
որպէս ծառայք տերանց: Քանզի գրեալ է. որպէս
տերանց ծառայեսցէ ծնողաց իւրոց արդեամբք և բանիւ:

ը. Կամիցի՞ք օրինակ որդւոյ ակնածութե. տաց ձեզ՝ ըզ-
խոհական հօր զիմաստուն որդի զսողոմոն: Որ ոչ
զարմացի ընդ սէրն յարգական, զոր նա՝ թագաւոր
գոլով, եցոյց մօր իւրում բերսաբեայ: Իբր և եսես
զնա, զի գայր, յարեաւ ընդ առաջ նորա. և համբուրեաց
զնա: Եւ ոչ այսչափ միայն, այլ զի վկայեսցէ, թէ 'ի
ձեռն մօրն եհաս կենաց և թագաւորութե. հրամայ-

նայ եւ պատրաստել նմա աթոռ. Եւ նստաւ մայրն Է աջմէ սողոմոնի արքային. ահա՛ յարգութի ՚ի գործս. Եղիցի յարգութիւն եւ ՚ի բանս. զի ասէ ցնա ար- քայ. [illegible] Զի՞նչ խորհեցիք արդ խնդաբարոյ որդիք, հայեցեալ յօրինակ այսպիսւոյ արքայի. Ո՞չ ՚ի մատուցանելն զայս յարգութի, եղիցի յանձին մեծ զգօնութիւն. ո՞ տայր ամ որդւոյ զնոյն առնել. զի սաստային արդեօք մեծ անուն իմաստութեան յոյր, եւ մեծ փառս.

Դ. Զայս սէր յարգական առաւել պարտէս տպաւորել զմա- նայր յորդի իւր՝ ծնողունին տուբիթ, որ ՚ի խրատել զնա՛ յաւել եւ զայս. [illegible] . . . [illegible] Եւ յիշեսցի՛ զորօրի- նակ արժան եւ իրաւ է յարգել զծնօղս, նոյնպ յարգութին ընծայեալ նը չէ ինչ անպտուղ եւ անօգուտ. զի որպ սրտի դիւր լինի նովաւ ծնողաց, նոյնպէս որդւոյ պատկառաւորայ երկար կեանք շնորհին. եւ այլ բա- րիք հոգւոյ եւ մարմնոյ առ յայնը պարգեւին. քանզի գրեալ է, [illegible] . եւ թէ, [illegible] . Եւ [illegible] Զսորին հակա- ռակն. վա՜յ ձեզ ամպարիշտ որդիք խռովարարք. վա՜յ ձեզ, որք զլատանձնեալ վաստակս եւ հոգս ծնո- ղաց ոչինչ գրեք. վա՜յ ձեզ, որք այնպէս թշնամա- նայք առ ծնօղս. մինչեւ երկարութի կենացն՝ վասն յապաղելոյ ակնկալեալ ժառանգութեան՝ անհնարին ձանձրոյթ ՚ի ձեզ արկանէ. վա՜յ ձեզ, որք առ ծնօղս

ձեր քաղցրախօսել չառնուք յանձն. նա՛ ցնորս առ-
ձեռութեն քամահէք, և անխծաղիր ևս լինիք նոցա
և յիշողութեան. և մահ խակ խնդրէք: Որոյ չարեացս
յորմէ անբանից խակ բնութի սոսկայ. Վայ է ձեզ. զի
սուտ է ած. [illegible] և միանգա-
մայն սպառնայ. Թէ [illegible]
[illegible] է յաւիտենական
մահու պատուհասեսցի: Առաջ քանզի հնար էր ա-
ռաջի առնել ահաւոր պատիժս, որով պատուհա-
սեսցին անպատկառ որդիք. այլ արդ ժամ է խօսել
զերկրորդ սիրոյ զոր պարտիմք ծնողաց.

## Մ[illegible]

Գ. Ծնօղք հայեցեալ յորդիս՝ ի նմ և ուսուցիչ և ուղիղ:
խակ յայամանէ զինչ. պարտին ուրեմն որդիք փոխա-
րինել ծնողաց ո՞վ ուղղեալ զսէր հնազանդութեան,
[illegible] խրատու առաքելոյն. [illegible]
[illegible] Զորօրինակ մանուկ մա-
կունք ոչ հաստատուն յոտն կան, և ոչ գնալ զօրեն՝
առ գրգռն անպամոց, և առ 'ի չգոյէ ուժոյ. և
վն այսորիկ 'ի գիրկս և 'ի ծոց ծնողաց դիմեն, զի
զերկարաբար շրջեսցին. նոյնպէս հասակ մանկութե
գեռ ոչ ունի սերտ հաստատութի յառաքինութիւ
և 'ի վարս անվեհեր կալ 'ի կայի, կամ գնալ յա-
ռաջադէմ. իբր զի բազմադէմ վտանգաւոր արկա-
ծից է ստորանկ, թէ ոչ ծնողաց հովուութբ և առաջ-
նորդութեամբ պատսպարեսցի: Այլս արժան է, նա՛
հարկ խակ է որդւոյ՝ հնազանդութբ ղհետ երթալ

առաջնորդութե ծնողաց․ առս թէ ոչ՝ անձանց կորուստ,
և ծնողաց մեծ վիշտ հասուցանեն․

Ե․ Ասացաք, մեծ վիշտս հասուցանեն ծնողաց․ քանզի գրեալ է․ ամօթ հօր որդի անզգամ․ ոչ թէ ասէր՝ անխօսք․ իսկ զի՞արդ․ զի այնպիսի խեռ որդիք ՚ի հօր և ՚ի մօր մոլութեանց արկանեն զանձինս իբրև զլուսնոտս և զդիւահարս․ նմանեալ որդւոյն լուսնոտի, զոր հայր իւր մատոյց Քսի երկնաւոր բժշկի՝ զի բժշկեսցի․ և գանգատէր զնմանէ, թէ բազում անգամ անկանի ՚ի հուր և բազում անգամ ՚ի ջուր․ Բա՛րէ, քանի՜ այդպիսի լուսնոտ որդիք կան․ որք ոչ երբէք դադարեն ՚ի սխալանս․ այլ ըստ լուսնին աճեն ՚ի չարութե, և նուազին յառաքինութե․ Սոցա չիք այլ հնար դեղոյ․ բայց զի ձեռամբ ծնողաց մատուցցին առ Քս․ և այնպէս յանձնեսցին ՚ի խորհուրդս բժշկութե գթոյն․ Վն այսորիկ հարկ է որդւոյ հնազանդ լինել ուղղչաց իւրեանց, թէ ոչ կամին կորնչիլ հոգով և մարմնով․

Զ․ Զայս հնազանդութե զարմանալի օրինակ ունիմք ՚ի Քս, որ հօր և մօր իւրում յերկրի՝ յամս երեսնից հնազանդ էր․ էր՝ ասէ, հնազանդ նոցա․ Զարմանալի է օրինակս, ասէ բեռնարդոս․ երկուս ունեք զարմանս, երկուսեան զսքանչելիս․ Ած՝ հնազանդել կնոջ՝ խոնարհութի է անլուր․ կնոջ հրամայել Այ՝ բարձրութի է անհամեմատ․ Ապաքէն չիք այնպէս սրտի դիւր ծնողաց․ որչափ յորժամ որդիս ունիցին հնազանդս․ Ահա ձեզ կոռնելիա մայրն հռովմայեցի․ որ ՚ի ցուցանել այլոց կանանց զպատուական զանձս ականց և մարգարտաց, առ առաջի արար զիւր որդիս․ ասէ․ այս են

իմ պատուական գանձք. նա՝ այնչափ սիրելի եղեն նմա
այս գանձք, մինչև համարձակ ասել նմա. առաւել
ընտրեմ մայր լինել սոցա՝ քան դշխոյ եգիպտացւոց։
Ակայ ձեզ մայրն այն աթենացի, որ ՚ի հանդիսի ինչ
աւուր՝ ՚ի ժողովս պճնազարդեալ կանանց յանդիմա-
նեալ վս֊ երևելոյ իւրոյ զծծազգեստ՝ զփոկիոն զորդի
իւր՝ զոր առ ընթեր ունէր՝ եցոյց ասելով. իմ զարդ՝
փոկիոն է։ Արդ՝ ՚ի մեզ շրջեալ զձեռնարկութեա
հարցանեմ. եթէ առ մեօք մարք որդւովք իւրեանց
յանդիման երևէին, ի՞շխէի՞ն արդեօք ասել. այս իմ
որդիք՝ են ինձ զարդք։ աւա՜ղ, զի բազում որդիք ծիս
առաւել անպատուութի՟ւն բերեն ծնողացս, քան պատիւ.
առաւել ցաւս՝ քան սփոփանս։

Մ[illegible]

Է. Ծնօղք հայելով յորդիս՝ են և սնուցիչ և բարե-
րար. զի զորդիս իւրեանց պարտական են սնուցանել
և խնամել։ Իսկ յայսմանէ զի՞նչ ծագիցի, բայց եթէ
երդ՝ պարտաւորութի որդւոյ. իբր զի պարտին ծնո-
ղաց իւրեանց և սէր բարերարութեան։ Իսկ ո՞ր իցէ
այս սէր բարերարութե. գործովք նպաստաւորել, նա՝
երբեմն և համբերել. ըստ այնմ, [illegible]
[illegible] Տես՝ զի երբեք
ինչ կան ՚ի վկայութե աստ. [illegible]
և զերբեսին զայսոսիկ պարտին որդիք ծնողաց։ Նախ
առաջին էան հեզիկ և քաղցր։ Կան որդիք, որ ծե-
րունի ծնողաց համապազ ընդդէմ քրթմնջեն. առ-
բանս նոցա յամառ դիմախօսեն, և գրեթէ զամե-

նային զառ ՚ի նոյանէ ստացեալս շնորհակալութիւն հատուցին. ո՞չ է այս՝ պատուել զծնօղս ՚ի բանս այլ՝ խաղաղանել. կամ որդիք՝ որք օտարաց առաջի ամենեւին լռել հրամայեն ծնողաց. և ծնող խիստ անուանել զնոս չարաչուն յանուն. ո՞չ է այս պատուել զծնօղս ՚ի բանս, այլ՝ անարգել. կամ որդիք՝ որ ըզծնողաց դոյզն վրիպանս սաստիկ թշնամանօք կշտամբեն. ո՞չ է այս պատուել զծնօղս ՚ի բանս այլ՝ դառնացուցանել և քամահել. Այս հարկ է որդւոյ, և դստերաց. ( զորոյ զ յետինն միշտ ստորադաս իմանալք քան զառաջինն. ) զծնողաց իւրեանց սխալանս հեզիկ ուղղել. և զվրիպեալսն որք լըրատել հայր և մայր անուն կոչելով.

Ը. Նոյնպէս պատուելի են ծնօղք [illegible]. Գիտեմ, զի ծերութի ծնողաց երբեմն աշխատութի յոյժ հասուցանէ որդւոյ. Գիտեմ, զի զառամեալ և իբր տղայացեալ ծնօղք՝ ծանր բեռն են ՚ի տան. Գիտեմ, զի յոլովակի մօր վատին աչքը, սակայն և այնպէս ՚ի տնտեսական իրողութիս հրամայել կամի, և դիտողութիւն առնել. Գիտեմ, զի յոլովակի հօր խամրին լսելիք. սակայն և այնպէս՝ զամ որ առ անին լինի, իմանալ կամի. Գիտեմ զայս ամ. բայց զի՞նչ հնար կայցէ այսմ. չիք այլ հնար ողջամիտ որդւոյ և դստերաց, բայց եթէ համբերութիւն. և ո՞րպիսի. մեծ և. առաւել մեծ, և յարակայ. [illegible] Արդ՝ արժան և իրաւ է որդւոյ զծնողաց վիշտս համբերութ բառնալ. զի և ծնօղք վն որդ-

նոյ 'ի ծննդեան և 'ի սննդեան բազում վշտակրութեց տարան։ Երկրորդեմ զասացեալս. պարտ է որդւոյ համբերութի. նեղէ զքեզ հայր քո ծերունի, տար նեղութեան մՀ համբերութ. քանզի գրեալ է. Որդեակ՝ ձօրավիգն լեր ծերութեան հօր քոյ. և մի՛ տրտմեցուցաներ զնա 'ի կեանս իւր։ Վատնին հօր քոյ զգայարանք. տար պակասութեան մՀ համբերութ. զի խրատէ սիրաք. Թէ վատթարեսցի նորա զգայարանն՝ ներեա՛ զիր. և մի՛ արհամարհեսցես զնա 'ի զօրութեան քում. Չիւանդացեալ դնի մայր քո ամս բազումս. և տաղտկութիւն զքեզ արկանէ. տար տաղտկութեանս մՀ համբերութ. յիշեա, զի և նա 'ի քում տղայութ այդպիսեաց համբեր վշտաց։ Ասացէք որդիք, թէ տայր ոք ձեզ քանի մի հազար դահեկան, ո՞չ արդեօք երկայնմտութ համբերէիք այդպիսեաց աշխատութեց՝ բազմամեայ աւուրս, ես և վս անծանօթից և օտարաց։ Իսկ արդ՝ 'ի ծնողաց առնուք գանձ պատուականս քան զամ ոսկի և արծաթ. զի է զկեանս. և վս այսպիսւոյ մեծի գանձու համբերել չառնուցուք յանձն։ Վա՜յ 'ի ձէնջ ապերախտութի այդպիսի։

Թ. Իսկ պատուելի են ծնօղք 'ի գործս նպաստաւորութ. Իբր զի պարտաւորին որդիք նպաստամատոյց լինել ծնողաց իւրեանց կարօտելոց՝ ըստ կարի. կերակրելով զնս, և խնամելով։ Ապաքէն անբանք իսկ 'ի մասինդ յայդմիկ ուսուցանեն մեզ. որք ըմլիէ խնամարկեն զծնօղս իւրեանց, ոչ միայն զպէտս կերակրոյ նոցա պատրաստեալ, այլ և. ըստ թշնամին յարուցեալ 'ի վր

նց մանհուչափ պատերազմեալ։ Բազում զայսմանէ մարթէր առաջի առնել օրինակս. այլ ամօթ է մեզ յանբանից ուսանիլ բնութս որդւոյ առաքինեայ ունելով օրինակս։ Ո՞չ յայտ է ՚ի դաւիթ, որ իբրև ընտրեցաւ թագաւոր, զամ փոյթ յանձին կալաւ. զի աղքատ ծնողաց իւրոց պէտք՝ օրինօք պաշտեսցին։ Գիտեմ՝ զի այլ օրինակ խնդրեք ասելով. ոչ ինչ են զարմանք, թէ ամենահարուստ թագաւոր՝ իւրոց աղքատ ծնողաց նպաստաւորեսցէ. այլ այն է զարմանք, եթէ և չքաւոր որդիք ըստ կարի առ ծնօղս իւրէց ցուցցեն երախտիս։ Արդար ասէք՝ սիրելիք. և ահա այդպիսիս ունիմք օրինակս զես երևելին ՚ի դուստրն յայն, որ զմայր իւր բանտարկեալ, զի մի սովամահ լիցի. իւրովք ստեամբք դիեցոյց։ Իբրև ել ՚ի վեր բանն, երկոցունց ազատութիւն շնորհեցաւ. և ուտեստ պատշաճական զամ՚աւուրս կենաց նոցա հաստեցաւ։ Այլև ՚ի տեղւոջ բանտին՝ տաճար կառուցաւ աստուծոյն գթութեան։ Թո՛ղ զօրինակն եննեայ, որ ՚ի հրայրեացն տրտադայ զհայր իւր շալկաւ զերծուցեալ՝ յաւերժական փառս ստացաւ առ յապայս։ Հա՛տ է այն՝ զի ապերախտութ հրեշէ որդի, որ ՚ի կարէտ ծնողաց՝ ոչ նպաստէ նոցա ըստ կարի։

### Յորդորակ.

Յայտ է յասացելոցս, թէ որդիք նորբեակ ամէր պարտին ծնողաց իւրեանց. վս ծննդեան, դաստիարակութ. և սննդեան։ Իբր զի զոր ինչ ՚ի ծնողաց ընկալաք, դըր-

թէ զնոյն անդրէն նմա պարտիմք։ Առաք 'ի նմանէ սիրտ. զայն նմա պարտիմք, սիրելով. առաք 'ի նմանէ լեզու. զայն նմա պարտիմք, պատկառ խօսելով. առաք 'ի նմանէ ձեռն. զայն նմա պարտիմք, ձեռնտու լինելով ամ մարմնոյ եղբայրն. Վասն զայս ձեր պարտաւորութիւնքն երբէք բամռանալ զիք՝ որդեակք. այլ պատուեսջիք զնոսա ձեր [illegible]

---

Պատարագն խորհրդական՝ է պատկեր իրական պատարագի խաչին, և ըստ գոյութեանն նոյն ընդ նմա, ոչ է սոսկ յիշատակողական այնմ, այլ և համազօր ընդ նմա. ուստի և ողջակիզական՝ առ 'ի ընծայել գերագոյն մեծութեանն այնմ զմեր ծառայական խոստովանութիւն. գոհացողական՝ վն ամ ընկալեալ բարեաց. խնդրողական՝ վասն ամ պիտոյից հոգեկանաց և մարմնականաց. քաւողական՝ 'ի թողութիւն մեղաց և պատժոց վասն կենդանեաց և ննջեցելոց։ Զայս ամ ներգործութիւնս յայտ առնեն քահանայական աղօթքն մատուցեալք յետ քահանայագործութեան խորհրդոյն։ Երկարապատում և անսպառ իմն լինէր ադարել առ ել մեզ. եթէ որչափ մասամբք, և որչափ եղանակաւ հաճեցաւ Փրկիչն աշխարհի ցուցանել յարարածս զխոնարհութիւն մահու և չարչարանաց իւրոց, առ 'ի հաստատուն ունել մեզ յարաժամ զյիշատակս նը. բայց սակայն գերահրաշ, գերագոյն և գերափայլ ցոյցք նորին, զորս եթող մեզ 'ի մէջ ամ ցուցակաց, եղև ամենասուրբ խորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ.

զի սա է կենդանի իմն ցուցակ ամենասուրբ մահուան նորին և չարչարանաց։ Որով ցուցանէ մեզ, թէ յամ՝ նուագս, յամ՝ աշխարհի, յամ՝ աւուր՝ երբ մատուցանի պատարագ մարմնոյ և արեան նորոյ, պատրաստ է նա վն մեր մեռանիլ, եւ զի այժմ ոչ ևս խաչիլ և մեռանիլ կարէ յաղագս ունելոյն փառաւորեալ զմարմինն. սէր նորին անհուն և անեզրական՝ եգիտ զեղանակ ինչ կրկնելոյ և նորոգելոյ առանց չարչարանաց, և առանց հեղման արեան զպատարագ խաչին, և զպտուղ արդեանց փրկութեան մերոյ։

## ԴԱՍ. Բ.

### Զգեստք Քահանայի՝ ի մէջ պատարագի՝ են

| | | |
|---|---|---|
| Սաղաւարտ, | Շապիկ, | Գօտի, |
| Բազպան, | Ուրար, | Շուրջառ. |

### Նշանակութիւն։

Սաղաւարտն՝ նշանակէ զզօրութի յաղթութե տեառն մերոյ յի քի, որով եւ ՝ի պատերազմ ընդդէմ՝ բելիարայ. և արար զփրկութիւն ազգի մարդկան.

Շապիկն՝ նշանակէ զանմեղութի և զմաքրութի վարուց տեառն մերոյ յի քի և զմայլումն նորին երանական տեսութեամբ էութեանն այ։

Գօտին՝ նշանակէ զողջախոհութի տեառն մերոյ յի քի, և զանխառնութիւն նորին՝ ՝ի զգայական ցանկութեանց.

Բազպանն՝ նշանակէ զյօժարութիւն սրտի, և զպատրաստութիւն տեառն մերոյ յիսուսի՝ առ 'ի կատարել զհաճութիւն հօրն երկնաւորի։

Ուրարն՝ նշանակէ զհնազանդութիւն տեառն մերոյ յիսուսի, առ 'ի լնուլ զկենսագործ տնօրէնութիւնն իւր՝ ըստ նախասահմանութեան հօրն երկնաւորի։

Շուրջառն նշանակէ զլրումն ամ՟ առաքինութեանց՝ որով զարդարեալ էր մարդկութիւն տեառն մերոյ յիսուսի 'ի սկզբանէ յղութեանն իւրոյ։

## ԴԱՍ. Գ.

*Եօթն խորհուրդք եկեղեցւոյ՝ են*

| | | | |
|---|---|---|---|
| 1. Մկրտութիւն. | Մատ. | իը. | 19. |
| 2. Դրոշմ. | Գործ. | ը. | 17. |
| 3. Սրբութիւն. | Մատ. | իզ. | 26. |
| 4. Խոստովանութիւն. | Յովհ. | ի. | 23. |
| 5. Վերջին օծումն. | Մարկ. | ժզ. | 1. |
| 6. Ձեռնադրութիւն. | Յովհ. | ի. | 26. |
| 7. Ամուսնութիւն. | Մատ. | ժթ. | 6. |

Լուսաբանութիւն.

Մկրտութիւն որ է հիմն գործոց ամ՟ պաշտօնէ՝ ներգործէ զանձային կերպարանակցութիւն կատարելապէս յայնոսիկ, որք են հաւատոյ ունելին լծորդ և զնմանութիւն վարուց քի, շնորհօքն ի՟ և սիրովն և ամ՟ սրբարար պարգևօք առլցեալք. Երբեակ ընկղմեն ի յարարողութեան մկրտութեան՝ նշա

նակէ զերեքօրեայ դմահ և զԹաղումն փրկչին. և ե-
րեկս վերանալն ՚ի ջրոյ օրինակէ զերեքօրեայ զյարու-
Թիւնն։ Զերեսին զայսոսիկ յՆերքն փակէ խորհուրդ մկր-
տուԹե. վերստանամբն ՚ի ջրոյ՝ զգեն յարուԹին օրինակէ. ըս
սպանանելով զհին մարդն մեղաց, տայ յոյս ապանման մա-
հուն՝ յարուԹբ մարմնոյ մերոյ։

ՍրբուԹիւն կամ՝ հաղորդուԹին է խրական և ճըշ-
մարիտ հաղորդուԹիւն արեանն քն. որպ և Ոսկեբե-
րան ասէ, այն որ ՚ի բաժակին է, նոյն է որ ՚ի կողէն
քն բղխեաց. և նր եմք հաղորդք՝ Եւ երանելին ասէ
Պօղոս, * Բաժակն օրհնուԹե զոր օրհնեմք, ո՞չ
ապաքէն հաղորդուԹիւն է արեանն քնի. հացն զոր
բեկանեմք, ո՞չ ապաքէն հաղորդուԹի է մարմնոյն քնի։||
Եւ յայտնագոյն ևս Քն ասէ. * Այսէ մարմին իմ։||
*Այդէ արիւն իմ։|| Աածարանք ծանուցանեն, Թէ
նիւԹք սրբազան խորհրդոյն Թէպէտև ոչ բնական
զօրուԹբ ներգործեն զհոգևոր գործս, սակայն ունին
բնականն նմանուԹի ինչ ընդ այնց գործոյ. որպ ՚ի մկրտուԹե՝
ջուրն բնուԹբ լուացող է աղտից. ՚ի հաղորդուԹե՝
հացն բնուԹբ է յագեցուցիչ. գինին բնուԹբ՝ զուար-
Թացուցիչ համեմատ հոգևոր գործոյ իւրեանց։
Սոյնպս և ՚ի դրոշմին՝ միւռոնն բնուԹբ դժուարելա-
նելի է՝ համեմատ անջնջելի ներգործուԹեան իւրոյ։

Քրիստոնէական ամուսնուԹին զոլով խորհուրդ,
է նշանակիչ անքակ միաւորուԹեան բանին այ ընդ
մարդկուԹեանն, և ընդ եկեղեցւոյ։

Յակ Առաքեալ ասէ, Թէ՝ Ամենայն կենդանի յան-

կայ Տեառն մշտնջենաւոր. և զի յինքն ոչ կարէ Տեառն
ցանկայ Տեառն ՚ի յորդին. վա այն բնականապէս հո-
գւոյն ծնանիլ և յայտմանէ զպսակն ՚ի մէջ առն և
կնոջ բնական աւէ.

## ԴԱՍ. Դ.

### Օծումն, Բանադրանք, Արձակումն.

### Լուսաբանութիւն.

Ցօծելն զհիւանդս, զակն, զխաչ, եղ, ոչ կրկնի օ-
ծումն նշ յորչափ անեղծ և ամբողջ կան. և են երկրը
պագելիք. Զի ոգի ՚ի խորհուրդ հաղորդութե՛ քա-
հանայագործեալ հայն և գինին են խնկապէս մար-
մին և արիւն քն. և ներգործեն զշնորհս նշ և ոգի
՚ի խորհուրդ մկրտութեան՝ ջուրն խնկապէս ծնանի
զմեզ ՚ի հոգևոր կեանս, այսպէս և ՚ի խորհուրդ
դրոշմին՝ մեռոնն խնկապէս տայ օծելոյն զհոգին նր.
Այս և որն աւէ կիւրեղ զգոյշ լեր, մի խաղ մեղկ
և սնոտի համարիցիս լինել զի ոգի հայն հաղորդութե
յետ կոչման հոգւոյն որյ ոչէ հայ հասարակ, այլ
մարմին քն. նոյնպէս և որ իւղս ոչ ևս է լոկ իւղ
յետ կոչմանն, այլ քի պարգևաւրան, և հոգւոյն որյ
ներգործօղ՝ հուպ գոլով աստուածութիւն նր:

Բանադրանք՝ նշանակէ որոշումն, բաժանումն ՚ի
հասարակաց մասնակցութե. և ըստ այսմ վարի այժմ
յեկեղեցական սովորութե. որով առաջնորդք զանուղ-
ղայ յանցաւորսն զանազանեն ՚ի հոգևոր, կամ նաև
՚ի մարմնաւոր հաղորդակցութենէ ժողովրդեան.



## ԴԱՍ. Ե.

### Յիշատակարան, Գերեզման, Տապան, Տապանագիր Լուսաբանութիւն.

Տապանագիրն է գրուած 'ի վր̄ գերեզմանի առ 'ի յաւէժական յիշատակ մեռելոյ, և 'ի խրատ կենդանեաց։ Այն որ երբեք ինչ խնդրին ը̄ Հանրապէս. Նիւթ, տրամադրութիւն, և ոճ։ Նիւթ նր̄ է բարուն կամ յոռութիւն մեռելոյն. և կամ խրատ կենդանեաց։ Տրամադրութին է սահմանաւոր դասաւորութի և շարք տողից գրելոց 'ի վր̄ տապանի։ Իսկ ոճն պարտի ընտրել ազդու, համառօտ, և վսեմ. և ըստ նիւթոյն պատշաճաւորութէ ընտիր բառիւք գեղածաղիկ յօրինեալ. և յարմար 'ի զարթուցանել զկիրս ցաւոյ երկիւղի, և ատելութէ ընդդէմ ունայն և վաղանցիկ Ճոխութեց և երջանկութեց աշխարհիս։

## ԴԱՍ. Զ.

Պաշտօն, Կարգ, Դագաղ, Թաղումն



# ԲԱՐՈՅԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ

## ԴԱՍ. Ա.

Զգածումն կամ կիրք.

| | | | |
|---|---|---|---|
| Կիրք, | Սէր, | Ատելութիւն, | Ցնծութիւն, |
| Տխրութիւն, | Խնծղանք, | Թաղծութիւն, | Խնդամտութիւն, |
| Զուարթութիւն, | Փափաք, | Վստահութիւն, | Քաջութիւն, |
| Լքումն, | Բարկութիւն | Ախորժ, | Արէժ, |
| Ամօթ, | Յոյս, | Երկիւղ, | Նախանձ, |
| Ողորմածութիւն, | Գութ, | Նախատինք, | Զղջումն. |

### Լուսաբանութիւն.

Բարոյական փիլիսոփայութիւն կամ՝ իմաստասիրութիւն ուսանելէ զբարոյական կանոնս առ ՚ի ուղղել և բա-

ընդարդել զբարս. նաև ուսուցանէ յանձին բերել զբարիս, և համբերել չարեաց. վայելել չափաւորապէս 'ի յաջողուածս, և տանիլ արիաբար ձախորդութեանց։

Կիրքն՝ է շարժումն բաղձողական զօրութեան ընդդալոյ՝ յերևակայութենէ բարւոյ կամ չարի հանդերձ մարմնական փոփոխութեամբ.

Ազնուագոյնն 'ի մարդկային կիրս՝ է սէր. և ազնուագոյն պտուղ սիրոյ՝ է բարեկամութի̃. որ թէպէտ և է անկատար առաքինութի̃, իբրև զժուժկալութի̃ն, բայց և այնպէս՝ իբրև զի է յոյժ գեղեցիկ. և յոյժ պիտանի քաղաքական կենաց, և մարդկային երջանկութե̃, արժանի համարեցան իմաստասէրք և զայ դասել ընդ բարոյական առաքինութիս. Եւ միով բանիւ առաքելոյն ասէ, թէ * Ա̃ծ սէր է, և որ կայ 'ի սէրն՝ բնակեալ է յա̃ծ՝ և ա̃ծ 'ի նմա բնակէ.||

## ԴԱՍ. Բ.

Երեք աստուածաբանական առաքինութիւնք՝ են

Հաւատ, Յոյս, Սէր.

### Լուսաբանութիւն.

Հաւատք են յուսացելոց հաստատութի̃, իրաց յանդիմանութի̃ ոչ երևելեաց։ Կամ հաւատքն է գոյաւորութի̃ իմն իրացն յուսալեաց. այնք որք յուսոյն են, թուին անանձնք, որ ոչ գոյք, ոչերևեալք՝ այլ լինելոյք

և ապառնիք. իսկ հաւատք՝ անձն չորհեն նոյա. յա-
ռաջ քան զգոյանալ յինքեան՝ առնեն գոյանալ նց
՚ի միտս և ՚ի սրտի հաւատացելոյն. այնպէս հաւա-
տոյ կացուցանեն զակնկալիսն, որպէս թէ արդէն եղեալ
իցեն և ընդ ձեռամբ ստացեալք. Օրինակ իմն, որպէս
բերէ ոսկերերան, յարութի մեռելոց յուսով միայն
է, դեռ ՚ի գերեզմանս կան մեռեալք. բայց հա-
ւատք իբրև եղեալ նկարէ մեզ զնոյն.

Յոյս է շարժումն ինչ հոգւոյ յապագայ բարին
ստանալի. վասն որոյ երկու ինչ հարկաւ պահանջի
՚ի բարւոջ անդ, այսինքն զի իցէ ապագայ, և իցէ
հնարաւոր առ ստանալ.

Սէրն է հրամանատար և գործօնեայ ամենայն առաքի-
նութեանց, և հակառակ ախտիցն վանիչ. զի ուր հա-
ւատք և յոյս անկարանան արգելուլ զանկարգութիս
՚ի կիրառութե պարգևացս, անդր հասեալ սիրոյն՝
զամենայնի ՚ի խաղաղութիւն նուաճէ.

Իսկ երրեակ թիւն գոլով կատարեալ և նուիրական
այ, առ ածային անձինն յարմարեն ածաբանք զթիւ
և զդասաւորութի ածաբանական առաքինութեցս. հա-
ւատք վերաբերին առ հայր, յորմէ սկիզբն առնեմք
հանգամանքին հաւատոյ. յոյս առ որդին, որով ածիմք
առ հայր. և սէր առ հոգին ած, որ շաղկապ է հօր
և որդւոյ, և սփռօղ ՚ի մեզ ածսիրութե.

# ԴԱՍ. Գ.

## Կարդինալական Առաքինութիւնքն՞ են

Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն, Բարեխառնութիւն։

### Լուսաբանութիւն.

Խոհեմութիւնն՝ է ուղիղ բան առնելեաց. որ է, առաքինութիւն ուղղեւորիչ իմացութեան. է լոյս առնելեաց. արուեստ ուղիղ կենաց, ակն կամաց, և այլոց առաքինութեանց առաջնորդ։

Արդարութիւնն՝ է ընդհանուր ամ ուղղութիւն և առաքինութիւն համաձայն օրինացն Այ, և կամ յատուկ արդարագործութիւն առ ընկերն։

Արիութիւն՝ է մտածեալ յանձնառութիւն վտանգաց՝ և համբերութիւն աշխատութեանց։

Բարեխառնութիւնն՝ է հաստատուն և բարեկարգ տէրութիւն բանի 'ի վերայ վաւաշ ցանկութեան, և այլ անուղղայ յարձակմանց սրտի։

# ԴԱՍ. Դ.

Բարոյական Առաքինութիւնք և Մոլութիւնք՝ են

| | | |
|---|---|---|
| Առաքինութիւն, | Մոլութիւն, | Յաջողութի, |
| Զախողութիւն, | Յանձանք, | Երջանկութի, |
| Թշուառութիւն, | Վարձ, | Ժուժկալութի, |
| Արբեցութիւն, | Մաքրութիւն, | Ողջախոհութի, |
| Տափանք, | Պագշոտութի, | Հարստութի, |
| Աղքատութիւն, | Պէտք, | Շփեղութիւն, |
| Առատաձեռնութի, | Բարութիւն. | Տուրք, |
| Ճշդութիւն, | Ողորմութիւն, | Շռայլութի |
| Կատնուձն, | Ագահութիւն, | Ջանք, |
| Անհոգութիւն, | Ծուլութիւն, | Պատիւ, |
| Գովեստ, | Դարով։ | Համբաւ, |
| Հաւատ, | Նախատինք, | Վեհանձնութի, |
| Փառասիրութիւն, | Գոռոզութիւն, | Պարկեշտութի, |
| Փառք, | Պարծանք, | Լրբութիւն, |
| Ամօթխածութի, | Հեզութիւն, | Արութիւն, |
| Ժպրհութիւն, | Համբերութի, | Երկչոտութի, |
| Իրաւունք, | Խարդախութի, | Խաբէութի, |
| Նենգութիւն, | Հնարք, | Քաղցրութի. |
| Ներողութիւն, | Թոյլութիւն. | Լաւակամութի, |
| Ընգթութիւն, | Ներհակութի, | Հակառակութի |
| Ճշմարտութիւն, | Քաղաքականութի, | Գեղջկութի, |
| Կատակ, | Այպ, | Ծայր, |
| Նախատինք, | Բարեկամութի, | Թշնամութի, |
| Միաբանութիւն, | Դժտութիւն, | Խաղաղութի. |

Առաքինութիւնն է կատարելութիւն կարողութեան. Այս պարտի որոշել զնա 'ի հասանիլ իւրում առ ար- կայի կատարեալ եղանակաւ: Առաքինութիւն' ոչ յայս է գլխովին, և ոչ 'ի մեզ միայն. այլ Աստուծ ձիրհօքն, և մեք կամակարութեամբ ծնանիմք զառաքինութիւն. 'ի գործել այս' և մեք ընտելաւ ունիմք գործել զբարին:

Մոլութիւն նշանակէ զտրամադրութիւն ապականեալ և աղխտայեալ կարողութեան. և է իբր հոգևոր իմն հիւանդութիւն, և հակեցուցանէ 'ի մեղանչական ներգործութիւն, որ է ևս չարագոյն: Մոլութիւնք բա- ժանին 'ի չորս սեռս. յանխոհեմութիւն, յանիրաւութիւն, յանբարեխառնութիւն, և 'ի մոլութիւն ընդդէմ արիութեան, որոյ ոչ երևի սեռական անուն:

Շռայլութիւն և ագահութիւն են երկու մահուչափ թշնամիք առատաձեռնութեան. բայց առաւել ևս թշնամիք միմեանց:

Ամօթխածութիւնն' որ բնակէ յաչս, է երկիւղ վա- տանուանութեան: Ամօթխածութիւն նկարէ զծնօթս հա- մեստ օրիորդայ պարկեշտ իմն կարմրութեամբ ծո- վու ծիրանւոյ. իսկ ամօթն ներկանէ համակ զերեսս զղջականաց լրթագոյն շառագունութեամբ իմն նման կարմր- ութեան միսոյ խեցեմորթի: Բազում զգօնութեամբ Պիւթիա արժանաւոր դուստր Արիստոտելի' իբրև հարցաւ, թէ որ գոյն թուիցի նմա առաւել անու- շակ. ետ պատասխանի, գոյն ամօթխածութեան:

Խաղաղութիւն է կարգաւորեալ հանդարտութիւն մտաց համաձայնելոյ ՚ի բարին. Խաղաղութիւն մարմնոյ է կարգաւորեալ և բարեխառնեալ համաձայնութիւն մասանց. Խաղաղութիւն բանական հոգւոյն է կարգաւորեալ հաւանութիւն խորհրդոց՝ և գործոյ. Խաղաղութիւն հոգւոյ և մարմնոյ է կարգաւորեալ կեանք և փրկութիւն մարդոյն. Խաղաղութիւն մահկանացու մարդոյն և Այ՝ է կարգաւորեալ հնազանդութիւն հաւատով՝ ՚ի ներքոյ յաւիտենական օրինաց. Խաղաղութիւն մարդկան՝ է կարգաւորեալ համաձայնութիւն ՚ի ներքոյ մարդկային օրինաց. Խաղաղութիւն տան՝ է կարգաւորեալ համաձայնութիւն համարձակ հրամայողին և հնազանդելոյ. Խաղաղութիւն երկնային՝ է յոյժ գերագոյն կարգաւորեալ և համաձայնեալ ընկերակցութիւն վայելելոյն յԱծ՝ և յիրեարս յԱծ. Խաղաղութիւն քաղաքի՝ է կարգաւորեալ համաձայնութիւն քաղաքացւոց ՚ի հրամայելն և ՚ի հնազանդիլն. Խաղաղութիւն ուղղափառութեան է կարգաւորեալ համաձայնութիւն հաւատացելոյ ՚ի հաւանութիւն հաւատոյ, և խորհրդոյն հայաստանեայց մեր եկեղեցւոյ, և մանաւանդ արտաքսումն և հրաժարումն ՚ի պապական գլխէն՝ անապաշտութեայց և յայլոց դաւանաշունչ աղանդաւորացն մերձենալեաց. Խաղաղութիւն ամենայն իրաց՝ է հանդարտութիւն կարգենոյին. Իսկ խաղաղարարք՝ որդիք Այ կոչեսցին.

# ՆԻՒԹՔ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆՔ.

## ԴԱՍ. Ա.

Նիւթք դատաստանին՝ են

| | | |
|---|---|---|
| Օրէնք, | Սովորոյթ, | Դատաւոր, |
| Դատաւճիռ, | Խորհրդատու, | Փաստաբան, |
| Վկայ, | Դպիր, | Դիւանադպիր, |
| Դատախազ, | Ախոյեան, | Դահիճ, |
| Գող, | Աւազակ, | Պատիժ։ |

Լուսաբանութիւն.

Օրէնքն է կարգումն բանի հրամայեցեալ յօրէնսդրէ յօգուտ հասարակաց. որով պարտաւորին ամենայն հպատակք պահել ՝ի ներքոյ և յարտաքոյ. Նմին իրի օրինազանցք արդարապէս պատժին. Օրէնքն բաժանին՝ ՝ի բնական և ՝ի դրական. առաջինն է օրէնք յաւիտենական տպաւորեալ ՝ի մարդկան ՝ի բնէ. և երկրորդն՝ որ ՝ի վերայ գայ, բաժանի յաստուածայինն և ՝ի մարդկայինն. առաջինն է գրաւոր օրէնք հին և նոր կտակարանաց. և երկրորդն կարգի յիշխանաց յօգուտ ժողովրդեան։ Օրինակ իմն՝ պաշտել զարարիչն է օրէնք ա̃ծային. այս որ ոչ պաշտէ զա̃ծ ընդդէմ գործէ ա̃ծային իրաւանց։ Պաշտպանել զկեանս և զծնունդս՝ է բնական իրաւունք. վ̃ս զի ամենայն կենդանիք ուսեալ են ՝ի բնութենէ պաշտպանել զանձինս իւրեանց. այս ապականել զանձն, կամ՝ զնա, որ կամի մեռանիլ՝ է ընդդէմ բնական իրաւանց։

## ԴԱՍ. Բ.

Հրապարակային վճիռ՝ լինին գոն

Սպանութեան, Դեղակուր առնելոյ, Հրկիզութեան,
Դաւակցութեան, Սրբապղծութեան, Անկրօնութեան,
Մատնութեան, Ձեռնթափութեան, Յարձակման.

### Լուսաբանութիւն.

Սրբապղծութիւն կամ սեղանակապտութիւն՝ է գողութիւն ինչ իրաց ՚ի նուիրեալ տեղւոջէ. որպ՝ ՚ի տաճարէ, յեկեղեցւոյ, և ՚ի մը գանձանակէ. եւս. եւ մերթ առեալ նշանակի՝ բռնաբարութիւն, ապականութիւն և ո՛ և իցէ վնաս ինչ տեղւոյ.

## ԴԱՍ. Գ.

Անուանք կամ յանցաւոր պարտելիք՝ են

Կախումն, Ստրկութիւն, Տուգանք,
Քարկոծումն, Աքսոր, Ջրահեղձոյց,
Այրումն, Նախատինք, Մահ,
Դրոշմ, Բանտ, Գան.

### Լուսաբանութիւն.

Պատիժն է զրկումն յամենայն երկրային բարեաց, ՚ի վայելչութենէ, յուրախութեանց, և յայլոց.

Դարձեալ նշանակէ՝ պատուհաս կամ վշտագին հատուցմունքն հասեալք ՚ի վերայ ուրուք յաղագս արարեալ չարագործութեանն։



# ԴՊՐՈՑ ԿԱՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Դպրոցական իրք՝ են

| | | |
|---|---|---|
| Դպրոց, | Վարժապետ, | Դասատու, |
| Աշակերտ, | Աշակերտակից, | Ուսուցանել, |
| Ուսանիլ, | Գիրք, | Երես կամ էջ, |
| Գործ, | Տետրակ, | Մակագիր, |
| Դաս, | Վարժութիւն, | Բնաբան, |
| Կանոն, | Քերթուած, | Բանաստեղծութիւն, |
| Ճառ, | Յառաջաբան, | Առասպել, |
| Առակ, | Տառ, | Թուղթ կամ նամակ, |
| Վանկ, | Բառ, | Իմաստ, |
| Առոգանութիւն, | Գրիչ, | Թանաք, |
| Ջնջելին, | Թուղթ, | Գրուած, |
| Խորան, | Գաւազան, | Ջնջիչ. |

Դպրոց՝ որ և ասի դպրատուն, դպրանոց, ուսում-
նարան, վարժարան, վարժանոց, աշակերտանոց. դըպ-
րարան, լսարան, համբակարան, աշակերտարան, հա-
մալսարան և Ճեմարան՝ է տեղին կամ տունն դպրու-
թեան, ուր ուսանին մանկունք զպրակ ուսմանն ՚ի
ներքոյ խնամոց դաստիարակի կամ մանկածուին, որոց
գործ է ակնածել մասամբ հասակի մանկանց ըստ ամ՛
ճնստակարգին, և աւանդել նոցա զուսմունս արհես
տից և մակացութեանց:

Արիստոտէլ ՚ի վերայ բարւոքի իւրոյ բարոյական
դպրատան հաստատեաց տախտակ այսպիսի գրութբ.
*՚ի գիտութիւնս՝ որոց սկզբունք են հաւանականք
և համոզականք, խնդրել զապացուցութիւն՝ է յանդըգ-
նութիւն և յիմարութիւն:||

Առակ կամ առասպելն է բան սուտ, որ կերպէ
զճշմարտութիւն. Իբր զի պատմի որպէս զճշմա-
րիտ ինչ ցուցանելով զնմանութիւնն կամ զօրինակն,
զոր ՚ի բնական և ՚ի զգալի իրաց սովորեմք ՚ի մէջ
բերել առ ՚ի ուղղել և իթ զթիւր բարս մարդկան.
Համբաւաւորն և երևելին յառասպելարկուս և
յառակախօսս՝ եղև փռիւգացին Եսոպոս.

# ԱՌԱԿ ՍԱՐԵԿԻ ԵՒ ՀԱՒՈՐՍԻ.

Հետաքրքիրն՝ ընդ այլոց բան,
զիւր կործանումն՝ ածէ ինքեան.

Հաւորս ումն առեալ զհրացան իւր, և գնայ որսալ

զթռչունս. տեսեալ նր 'ի կատար ծառոյ մինչ զսա-
րեակ մի. ուղղեալ զհրայանս 'ի նպատակն՝ մերձե-
նայր մեղմաբար. և այն մինչ արձակել կամէր զհրա-
յանն հայելով միշտ 'ի վեր 'ի սարեակն, յանկար-
ծակի եդ զոտն իւր 'ի վերայ իժի միոյ, որ նեղեալ
'ի ցաւոյն խայթեաց զհաւորսն և արար զնա թիւ-
նալից. որ 'ի մեռանիլ իւրում ասաց. աւաղ ինձ. զի 'ի
ջանալ իմ սպանանել զթռչունս՝ ես ինքնին մեռանիմ.

Դիտումն.

Մի՛ հետաքննեք՝ զարարս օտարին,
խորատէ առակս՝ կալ զգոյշ յանձին.
Քանզի որոգայթ՝ լարեալ խարդախին,
կախարդէ զքեզ՝ ձգել 'ի նմին.
Զի՞նչ օգուտ գործէ՝ գիտել զընկերին,
երբ ոչինչ գիտէ՝ զի՞նչ ունի յանձին.
Լաւ է հետամուտ՝ ելանել ինքեան,
քննել զիւր գնացս՝ ուղղել զնոսին.

# ԱՌԱԿ ԳՈՂՈՑ ԵՒ ՇԱՆ.

Եթէ կյես՝ հաւատարիմ,
հայ նենգողայ՝ քեզ ոչ համիմն.

Գող մի եմուտ 'ի տուն ումեմն վասն գողութեան. շունն որ արթնութեամբ հսկէր անդ սկսաւ հաչել և յարձակիլ 'ի վերայ նորա. իսկ գողն առ 'ի հան-

դարտել զշունն եւս նմա սպասու մի հայի. յորմէ հրաժարեալ շանն՝ ասէ՝ ոչ կամիմ զհաց քո զի եթէ առնից զայդ՝ գողասցես դու զամենայն ինչ որք 'ի տան տեառն իմեն։

Դիտումն.

Արդ ո՛ւր են ծառայք՝ պահապան մանկտին,
խոհեմ մտերիմ՝՝ շան հետեւեային.
Տե՛ս զխա՛րդ մերժէ՝ կաշառն նենգողին,
յանարատ պահել զիւր գանձ բնածին.
Քանի՛ք անարգանք՝ նենգօղ ծառային,
երբ քան զօրինակն՝ վատթար գտանի.
Ընտանին 'ի սէր տեառն՝ ինքնագրաւ մղի,
բանականն անփոյթ՝ խորդայ 'ի մահճին։

## ԱՌԱԿ ՅՂՈՒ ԵՒ ՄԿԱՆ.

Որչափ անարգ՝ է փանաքին,
գործել կարէ՝ վնաս մեծին.

Ցաւուր միում խածան մուկն զոտն փղու, եւ փախեաւ. վրդովեալ փղուն 'ի բարկութիւն՝ տայր նմա թշնամանս զայրագին դիմօք եւ շարժմամբ եղջերացն. Իսկ մուկն ծիծաղելով զնովաւ, ասէր. դու զօրաւոր ես եւ կորովի արդարեւ, այլ 'ի վերայ այդր ամի մի փքանար յանձին քում, զի գտանի չնչին մուկն ինչ, որ վնասել կարէ զքեզ.

Գիտումն.

Պարծանք անոտի՝ վէս մեծամըտին,
զի՛արդ ՚ի փոքուէ՝ նանրայս դիւրին.
Զի որ վեհ դնէ՝ զինքն ամենեցուն,
նա և ՚ի փոքունց՝ ընկճի հեշտագոյն.
Քանի՛ք ինքնապանծ՝ զանձինըս եդին,
՚ի կշիռ վեհից՝ գիւցազանց կարգին.
Բայց ՚ի դոյզն առԹէ՝ սահճել ՚ի խոնարհ,
Ծանեն Թէ զի՞նչ են՝ և զի՞նչ կար անձին.

## ԱՌԱԿ ԽՈՐՀՐԴՈՅՆ ՄԿԱՆՑ.

Ժողովլ վատայ՝ որչափ խորհի,
ոչինչ բարի՝ վճռել ունի.

Տեսեալ մկանց Թէ բոլանդակ կործանումն իւրեանց յառաջ գայր ՚ի կատուէ. վնյ խորհուրդ արարին ՚ի միջի իւրեանց զի կապեսցեն զբոժոժ մի ՚ի պարանոց նորա. զի լսելի լիցի ձայնն ՚ի նախազգուշուԹի իւրեանց. Զայս առաջադրուԹի Թէ և խոհեմուԹբ արարին, այլ ամենեքեան երկեան անդէն և անդ կապել զբոժոժն զպարանոցաւ կատուին. և վնկ նանրայս յառաջադրուԹիւն և խորհուրդ նոցա եղև անպտուղ.

Գիտումն.

Առակս է տխմար՝ ժողովոյ վատայ,
որք նախին վճռել՝ չան հատարակայ.

Բայց զիա՞րդ հնար՝ այնչ ժողովականաց
խորհիլ կատարել՝ զօգտակարն ինքեանց.
Զի՞նչ օգուտ խորհիլ՝ բազմատանց մտաց,
և թողուլ անգործ՝ զպիտանին խորհած.
Որ ոչ աշխատի՝ յօգուտ ընկերաց,
ոչինչ վճարէ՝ զուրկ յօգտակարաց.

## ԶՐՈՅՑ ՈՒՂՏՈՒ ԵՒ ԴԻՈՍԻ.

Այր գանգատող՝ հաշէ մաշի,
որչափ խնդրէ՝ միշտ վնասի.

Յաւէրժ յոյժ ուղտն յանձն իւր և տրտնջէր՝ տեսանելով զեզինս պանծալի իմն եղանակաւ ընթանալ երկոքումբք եղջերօք, և զինքն անզէն նշաւակ այլոց կենդանեաց. Վ՛ոյ առ ՚ի լնուլ զկամս իւր չոքա-յաւուր միում առ Դիոս, յն առ Արամազդ, և խնդրեաց ՚ի նմանէ պարգևել ինքեան զեղջիւրս. զորոյ զանմտութիւն ծիծաղեցաւ նախ Դիոս. բայց վն ոչ անտես առնելոյ զնորուն զաղերս՝ յապաւեաց զականջս նր.

Դիտումն.

Շատք ըղձու նման՝ տրտնջան թէ հի՞մ,
ոչ առնէ աստուած՝ զայս ինչ զոր կամիմ.
Չգիտեն զկարգ՝ ամենիմաստին,
որ չափով կշռէ՝ զչափ բոլորին.
Զի՞ քեզ ո՞վ յիմար՝ զի՞ ձայնես ուժգին,

կամի՞ս փոփոխել՝ զհարգ անբանին։
Դու կաս ես՝ անարգ, և որդն չնչին,
իսկ նա տնտեսիչ՝ զեղելոյ բարին։

# ԱՌԱԿ ՓՈՂԱՀԱՐԻ ԵՒ ԿԱԼԱՆԱՒՈՐԱՑ

Որք գրգռեն՝ զընկերըն ՚ի չար,
նոյին պատժի՝ չարեօք խոյպան։

Փողահար ոմն, որ հարկանէր զփող ՚ի պատերազմի՝ կալեալ եղև ՚ի թշնամեաց. իբրև կամէին սպանանել զնա կալանաւորքն, ներեսջիք անմեղութե իմում ասէ ցնոսա փողահարըն. զի զա̃մ աւուրս կենաց իմոց ամենևին ոչ սպանի ես զոք, և չունիմ ես զզէն ինչ բաց ՚ի փողոյ աստի։ Պատասխանի ետուն նոքա, թէ վասն այդր իսկ լինիս արժանի մահու. զի թէև ոչ սպանես զոք, այլ գրգռիչ եղեր զայլս ՚ի պատերազմ։

Դիտումն.

Այս են հատուցմունք՝ խեռ պատանեկայ,
որ գրգռեն ՚ի չար՝ զընկեր բարեկեաց.
Ոչ գիտեն զերկնից՝ պատիժ պատուհաս,
դանձեալ կամ նոցա՝ ՚ի մահու արկած։
Զի՞նչ ունիս տալ բան՝ յայն սահման չարէից,
զի՞նչ վն̃ անձին քո՝ և զի՞նչ՝ զընկերաց.
Մի՛ սուլեր զփող՝ չարին գրգանաց,
զի մի՛ կորիցես՝ ՚ի սուր թշնամեաց։

# ԱՌԱԿ ԽԱԶԱՓԱՌԻ ԵՒ ԻՒՐ ՄԱՆԿԱՆ։

Խաչափառն յանդիմանէր զմանուկ իւր խոտորագնացս. ասէ, որդեակ՝ չգնաս ուղիղ. և նա ասէ. հայր՝
գնամ ուղղէս ըստ գնալոյդ պետենեմ։

Գիտումն.

Ծնողին պարտ է լինել առաքինի, եթէ կամի՝ զի ծնցին նմա առաքինի որդիք. զի որովհետև որդին է պատկեր իւրոյ հօրն, հրէշ իմն լինի բնութեան՝ եթէ որդին նմանեսցի հօր ըստ կերպարանացն և ոչ ըստ բարուց։

---

Գիրք կամ տառք են նշանագիրք, որք յօդին ընդ միմեանս և հնչեալ ընդ նմ հնչեն զձայն կենդանի։

Գտիչ հայկական գրոց՝ էր

## ՍՈՒՐԲՆ ՄԵՍՐՈՊ։

Լուսաբանութիւն.

Սուրբն Մեսրոպ էր որդի վարդանայ ուրումն բարեպաշտի ՝ի գաւառէն տարօնոյ՝ ՝ի Հացեկաց գեղջէ։ Սա վարժեալ ՝ի Հելլենական դպրութիւնս եւս և յարտաքին իմաստութիւնս՝ աշակերտեցաւ սրբոյն Ներսեսի. և ապա միայնացեալ յանապատս՝ կեայր երկնային քաղաքավարութեամբ։ Լուեալ սորա զգործս սրբոյն սահակայ՝ եկն առ նա, և առեալ ՝ի նմանէ

զիշխանութիւն վարդապետութեանն՝ նորին հրամանաւ սկսաւ քարոզել ընդ ամենայն տեղիս. Եւ այս միաբանեալ ընդ սրբոյն ջանային յօրինել զգիրս Հայոց. զի յայնժամ չունէին Հայք զյատուկ գիրս, այլ զասոր գրով վարէին. Եւ զի չէր նոցա կարելի մարդկային ջանիւք հնարել՝ յաղօթս եղեն ապաստան. Առեալ այս սրբոյն մեսրոպայ զոմանս յաշակերտաց՝ էջ ՚ի միջագետս, և անտի ՚ի սամոսատ. և անդ ՚ի կալ նորա յաղօթս ընկալաւ յայ վերին յայտնութիւն զոր խնդրէր. և յարուցեալ յաղօթիցն՝ յօրինեաց ըստ ամ՛ կատարելութեամբ զամ՛ նշանագիրս մեր. և վաղվաղակի ձեռն էարկ թարգմանել ՚ի յունաց զգիրս առակացն սողոմոնի իբրև զառհաւատչեայ ինչ. առ որ եղեն ձեռնտու և երկու աշակերտք նորա, յովհան եկեղեցացի, և յովսէփ պաղնացի. Այս գիւտ գրոյն եղև յամի տեառն 406. ՚ի 17 ամի կաթուղիկոսութեան սրբոյն սահակայ. և ՚ի 15 ամի թագաւորութեան վռամշապհոյ. Նոյնպէս առեղծ սուրբն մեսրոպ և վրաց և աղուանից գիրս ըստ լեզուի նոցա.

Թուղթ՝ որ և ասի գիր, նամակ կամ տոմսակ՝ որոյ գրողն կոչի՝ նամակագիր, գրիչ, գրագիր՝ է բան գրաւորական՝ որով գիտեմք խօսել ընդ հեռաւորս. Իբրև զի ՚ի մօտոյ՝ ոչ գոլով կարօտ գրոյ, խօսիմք լեզուաւ. և ՚ի հեռուստ՝ չկարացեալ խօսել լեզուաւ, խօսիմք գրչաւ. Տեսչութիւնն եւ մարդկան քաղքաւ և արուեստ գրութեան. քաղքաւուիլ ՚ի մա-

տոյ. և ՚ի հեռաստանէ կենդանակցել ընդ ամ̃ Յի
հաստուցեալ զխօսս՝ ուր ոչ հասանէ ձայն։

## ԹՈՒՂԹ ԱԲԳԱՐՈՒ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ·

*Աբգար Արշամայ՝ իշխան Յի՝ առ Յիսուս փրկիչ և բարերար, որ երևեցար յաշխարհի Երուսաղեմացւոց. ողջոյն։ Լուեալ է իմ վասն քո, և վասն բժշկութեանց՝ որ լինին ՚ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի. տաս դու կուրաց տեսանել, և կաղաց գնալ. և զբորոտս սրբես, և զայսս պղծս և զդևս հանես. և որ միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդութեամբք՝ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես։ Եւ երբ լուայ վասն քո զայս ամ̃ն եդի ՚ի մտի իմում մի յերկուց ասելի. կամ՝ թէ դու ա̃ծ իցես իջեալ յերկնից, և գործես զայդ, կամ թէ որդի իցես դու ա̃յ, և զայդ առնես։ Արդ՝ վասն այսորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս. և բժշկեսցես ըզհիւանդութիւնս՝ զոր ունիմ ես։ Նաև լուայ, զի Հրեայքն տրտնջեն զքէն, և կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս||։

## ՊԱՏԱՍԽԱՆԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌ ԱԲԳԱՐ·

՚Ի ձեռն Թովմայի առաքելոյն.

*Երանի իցէ այնմ, որ հաւատայ յիս, երբ ոչ իցէ տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս.

զի որք տեսանէինն զիս, ոչ հաւատային յիս. և որք ոչն տեսանեն, նոքա հաւատասցեն, և կեցցեն։ Իսկ վասն այնր, զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամ ինչ, վասն որոյ առաքեցայ եմ. և իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն՝ որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց. զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ՝ և որոց ընդ քեզ են, շնորհեսցէ ||։

## ԹՈՒՂԹ. Բ. ՈՒՐԱԽԱԿՑՈՒԹԵԱՆ։

[illegible]

Քաղցր են ամենեցուն հայրենիք իւրեանց. և այնչափ՝ մինչև համարձակիմ ասել, եթէ սակաւք այն են 'ի քաղցրութենէ անտի աշխարհին, որ կարասցեն հաւասարիլ նմա. քանզի՝ [illegible]։ Արդ՝ զայս անպայման քաղցրութիւն գիտեմ՝ զի ընկալար սիրելի իմ 'ի սիրտ քո, դառնալովդ յաջողութեամբ և քաջողջութեամբ 'ի քոյ հայրենիսդ. ընդ այս ուրախութեան, և խնդակից լինիմ բարեկամութեամբ մեծի ցնծութեանդ, որով ցնծաս դու արդ 'ի տեսանելն զորդիս և զընտանիս քո. քանզի գիտեմ՝ եթէ համապազօրեայ տարփմամբ այսոցիկ աւուրց անձկալեալ մնայիր, յորժամ՝ օտարացեալն էիր 'ի հայրենի բնակութենէդ. և արդ՝ գտեր, որում բաղ-

Ձայնը. գտի և ես՝ որում՚ յանկայի. վկայեմ սիրոյդ՝ եթէ ցորչափ անմահ էիր դու ՚ի տեսութէ Հայրենեայդ և ես ինքն անմահ էի յանդորր կենաց, Հանապազ Հոգացեալ վասն քո՝ իբրև արդարև մտերիմ. և ո՞չ դուդ կարօղ ես և ցանկաս ասել այժմ ընդ իմաստնոյն՝ այնմիկ Հռովմայեցւոյ, եթէ Ո՛ հրաշալի այն օր՝ ինչ անմահական չնաշխարհ ինչ ընկերութեան յերկնային դասուց ՚ի Հայրենիս զինոյն և ես արդ մարթիմ և պարտիմ ասել յորժամ՝ դարձայ ՚ի Հայրենիս. Մաղթեմ յա՛յ՝ զի անդորրական կենօք Հանգուցեալ ՚ի Հայրենի երկրիդ, մի՛ ևս դարձցիս յօտարութի, զի և զիս մի՛ օտարացուցես յուրախութէ սրտի իմմէ, որում ինդամ՝ ՚ի վերայ խաղաղացեալ կենացդ, իբրև ՚ի վերայ իմոյն՝ և առաւել։

Պատասխանի վերոյիշեալ Ծղերոյն.

Անդորրութի կենաց և քաղցրութի սրտի յաւելաւ յիս, յորժամ զերծեալ յօտար աշխարհայ՝ իբրև ՚ի մրրկեալ ծովէ, ժամանեցի խաղաղութեամբ ՚ի նաւահանգիստ իմոյ Հայրենեաց. Այլ Ճշմարտութի վկայեմ քեզ ո՛ արժանապատիւ սիրելի, եթէ զանվթարն քաղցրութի ընկալայ ՚ի բանից այտի սիրալիր Թղթոյ մտերմութեդ. իբրև զի որչափ ինչ Ճնայորդք դառնութե սրտի էին յօտարութէ անտի իմմէ, որ ընդ իս եկին մինչև ՚ի Հայրենիս, զայն ամ իսպառ փարատեցին յինէն քաղցրութէ բանք նամակիդ՝ որպէս արդարև ննուռդ մնայ Ճշմարիտ բարեկամի, որ ընդ Հանգիստ իմ Հանգչիս, և ընդ տառապանս իմ տառապիս. որով և գեղեցիկս կեն-

դամագրեմ 'ի քեզ զՀին առածն Xչ մարիա, եթէ Բա-
ըէնեմոյ՝ հաաարաւոյ է ամինը· այս քո չՃմարիտ սիրոյ տիպ
զոր և 'ի վաղուց հետէ գիտէի. և լուայ արդ աներկ-
բայ մտօք։ Արդ՝ եթէ քաղցրունի է բերկրականն բնա-
կել խաղաղութ 'ի Հայրենիս, որպէս գրես և որպէս
վկայեմ և ես այժմ՛՛ առեալ զփորձ եթէ զդառնու-
թիւն օտարութեան և եթէ զքաղցրութիւն Հայրենեացն, մաղթեմ՝
զառաջնոյն ոչ երբեք առնուլ քեզ զփորձ. և յերկ-
րորդն՝ յորում վայելեմ այժմ, փափաքեմ վայելել
քեզ յամ 'ի կեանս քո՝ ողջ և յաւուր յայսմիկ. քանզի
և ինձ՝ ըստ հռովմայեցւոյն այնորիկ բանի՝ անմահա-
կան իմն կեանս համարիմ զաւուրսն զայնոսիկ՝ յորս
Ծնանիցես դու երջանկացեալ կենօք 'ի քոյ Հայրենիսդ։

# ԹՈՒՂԹՔ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Բարեկամ ընդհանուր ծառայն նոր տարւոյ·

Զերախայրիս փափկանաց սրտի իմոյ 'ի սմին ամի՝ քեզ
նուիրեմ յառաջին աւուր սորա մտերիմ իմ և բարե-
կամ. մաղթելով քեզ աւուրս երկայնս և երջանկա-
ւէտս. այլ երջանկաւէտ ասելով՝ առաւելագոյն զայն
կամիմ ասել, որ հոգեկանին վիճակեալ է մասին՝ առա-
քինի կարգաց և քաղցրութեան ներքին մարդոյս. որոյ սի-
րող առաւել քան զամ ճանաչեմ զմտերմութիդ։ Քան-
զի գիտես իսկ քաջ, եթէ մարմնոյ բարեմասնութիւնք
այնչափ 'ի դուզնաքեայս են համարի, մինչ զի չէ իսկ

քրժան՝ եթէ սիրտ մեր՝ որ մտերմացեալ է վն վեհա
գունին բարւոյ, և ընտանեացեալ տարփմամբ հոգի ՚ի
գիտս անեզրական բարեմանութեան, ՚ի խնդիր ելցէ
նոցա։ Ընդանեն ա՞նք. և փախչան կենացս՝ որչափ յեր
կարաձգի, այնչափ համառօտի. և որչափ յամր գայ,
այնչափ արագէ։ Սակայն և ոչ վն այսորիկ մտերիմ
իմ դադարեսցուք մաղթել քեզ ՚ի տեառնէ զայն սա-
փորրացեալ կեանս մարմնոյ, յորում կարիցեմք ծառայ-
ել այ խաղաղութե հոգւոյ. զայն երկրաւոր խնդութե
սրտի, որ պտուղ է բարւոք և առաքինի մտացն խղճ
մտի. և զայն ամ բարիս և քաղցրութի աստի կենացս,
որովք առաւելապէս յորդեսցիս ՚ի սէր անտի բարեաց։
քանզի համոզեալ գիտեմ, եթէ բարւոք վարիս կեն
ցաղականօքս, որպէս ՚ի շինութի ամ մարդկան, նոյն-
պէս և ՚ի ձեռս բերել նոքիմբք զյաւիտենականսն։

## Պատասխանի վերոյիշեալ թղթոյն։

Քաջ իսկ ՚ի վը հասեալ եմ մտերիմ սիրոյդ, եթէ
ընդունելեն քո խնդրուածք բարեաց վն իմ. իբրև զի
և ես ընդունել քաղեմ զպտուղ աղօթից քոց յերջանիկս
ւէտ աւուրս կենաց իմոց։ Ընդ այնոսիկ խնդրուածս
ընկալայ և զայսր նամակի քո իղձս բարեաց վն իմ
ամ տարփմամբ և շնորհակալութե, որովք խնդրես ինձ
երջանիկ անալ գերագոյն երջանկութեն մասամբք՝ անդէն
՚ի սկզբան տարւոյս։ Գեղեցիկս ցուցանես ինձ սիրե
լի իմ, եթէ կեանք մեր անցանեն իբրև ստուեր և
իբրև յանուրջս. հաստատեալ գիտեմ՝ եթէ յամ

վայրկենի առանց խնամալոյ դէմ եդեալ գնամք. առ յաւիտենականութիւն. և թէ՝ մահ բարեկամացն՝ հանապազօր զմերն մեզ աղդ առնէ մահ. ապա յանկանեմ՝ յանկանս մեծ, եթէ յետ այսչափ գեղեցիկ վարդապետութե և անվրէպ ուսմանց վարժելոյ իմ՝ի գիտութի կենաց և մահու, ոչ զհետ պնդիմ տալ զքո տեսլծուածս բոլորանուէր սահեծողին եայ. Այլ փոխարէն բարեմաղթութեց մտերիմ սիրոյդ՝ մաղթեմ և ես քեզ նովին սիրով կեանս ձիգս առաւելեալ գործովք բարութե, 'ի պատճառս քեզ մեծաց վարձուց 'ի կեան անմահութե. 'ի վերջէ աղաչեմ զմտերմութիւնդ. մի դադարեսցիս տալել տալ նամակիդ գրութե առնել ընդ մեզ ծանօթս վիճակի անձինդ. քանզի գիտես՝ եթէ չիք ինչ այնպէս խնդրելի բարեկամաց, քան լուր ընբարեկամաց.

## Որդին շնորհաւորէ ծնողացն զնոր տարի.

Յերախտագիտութեն պարտուց այնչափ ուժգինս բերիմ անհնարափափաքելի ծնողք իմ, մինչև պարտ վարկանիմ անհրաժեշտ՝ ոչ յայլ ինչ ծախել զառաջին վայրկեանս նորոյ տարւոյս. բայց 'ի ցուցանել զորդիական պարտս իմ առ ձեզ. Ո՛չ բաւեմ բանիւք բացայայտել՝ որչափ ինչ միանգամ իղձ փափաքանաց առաւելորդ ծնողական ունիմ՝ 'ի սրտի, և շնորհապարտ ճանաչութեն անփոխարինելի երախտեաց ձերոց՝ 'ի միտս. Յանդգնիմ սակայն ողջունել ծնողք իմ, եթէ ոչ երբեք որդեօք գտջիք զիս անարժան մեծի սիրոյ ձերոյ ու-

րով սիրէքն զիս. իբրև զի հանապազ և ես ինքն զում գործեալ եմ ոգւով չափ կատարել զայն ամ՝ զոր առաւել գիտեմ հաճոյական և ախորժելի ձեզ։ Ապաքէն ոչ եթէ զի հասեալ ժամանեցայք ՚ի սկիզբն տարւոյս, վն այնորիկ ստիպիմ տալ ձեզ զայս վկայութիւն որդիապարտ երախտագիտութեան. քանզի օրէնք յաւիտենական անաղարտելի խոստովանիմ զսա, զոր ոչ ժամանակ ինչ աւուրց և կամ փոփոխումն տարւոյ մարթի փոխել յիս. ոչ յաւելուլ և ոչ նուազեցուցանել։ Ապա զսկիզբն տարւոյս առնում ինձ միայն իբրև յաջողագիպութիւն ինձ ժամանակի առ ՚ի հաւատարմացուցանել ծնողական բարձրութեան ձերում, եթէ չէք ինչ այնպիսի որ զիս կարասցէ բեկել առ ՚ի ձէնջ որ կապեալս եմ ընդ ձեզ անլուծելի կապանօք պարտուց և սիրոյ. խնդրումս բարեաց առ ՚ի սրտէ խնդրեմ միշտ յաջ վն ձեր. այլ յառնելն զայս՝ այն չափ ինչ օգուտ գիտեմ ձգել և յիս, մինչ զի երկրին չիմ ամենասիրելի ծնողք. եթէ չփութասջիք զբնաւորապէս միտումնս՝ ընդ որդիական պարտուցս։ Սակայն ՚ի վր այսր ամի՝ միայն ձգեալ ՚ի շնորհապարտ սրտէ և ՚ի ծնողական ձեր սիրոյ՝ մաղթեմ վն ձեր երկայնաւուրս ամ բարեմաղթութեք լցեալս. յորս և ես ճգնիմ առնել յաւելուած ինն բարեաց ըստ կարի՝ որդիապարտ իմով յարգանօք և անթերի հնազանդութեամբ, որում և պարտական զանձն դաւանիմ յամենայն ընթացս կենաց։

Որչափ ինչ միանգամ խորհուրդս բարեաց եւ կարծիս քաջալերութեան ունէաք զսիրասուն որդւոյդ, այն ամ պնդեալ հաստատեցաւ ՚ի միտս մեր ՚ի գեղեցիկ բանից չնորհագիծ նամակիդ երախտագիտութեան. Մնամք ակնկալեալ մեծապէս յուսով, եթէ նոյն իսկ խնդութիւն՝ զոր մեք խնդամք վն քո ՚ի սրտի, տացէ քեզ քաջալերս բարեաց յաւերժանալ ՚ի նոյն բարեշաւիղ ընթացս կենաց, զորմէ բուռն հարեալ ես ընդ հովանեաւ խնամոց մն եւ մերոյ ծնողական օրհնութե. Խնդրուածք քո վասն մերոյ բարեմաղթութեց՝ առաւելապէս հաճութբ ախորժելի են մեզ քան զամ բարեմաղթութիւն՝ որոց մեքս եմք վիճակեալ եւ կամ ունիցիմք վիճակիլ. Իբրեւ զի յորդորակալ սրտէ ճանաչեմք յառաջ եկեալ դքո վն մեր խնդրուածս, քան ՚ի սովորութէ կամ յայլ ինչ պատճառաց. Եւ եթէ խնդրեսցուք եւ մեք յայլ՝ զի լսելի լիցին խնդրուածք քո, ՚ի մեծաշահ օգուտ եղիցի այդ սիրասնունդ որդւոյդ. քանզի յայնժամ տեսցես առ ՚ի մէնջ առաւելապէս ցոյցս ծնողական խանդաղակաթ սիրոյ մերոյ ՚ի վերայ քո.

## ԹՈՒՂԹՔ ՑԱՒԱԿՑՈՒԹԵԱՆ.

Ցաւակցութիւն ուրուք վն մահու իւր յարազատութեան կամ զաւակաց.

Ցաւ է ինձ անմխիթար. զի հանդերձեալ եմ այսօր ոչ այնչափ բերկրալի քեզ ՚ի գրութի նամակի, որչափ

պատուաստե՜լ լինդ տառապանս քո. յոյժ ինձ անել զգու-
զեաս սրտի քո. և իբրև թէ 'ի հեռուստ աստի
լսելի առնել ինձ զձայն հառաչանաց քոց. և անձն
յանդիման նկարել զարտասուա՛ց դէմս քո. Ցա-
ւոյք անհնարին վարակեալ եմ ես արդ, քանզի լու-
լու՛այ տխրադին 'ի ցաւալից նամակէդ. և ես արդ
բռնադատիմ զողորմ ձայն լալոյ իմոյ լսելի առնել
քեզ Թղթով՝ որ ո՛չ այնչափ մելանաւ գրեցաւ, որչափ
արտասուօք. զի գիտասցես՝ եթէ որպէս խնդութեանց
ցորդ էի բաժանորդ, նոյն և այժմ ցաւոց քոց հա-
ղորդ. այլ սակայն որպէս յառաջնումն յաւելուի ըղ-
խնդութիդ իմովս խնդակցութե՛, նոյնպէս և յերկրոր-
դումն նուազեցուցից զցաւդ իմովք ցաւակցութ՛. և
որչափ եղեց կարեկից, այնչափ և վշտացդ դիւրինչ
Եթէ էր հնար, և զբովանդակ տրտմութիւնդ յանձն իմ
ձգէի. զի բովանդակ ունայնացեալ առ 'ի նմանէ,
զտանէիր զուրախութիւն կորուսեալ։ Այլ դու 'ի վե-
րայ ամենայնի խնամանացին 'ի վիշտս քո բանիւքս՝
զոր 'ի սրտոյ հաղորդակից առնեմ. եթէ ակամայ տա-
նիս վշտացդ՝ ծանրաբեռն լինի. և եթէ սիրով՝ մխի-
թարութի մեծ. արա ուրեմն՝ զհարկաւորն արա՛ քեզ
կամաւոր. զանխուսափելին՝ արա՛ քեզ հաճոյական.
Կնիք բանիս՝ ջանացայց և ես որչափ կարեմ՝ զայդ ձա-
խորդութի իմովս նպաստիւք բառնալ 'ի քէն՝ որպէս
յարդարև սիրելւոյ. սակայն եթէ տկարացայց 'ի սմա
կալցի քեզ զօրավիգն ես զօրաւորագոյն՝ զար 'ի վե-
րէ պաղատանս իմ՝ առ հայրն գթութեց առ ած՝ առ-
նուլ 'ի սիրելւոյդ զալէտդ տարակուսանաց՝ որպէս

## զիարդ և հաճոյից է ածային բարերար կամացն։

### Պատասխանի վերոյիշեալ խնդրոյն

Որպէս ոգին հրաժարել 'ի հրաւէր ձայնի, այնպէս և հաստատու-
թեամբ հոգւոյ հաստատեմ լինի 'ի դատն ճշմարտին. ասէր ոմն
յիմաստնոց յաղագս Ճշմարիտ բարեկամութե. զոր և
'ի քեզ ինձ աւարտեալ տեսանեմ, որ վեհագոյն ես
'ի Ճշմարիտ բարեկամս, և մտերմագոյն 'ի մտերիմս։
Խոստովանիմ արդ յանձնենք մտայ Ճշմարիտ և անկեղծ
սիրոյ մտերիմ անձինդ, զի մտերմութեդ արտասու-
գիր թղթոյ կամաց'յան արտասուք յաւագին աչաց
և սփոփանս մեծ մատուցան կարեվէր խոցելոյս 'ի
դառն ձախորդութե` որ մինչեւ 'ի խաղաղութեան
գնայի` յանկարծ սասանեցոյց զիմ ոսկերս իմ։ Մեծ
է ինձ` զի ունիմ բարեկամ` որ զվիշտս բարեկամին`
անձին իւրում համարի. այս է ինձ միայն մխիթար
բարեաց 'ի տրտմութեա, զի անկեղծ բարեկամի վիճա-
կեալ եմ. քանզի գփաշամիտ և զՃշմարիտ բարեկամս
սուգ և տրտմութիք բարեկամաց լինորեն։ Այլ վեր
ջին ապաւէն 'ի դառն նեղութեա գեղեցիկս յուսա
ցես ինձ զառ 'ի խորոց սրտէ աղօթս քո առ հայրն
մխիթարութեց. մաղթեմ և ես զի խոնարհեսցի ունկն
ողորմածին 'ի խնդրուածս քո. այս թէ ոչ կամ ես
հպատակ ածային կամացն` որ անքննելին դատաստանա-
յանի զօգուտն մեր խնդրէ. ժուժեմ համբերատար
արտիւ, մինչեւ ողորմութի իւրոյ հանգէ յուրախու-
թիւն զտրտմութիւնս իմ։

# ԹՈՒՂԹՔ ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ։

[illegible]

Ի կեանս աշխարհիս չիք ինչ՝ որ այնպէս գթասցէ սրտամտութեանն զսիրելիս, որպէս մահուամբ անջատումն ՚ի սիրելեաց։ Գիտեմք զայս ապաքէն հաստատութեամբ զփորձ առեալ. զինչպայս գեղեցիկ եւս ընտրութք մեզ արժան իցէ առնել. թերեւս արտասուել դառնապէս խոցառ մինչեւ ՚ի խաւարումն լուսոյ աչաց. ո՛չ է այս ընտրութի գեղեցիկ՝ զոր միտք խորհըրդական թելադրեն մարդոյ. իբրեւ զի որչափ գիտեմք՝ եթէ սուգ է անհնարին մահ սիրելեաց, նոյնչափ եւ գիտեմք հաւատոյ գիտութեամբ, եթէ հարկ է մահ սիրելեաց. [illegible] ասէ ը ամն իմաստասէր։ Սոկրատէս՝ յասել ումանց՝ թէ, Ըթենացիք զվճիռ մահու խորհին ՚ի վերայ քո, ասէ. [illegible] մինչեւ գեղեցիկս կնքել. եւ իմաստ նոյն հռոմայեցւոյ եթէ՝ [illegible]։ Այպա ըստ անխուսափելի հարկաւորն յաւիտ խապառամնութեան չէ՛ ՚ի դէպ. յաւիտ չափով՝ այն օրէնք են բնութե։ Եթէ զմեռանելն սիրելւոյ ո՛չ կամէաք, պարտէր նմա ո՛չ ծնանիլ. եւ եթէ ծնաւ՝ մահկանացու ծընաւ, մահկանացու եկեաց, եւ իբրեւ մահկանացու վախճանեցաւ։ Ընաքսագորաս իմաստասէր ՚ի լսել զմահ որդւոյն իւրոյ, ասէ. [illegible]։ Իսկ եթէ արժան իցէ ասել իմաստ թէ անձին պէշման

րհան, ոչ այնչափ ցաւեսցիս, որչափ մխիթարեսցիս. եթէ սիրելիդ քո այդ ոչ վախճանէր 'ի կենաց աստի, անեղծական կենացն զի՞արդ երբեք կարէր հասանել ըստ արժանեաց առաքինի անձինն. և այն զի՝ մեռանդոցն և երջանիկ մահուամբ, և 'ի բազմադէմ վըշտաց և 'ի բիւրուց պատահարաց ցաւալի կենացս մնաց անխռով. Նախանձայիք իմաստուն ժողովուրդ 'ի Հընումն՝ լային զծնեալսն, և երանէին զմեռեալս. Իբրևզի որպէս ասէին իմաստասէրք. Պարտ է մեզ ժողովելոց 'ի վերայ ծննդելոցն ողբալ՝ զանզի 'ի չարն ընթանան. իսկ 'ի վերայ վախճանելոցն ուրախ լինել. զանզի 'ի չարեաց ազատեցան: 'Ի վե՞ր այսր՝ բազմաց սիրելիք բազմապատիկ դժնդակ մահուամբք ելին յաշխարհէ. իսկ քոյդ խաղաղական և նախանձելի մահուամբ առաջի քո: Զայսոսիկ քեզ յուշ առնեմ ո՞վ մեծրիմ անձն, քանզի կամիմ՝ եթէ յետ այսչափ արտասուաց առաջնորդական միտք լիցին քեզ կառավարք, և մի մեղկացեալ կիրք. մի տրտմեսցիս յանչափս ընդ մահն՝ որ եղև սիրելւոյդ վերջումն 'ի չարեաց. ցնծասցես ընդ մահն՝ որ եղև նմա սկիզբն անմահութեան.

Պատասխանի վերոյիշեալ թղթոյն.

Զոր միանգամ գրեցեր մտերմութեան սիրոյ, վկայեմ՝ եթէ 'ի լրումն իմաստութեան և երկիւղածութեան անձինդ խօսեցար. վկայեմ առաջելոյդ՝ եթէ գեղեցիկ են և իրաւացի. Ցանկայի եթէ այժմէն իսկ 'ի մօտոյ բանք Ճշմարտախօսք մտերիմ անձինդ գործէին յետ զայն

սփոփանս յաւուրց, զոր ապա երկարութի ժամանակաց ու-
նի կատարել. այլ Թողցես ինձ՝ եթէ ոչ վաղ յամա-
քեսցին արտասուք. քանզի սուգ է սիրելեաց, որչափ
հզօր է նոցայն սէր, այնչափ և ցաւն տևական։ Այլ
տակայն եթէ ոչ էր առեալ մտերմութեանդ 'ի գրել
առ իս 'ի զուարթարար բանիցդ, թերևս՝ որպէս մեռ-
եալ էի 'ի սրտի ընդ մահ սիրելւոյն, ոչ էր իմ ապառ
կայեալ և 'ի մարմնոյ մահուանէ. ոչ բաւեմ՝ բանիւք
շնորհս ունել սիրոյդ նովին հաւատարութ՝ որով ճա
նաչեմ զնոյն 'ի սրտի. վկայեմ՝ յանձնենգ մեռոյ՝ եթէ
(թէպէտ և ոչ վաղվաղակի յամաքեսցին արտասուք,)
մխիթարեցայ ճշմարտապէս և մխիթարիմ՝ 'ի քեն 'ի
սիրտ և 'ի հոգի. այսու հետև որպէս աչօք մարմնոյ
տեսանեմ զմեռեալն իմ 'ի քուն մահու մարմնով. նոյն
պէս և աչօք հաւատոյ տեսանեմ զնա կենդանի հոգ-
ւով, և 'ի մեծի աւուրն՝ դարձեալ տեսից զնա կեն-
դանի և մարմնով։ Աղաչեմ զմտերմութիդ. որպէս
փոյթ կալար մխիթար ինձ մատուցանել ընդ մահն
այլոյ, փոյթ տարցիս և զն̅ իմ աղօթիւք առ տէր՝
հոգալ ինձ զմահ իմ անտագնապ կարգօք և արժանա
ւոր պատրաստութ. որպէս զի՝ որպէս ընդ սիրելւոյն
իմոյ մահ, նոյնպէս և ընդ իմ, ընդ թախծութ սրտի՝
կալցես և մխիթարութի հոգւոյ։

# ԹՈՒՂԹՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ.

## Շնորհակալութիւն առ բարեկամն բարերար.

Որչափ որք ունիցին բարերարեալս, այնչափ և բարեբանօքս. քանզի փառք ստուեր են առաքինութեան, և այնմ զկնի ընթանայ. և մարդ՝ որ առ բնութենակիցս իւր գտանի երախտաւոր, գերագոյն քան զմարդ ճանաչի ՚ի մարդկանէ. և քաջ անուանց արժանաւոր և պատուով լինի ընդունակ. քանզի վերակոչի դիւցազն հոյակապ. և որ այլ ևս իցեն գեղեցիկ անուանք. Այսոքիկ գեղեցիկ երանգօք պայծառ և հարկ է ինձ այժմ ՚ի սմին նամակի նկարագրել զարժանապատիւն անձնդ. քանզի ոչ ինչ շնորհաց երևեցայ դու քան զառաջին դիւցազուն բարերարն՝ որք պատմին ՚ի վէպս. և եթէ մի ըստ միոջէ կամիցիմ պատմել զբազմադէմ երախտիսն՝ զոր մինչև ցարդ ցուցեալ է առ իս մեծապատիւ անձնդ, բազմագոյն լինիցին մատեանքն իմ քան զորս միանգամ՝ ընդ միտ ածեալ գրեցից. մանաւանդ երկնչիմ ևս՝ գուցէ անարժանութիւն իմ յանդիմանեսցի առ մեծութիւն բազմադէղ երախտեացդ. չէ լիցի համառօտ բանիւ բովանդակել. զի կատարեցեր առ իս զամ՝ զոր կարէիր, և որոյ ինձ կարօտէի. և բարեյօժարութիւն կամաց առաւել պատրաստ կայր ՚ի շնորհել քան ես ՚ի խնդրել. Այսպէս բազումք այն են ՚ի մարդկանէ, որ առանձին բարեկամն և սիրելի վ̅ն ընչից. այլ քո մտերմութիւն ինչ ստացեալ է և առանց վ̅ն սիրելեաց և բարեկամաց. Ոչ մատուցայց՝

դրշմեցիւ է շունչս՝ զանկշռելի երախտիսդ. չի՛ք որչ
ունիմ մտերմութեդ, ոչ այնչափ բերանով, որչափ սըր-
տիւ. Ճանաչեմ զանձն երախտապարտ ոչ այլում ու-
մեք, բայց՝ մտերիմ անձինդ. և ընդ այս խնդամ՝ զի
երախտաւոր ոչ զայլ ոք 'ի մարդկանէ, այլ զքեզ ու-
նիմ անձին իմոյ. և որպէս միշտն և այժմ պանծամ
'ի սէրդ բարեկամութեդ. և յանի ծով ուրեք լինիմ ճըշ-
մարտախօս յանկեցն գովութիս իմ վս պատուականն ան-
ձին բարեկամիդ. Իբրև զի՝ այնպէս քաղաքավարիդ
զի և ես չերևիմ երբեք սուտ 'ի բանս իմ.

Պատասխանի վերոյիշեալ ողջունին.

ՄԻ ԻՆՉ ԽՕՍԻ. իմաստնաբանէր Սողոն. Պահեա շրթանց.
խորհրդաբանէր Թաղէս. որով վայելչական գործք մարդ-
կան. և ամենայն յիշելուք կարգի երևելի գեղեցիկ. Ապա-
զո՛ր օրինակ տարադէպ գործէր ոք, եթէ ամոյ միոյ
յորինոյ՝ շնորհակալութեան մեծ պատուհասեր. կամ փոքրահա-
սակ մարմնոյ՝ հանդերձս սկայի, սոյնպէս եթէ ոք
փոքու իմն և չափաւոր շնորհայ՝ ընծայեսցէ մեծ իմն
շնորհակալութիւնս արտաքոյ առնել վայելչականին.
Արդ՝ թէպէտ և դու մեծապատիւ սիրելի, գլխովին
ջանասցես յանձն ընդունիլ զբանս իմ զայսոսիկ
յայն միտս՝ որով գրեմ ես զսոսա. սակայն՝ այս քո հրա-
ժեշտ 'ի բանիցս ընդունելութե՛ թէ վն մեծութե՛ ինչ
շնորհացս իմոց էր, զոր ես ոչ Ճանաչեմ, գլխովին լը-
ռելի արդեօք. ապա եթէ այդ ծնունդ է գեղեցիկ
առաքինութեանցդ, և շնորհակալու սրտի. յորդորոյն

ըղխտանս, որպէս և է իսկ հաւաստի, և ես գիտեմ, պարտ է և ինձ ասել՝ զոր ճանաչեմ իրաւացի. եթէ այդ առածք իմաստնոյն, զոր գրեցի վերագոյնդ. ո՛չ կատարեցան 'ի քեզ՝ յաղագս այդր նամակիդ շնորհակալուն. Վ̅ն որոյ պատրաստ եմ բարեյօժար սրտիւ յա̅մ ժամու՝ այնպիսի ինչ ցուցանել առ մտերմութիդ. որպէս զի՝ եթէ յայնժամ 'ի դէպ համարեսցիս ճըշգրտագոյնս գրեսցես զայդուսիկ բանս, զոր այժմդ գըրես. այլ ինձ յամի գերագոյն շնորհս համարեալ է և փառք անփառութեան. եթէ երբեք գտայց արժանի ծառայել սիրոյդ ա̅մ արժանեաց արժանապատիւ անձինդ.

## ԹՈՒՂԹ·Բ ԳՈՎՈՒԹԵԱՆ.

Գովութիւն ծերունւոյն վ̅ն առաջին գործ իմաստնոյ յօգուտ հասարակաց.

Քաղցր է ինձ այսնուագ գրել նամակի առ մեր մտերիմ՝ քան զա̅մ նուագայն զքաղցրութի. Իբրև զի առեալ եմ ո՛չ այնչափ 'ի գրել առ ձեզ, որչափ 'ի դրուատել զձեզ. Քանզի առաւելագունի պատճառք բերկրութեան սիրելեաց և բարեկամաց՝ գիտեմ զգովութի բարեկամին, յորժամ զարժանագով գործս նոր ունիցին 'ի ձեռս՝ գովեստից իւրեանց պատճառս. Վ̅ն որոյ և ես արդ որչափ զուարճանամ 'ի գովութիս ձեր. այնչափ՝ և առաւել 'ի տեսանելն անդ 'ի ձեզ զարժանի գովեստից բազմադէմ արդիւնս. 'ի դէպ է ինձ այժմ՝ 'ի ձեր մտերմութիդ վերաբերել և ճշմարտախօսել,

զոր միանգամ իմաստասէրքն ասացին, եթէ Ճանաչողք
[illegible]
[illegible] և թէ՝ [illegible]
[illegible] • քանզի լցիք
զիս անպայման ուրախութ. ՚ի լուր զուարթարար կեն-
սաղօգուտ և գիւտական գործոյդ՝ զոր խորհեցայք
իմաստութ. և կատարեցիք քաջութ.՝ մեծապէս բարերա-
րեալ առ ազգս մեր. արժանի էք գովասանից՝ ոչ յիմս
միայն նուաստագին գրչէ, այլ և ՚ի բերանոյ տիեզե-
րական ազգին՝ երբև ճշգրիտ իմն օրինակաւ քաջա-
պէս հաստատեալ է առաջին մեծագործս և գիւտա-
գործս՝ որք միանգամ ՚ի դարս իւրաքանչիւր երևեցան
յաշխարհի. այս գեղեցիկս ասաց՝ որ ասացն, եթէ
[illegible]
[illegible]
Աղեքսանդր մակեդոնացի աղաչեալ ՚ի բարեկամաց
առնել որդիս, ասէր. [illegible]
[illegible] և դուք
Թողիք ձեզ անմահ յիշատակ՝ ոչ զայլ, բայց զիմաստու-
թիւնդ և զկատարեալ հայրենասիրութ.իդ. քանզի միշտ
կենդանի էք ՚ի գործդ գիւտականի՝ զոր ցուցիք
առ ձեր հայրենիս. և որչափ մեծ են գործքդ, այն-
չափ և անմոռանայ յիշատակն նոցա յուշոյ իմաստից, մինչ
գի զոր միանգամ ասէր Սոսիփոս իմաստունն բարերա-
րեալն ՚ի Գերմանիա կայսերէ, եթէ բարերարութ.ին
Գերմանիոյ ամ ուրեք ընդ առաջ լինի ինձ, ի տա-
ճարի, ՚ի հրապարակի, ՚ի պալատան, ՚ի դատաստանա-
րանի, ՚ի տան, ընդ այն ասասցէ և ազգս մեր զձէնջ:

ղեմ զի՝ և զայդ գործ՝ զորմէ բուռն հարիք և կատարեցիք՝ բազում կարօղք և բազմաձեռն իշխանք երկնեցին և ոչ կարացին ծնանել. իբր զի Որդւոյ ... [illegible] ... ապա ընծայես ԺԵ փառս պարծանաց քաջի անուանդ. և մտերմութեան սիրոյ մաղթեմ յայ՝ տալ ձեզ զօրութիւն առաւելուլ. և յայլ կենցաղօգուտ արարս՝ 'ի շինութիւն ազգիս և յաւաւելագոյն պարծանս պատուական անձինդ.

Պատուական [illegible].

Եթէ յաղագս փոքու և դուզնաքեայ իմոյ արդեանց՝ ձեր մտերմութիւդ 'ի դէպ վարկաւ գրել գովութիւն առ խմս նուաստութիւն, ես առաւելագոյն իրաւամբք պարտ համարեցայց գովել զձեզ յաղագս գովութեդ՝ զոր ձերումդ անկեղծ սիրոյ մտերմութեան գիտեմ պտուղ. յաղագս ազգասէր բարոյիցդ՝ որով 'ի խնդիր էք միշտ բարեաց ազգիդ. յաղագս Ճշմարիտ խնդութեդ՝ որով խնդայք 'ի սրտէ ընդ փառս բարեկամիդ. Թողում ասել և զգեղեցիկ առաքինութեցդ քոյ բազմադէմ մասունս. որովք որչափ զարդարեալդ էք, նոյնչափ և գովեալ: Այլ սակայն ընդ՞ր ունիմ սիրոյ գովողիդ, որում միշտ պարտապան զանձն դաւանիմ. և ոչ գովութեան՝ որում անարժան զիս խոստովանիմ. գիտեմ իմաստութբ իրաւապանեալ իմաստնոյն այնորիկ զգեղեցիկ զայն խրատ եթէ՝ Ցո... [illegible] ... իբրև զի եթէ մեան բարեաց իցէ 'ի գործս մեր, այն տուրք են

տյ. իսկ եթէ թերի ինչ և մեղանչական, այն սեպհական իմում մերոյ. ապա որպէս առաջնոյն պարծանք՝ գովութին Հայր ՚ի սկզբնաւորութն բարեաց յանձ, նայնպէս և երկրորդիս հետևանք՝ անարգութին՝ մեզ է վայելչական.

# ԹՈՒՂԹՔ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ.

Թուղթ մտերմութեն, որով հրաժարէ շրջագայելոյն գալոյ ինքն.

Եթէ միայն ՚ի յիշատակ բերկրականին ես զուարճանամ՝ քանի՛ օ՛ն ապա և ՚ի վայելելն ՚ի նոյն արդեամբք. Վկայեմ" եթէ կարի բերկրական է ինձ կենակից լինել մտերմութեդ. որ որչափ սիրողդ ես ճշմարտութ, նոյնչափ և սիրելեաւ անկեղծութ. որոյ եթէ յիշատակաւն միայն ցնծամ՝ քանի՛ ևս առաւել ՚ի տեսանելն զձեզ աչօք. Եւ արդ՝ քանզի քաղցր է բարեկամի՝ կենակցութի բարեկամաց. և կարի դժկամակելի նոցա բացակայութին ՚ի միմեանց, ապա իրաւամբք բարեկամութես մերոյ՝ խնդրեմ բառնալ յինէն զդժկամակութիս զայս. Վս որոյ և աղաչեմ՝ մի դանդաղեսցի մտերմութիդ՝ տալ լրումն կամաց սիրալիր հրաւիրանացս. որով մեծապէս ըղձիմ հրաւիրեմ արդ զմտերմութիդ գալ առ մեզ և առնել մեզ զշնորհս զայս մեծ.

Եթէ քաղցր է տեսութիւն բարեկամի, քաղցրագոյն է կատարումն կամաց բարեկամի. նա զի և շնորհս իմն մեծ ընդունի յանձին կամակատարն. ըստ որում՝ առաւելապէս ես ինքն յաւուր յայսմիկ 'ի կատարումն սիրալիր հրաւիրանաց մտերմութեան. վասն որոյ և վաղագոյն՝ որչափ մարթ իցէ՝ խոնարհեալ կամ՝ շնորհակալութ 'ի լրումն կամաց մտերմութեան։ Այժմէն իսկ փափաքէի ընուլ զգրեալդ մտերիմ սիրով. այլ ներեցէք ինձ նովին սիրով, եթէ յապաղեցից զնոյն ոչ կամաւ, այլ 'ի հարկէ. քանզի բազմօրինակ անխուսափելի զբաղմունք պատեալ են արդ զինև. յորոց մի կարի փութապէս ճողոպրեալ զանձն՝ եկից առ մտերմութիւնդ շնորհապարտ սրտիւ՝ լինել հրաւիրակ սիրոյդ՝ 'ի պատուել զմեր աղքատին յարկ գալստեամբ արժանաւորաց անձինդ։

# ԹՈՒՂԹՔ ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ.

## Բարեկամ բարեկամին յանձն առնէ զօտարականն.

Ցարդ զգիր մտաց իմոց յղէի առ մտերիմ անձինդ. այլ զայս նորոգ զիս ինքն գլխովին ահա առաքեմ առ ձեզ. այսինքն՝ զմտերիմ բարեկամս. գիտեմ՝ եթէ գլխովին իրաւացուցիք զբանս. քանզի ինքնին վկայեք՝ եթէ որպէս դուք, նոյն և դա՝ ոչ այլ ոք էք ինձ, բայց եթէ՝ Դա ես։ Գայ դա այդր 'ի քա-

զերդ վն վաճառականութե. ունի ընդ իւր բազում վաճառս պատուականս ՚ի քաղաքէ աստի մերմէ, վաճառաշահ լինել նորանօր։ Թղթովս իմով այսուհետև ձեզ յանձն առնեմ զնա. և աղաչեմ՝ զի զդա ընկալջիք ամենայն սիրով. և յերկիրդ օտարութե հոգ տարջիք դմա՝ մինչև իցէ պէտս դորա. ՚ի տեսանելն զնա՝ զիս ինքն համարեսջիք տեսանել. և ՚ի խնամածելն դմա՝ համարիմ՝ եթէ ինձ գլխովին խնամարկէք. վարեսջիք ընդ դմա՝ իբրև ընդ ձերում բարեկամի. քանզի որպէս ես ինքն կապեալ եմ ընդ ձեզ յօդիւ բարեկամութե՝ և նա ընդ իս, նոյնպէս և ՚ի ձեզ յօդեսցի դա ինև. վկայեմ վն անձին նորա, (որպէս և մտերմութիւնդ զփորձ առեալ զնորա՝ ծանիցէ զնա,) եթէ այր ճշմարիտ է և անկեղծ, հաւատարիմ և արդար, իմաստուն ՚ի գնայս և յաջողակ ՚ի գործս։ Արդ՝ զխնդրուածս բարեկամիդ՝ աղաչեմ՝ ընկալջիք մտերմութբ, և կատարեսջիք հաճութբ յանձն բարեկամիս։

Պատասխանի վերոյիշեալ թղթոյն.

Զուարճանամ ՚ի բարեկամս. այլ առաւելապէս բերկրանօք՝ ՚ի լինել ինձ առ նոսա զպարտս բարեկամութե. մինչ զի զոր Բիաս իմաստասէր՝ հարցեալ թէ՝ ո՞ր գործ դժուարին է մարդոյ, ասէր, ՚ի չարն իւր, վն իմ ես ճշմարտագոյնս եսս ասեմ, եթէ՝ զուարճանամ ՚ի կատարումն կամաց մտերմութեդ։ Թղթովդ ձերով այդուիկ, որ աւետալուր նման համարեալ է առ իս ետուք ինձ ՚ի ձեռս բերել զիղձս փափականաց սրտի

որում 'ի ժամանակէ անտի հաստելոյ բարեկամութեա ընդ իս և ընդ ձեր մեծութիւնդ' փափականօք Յայի-ուսոի և որդ իւրև կայի Ծարաւի' Էգերկեցի մեծապէս հաճուք սրտի զյանձնարարութի սիրելոյդ, որ յաղագս այդր արժանապատիւ բարեկամիդ. Գիտութի լիցի ձեզ, զի (յայս ինչ Թուականի ամսոյս) յաջողութ և քաջողջութ եկն եհաս դա այսր առ մեզ. յորում՝ առաւել քան զոր գրեալն էիք վն դորա՝ արժանաւոր գովեստս, տեսի արդեամբք. վն որոյ և անյապաղ կապեցայ ընդ նմա բարեկամութբ. գիտելով հաստատ' եթէ այսպիսի բարեկամք են, զորոց հարցեալ Աղեքսանդրոս' եթէ ուր ունիցի զգանձսն, ասէր' 'ի սոսա. և առաւել քան զոր միանգամ յանձն արարիք ինձ վն դորա, և որչափ ինչ յանձն առնէ ինձ արդ նորոգ բարեկամութիւնս իմ ընդ սմա, կատարեցից 'ի դա կամակար սիրով:

## ԹՈՒՂԹՔ ԽՆԴՐՈՒԱԾՈՑ.

Թուղթ խնդրել ինչ 'ի բարեկամաց. օրինակ ինն' շնորհութե 'ի Դէպ նեղութեան.

Այս ժամանակ ընդունելի, յորում տեսցէ աշխարհ, եթէ գոն 'ի նմա ճշմարիտ բարեկամք. իբրև զի' ճշմարիտ բարեկամ 'ի տարապէպ անցս բարեկամին հանդիսանայ. յորում և բարեկամութեն առաքինութի զուարձացեալ բերկրեսցի, տեսանելով զգեղեցիկ պտուղ իւր' պտղաբերեալ 'ի բարեկամն յորում և

Մե՛ք՝ որք խնդամք ընդ բարեկամութիւն, ցուցցուք զբարեկամութիւն. ես 'ի խնդրելն 'ի բարեկամէ, և դուք 'ի տալն բարեկամի. քանզի շուրջ հայեցեալ զամենեքումբք 'ի մեծի նեղութես, ոչ զոք այլ գտեր միայն մտերմութիդ գտանեմ ինձ անփոյթ ապաստան, յոր և ապաւինիմ՝ մեծաւ վստահութբ. քանզի զկնի բարեկամութեան հաստատեմ բարեկամիս, նախ քան ըզ բարեկամութիւն՝ լինիմ քննօղ. Նովին համարձակութբ սիրոյ՝ զոր ունիմ՝ և զոր ունիք. գրեմ առ սիրելութիդ զԹուղթս, որով և ցուցանին՝ անձամբ ծանուցանեմ ( զայս ինչ ) վիճակս վտանգի անհնարին տարակուսանացս՝ որ հեղա զինև յաւուրս յայսոսիկ՝ մինչ ես զուարճացեալ էի անդորրութեամբ խաղաղութբ. այս պատահ որ դառնութն զսակերս իմ առ հասարակ խախտեաց 'ի կայից. աքեամբ էլից զախորս և տագնապ սըրտաբեկ՝ յուսակտուր արկ զինև. Ո՛չ այնչափ 'ի միջե- [illegible] Ըստ [illegible] ոմն 'ի հնումն. Զ[illegible] [illegible] այլ ես զանբախտութիւն իմ յայտնեցից ձեզ. զի դուք ուրախ տրամաջիք զբարեկամս ձեր. Ընթերկեայ եմ. զի ոչ միայն կամիք և ունիք՝ յորժամ կարէք. այլ և մնապէս ցանկայք՝ յորժամ չկարէք.

Ս[illegible].

Ընկալայ 'ի մտերմութեդ զԹուղթդ վշտաց զուժալեր, և արտասուեցի ընդ անհնարին աղէտդ՝ որ պա-

յիմ սրտէ, 'ի նեղութեան սիրելեաց իմոց հասանէ ինձ 'ի թիկունս, այնչափ և դժկամակութիւն անհնարին և տրտմութիւն կարեւէր, յորժամ 'ի կամիլս՝ և չկարեմ 'ի նեղութեան՝ տալ ինչ սատարին պատսպարայս՝ որ յա- ւուրս յայսմիկ կարեօք հասին 'ի վր̄ իմ, ընկալայ զթուղթդ վշտալի· որով և նեղութի՝ մեզ յաւելաւ յիս. և ես՝ (թէպէտ և 'ի կամս ակամայս) պատասխա- նեաս իմով այսուհետեւ յաւելը ձեզ ցաւս 'ի վր̄ ցաւոցդ՝ գրելով զանձին իմոյ վիշտս. ահա ցաւք կրկին, և արտասուք կրկին. ահա փոխանակ դիւրելոյ սրտի սի- րելւոյդ՝ բռնադատեցայ դարձեալ վշտացուցանել զնոյն. Արդ՝ որովհետև այս այսպէս երկայնամիտ ոգւով անցուք զմնացեալն, եթէ անիմն իմն է աշխարհս. 'ի սմա՝ որպէս որ բարձրանան՝ խոնարհին նոյն և որ խոնարհինն՝ բարձրանան. այս 'ի բարեբար կամս այ լինիցուք ապաստան. որ եհարն՝ նոյն և բժշկեսցէ

զմեզ ողորմութեամբ.

## ԹՈՒՂԹ-Ք ՅՈՐԴՈՐԱՆԱՑ.

Յորդոր մխիթարութեան առ ընկերակիցն յաղթել ինչ յօգուտ հաստա- տուեալ. օրինակ իմն՝ յանդգնելոյ Վարդանայ ասելով.

Որչափ բերկրիմ ընդ վասն պարծանաց ազնուական անձինդ՝ ըստ օրինաց բարեկամութեան, այնչափ և ոչ դադարիմ զօրհանապազ խորհիլ վն ձեր 'ի գլուխ այսր տմի՝ որ տուեալ կայ ես պայծառութեան եղկելին սպառնալեաց քաջանուն անձինդ. և որչափ այս՝ այն-

յամ սրտէ, 'ի նեղութեան սիրելւոյ իմոյ հասանել ընդ
'ի թիկունս, այնչափ և դժկամակութիւն անհնարին և
տրտմութիւն կարեւէր, յորժամ 'ի կամս լայ՝ և չկարեմ
'ի նեղութեան՝ այս ինչ յաւագին պատահարաց՝ որ յա-
ւուրս յայսոսիկ կարեւոք հասին 'ի վր իմ, ընկալայ
զթուղթդ վշտաց. որով և նեղութիւն այլ յաւելաւ յիս.
և ես՝ (թէպէտ և 'ի կամս ակամայս) պատասխա-
նեաւս իմով այսուհետեւ յաւելի ձեզ յաւս 'ի վր յաւուրդ՝
գրելով զանձին իմոյ վիշտս. ահա յաւք կրկին, և
տրտմութք կրկին. ահա փոխանակ դիւրելոյ սրտի սի-
րելւոյդ՝ բռնադատեցայ դարձեալ վշտացուցանել
զնոյն. Արդ՝ որովհետեւ այս այսպէս երկայնամիտ
ոգւով անցցուք զմնա, եթէ անիմ իմն է աշխարհս.
'ի սմա՝ որպէս որ բարձրանան՝ խոնարհին նոյն և
որ խոնարհին՝ բարձրանան. այպ 'ի բարեբար կամս
մեր լիցուք ապաստան. որ եհարն՝ նոյն և բժշկեսցէ
զմեզ ողորմութեամբ.

## ԹՈՒՂԹՔ ՅՈՐԴՈՐԱՆԱՑ.

[illegible]

Որչափ բերկրիմ ես վասն պարծանաց ազնուական
անձինդ՝ ըստ օրինաց բարեկամութեան, այնչափ և ոչ
դադարիմ զօրհանապազ խորհել վս ձեր 'ի գլուխ
այդր անդ՝ որ առաւելապէս պայծառութիւն եղիցին
սրտառուք քաջանուն անձինդ. և որչափ այս՝ այն-

ջանի և ոչ խորշիմ մանրմանութե՛ սիրոյ լինել առ ձեզ համարձակախօս վս՟ նորին իրաց. Յամենայն խորհուրդս իմ՝ առաւելագունի պարծանաց քարոզ քաջի անուանք՝ ոչինչ այլ գտանեմ. բայց զհասարակաց օգուտ ազգին. յոր և ձեռնհաս իսկ էք ը՟ տուելոյ ձեզ յԱյ կարողութե՛ գոյից և իմաստութե՛. Այս է՝ յոր կնամիմ յորդորել զունկնդիրս իմ Կղիմարքոս եթէ խորհին Անգղիացիք կամ Գերմանացիք այլ ազգայինք. զինչ ազնուագոյն քան զբարերարելն հայրենեաց. քանզի այնու հեռանալ՝ որպէս ժողովուրդք Հռովմայ զՕգոստոս կոչէին Հայր հայրենեաց և ասէին՝ եթէ այսպիսում մի իշխանի կամ չէ արժան ծննդեամբ գալ յաշխարհ, և կամ մահուամբ բառնիլ յաշխարհէ. զնոյն ասասցէ զձէնջ և ազգս մեր ողջոյն. Եւ արդ՝ Թէպէտ և բազմապատիկ են արդիւնարար գործք՝ առ հասարակ բարելաւութե՛ և պայծառութե՛ ազգիս առիթք, այլ ես յամի ՚ի նոսա ընտրելագոյն և շահաւէտագոյն համարիմ կանգնել վս՟ մանկանց և պատանեաց ազգիս՝ բարեկարգ վարժարան բազմապատիկ ուսմանց. նոքա ՚ի զգօնականն իւրեանց՝ որչափ խընդասցեն ընդ յառաջադիմութիւն ձանց, այնչափ և ձեզ մեծապէս պարտուք կալցեն շնորհս, և ձեզ երանեցեն յուխտեան. որով և ըստ ասելոյն Պերիանդրեայ՝ ՚ի յիշատակութե՛ աշխատութեան գովելի գովեսցի. և չէր վայելչական՝ երանութե՛. Զբազմապէտ շահս՝ որ ՚ի դպրոցաց և ՚ի վարժարանաց՝ ՚ի դէմս ածել և զ յայտնեալ երկայնաբանել՝ ոչ կամիմ. քանզի քաջ իսկ գիտէ իմաստութի՛ անձինք, եթէ որպէս ազգի առաւելութի՛ ոչ այլ

րուստք է, բայց 'ի մանկանցն առաւելու է, նոյնպէս և պայծառութի նորա 'ի մանկանց է. եթէ մանկունքն են քաջուսմունք. ներհունք, և հրահանգեալք. նոյն-պէս առասցես ազգս և զազգն ողջոյն. և թէ՝ որպէս շինութի առաջին է 'ի մանկանց, նոյնպէս և շինութի նոյն և քաջալերութի 'ի վարժարանաց. նաև զի՝ որպէս բանիս կարգ է ասել մանեն անդր արդարև իբրև բանաւորք անբանք, և եղանեն անտի իբրև մարդ-կատարեալ. և զի՝ յոր ինչ կրթին մանկունք 'ի տղայ-տիոջ, այնպէս մնան 'ի կեանս իւրեանց. ըստ որում և տունկք յարմարոյ ածեն. Եւ այս վարժարան բարե-կարգ՝ յոյր սակս համարձակութի առեալ 'ի մտեր-մութեդ՝ յորդոր մատուցանեմ կանգնել 'ի մեզ, ոչ քաջ ուսմունս միայն յարդարէ զմանկունս, այլ և յաջո-ղակս և քաջայարմարս որպէս 'ի հեշտընկալ ուսումն զանազան քաղաքականս արհեստից, նոյնպէս և 'ի հան-ճարել յանձանց պէսպէս ճարտարարուեստ հնարս, և նորանոր գիւտս արհեստից. զայս ճշմարտութիւն հանապազ աչօք տեսանէք և իբր ձեռօք շօշափէք յայլ ազգինս, յորս յաճախեալ են դպրոցաց պայծառ-ութի և բարեկարգ ուսմանց փոյթ. իբրև զի՝ այլազ-գլխովին յառաջադէմ խաղայ յիւրում արհեստի ու-սումնական արհեստաւոր, և այլազգ՝ անուսն. Յա-ղագս որոյ և ամ ազգասէր Թագաւորք և իշխանք, որք միանգամ փոյթ և ջան յանձին կալան 'ի պայծա-ռացուցանել զազգս իւրեանց և 'ի նորափետուր ծաղ-կեցուցանել քաղաքականութ և արուեստաւոր հանդի-սից ճարտարութ, զառաջինն հոգացան դպրոցս կա-

ուղղանել բարեկարգս, և վարժարանս գիտութեանց
վայելչազարդարս ըստ մանկանց. որ և առ մերովք նախ
նեօքն ուսմանց կատարեալ. ըստ որում մանրամտութիւ-
գիտէ քաջ. Նոյին նախանձաւոր և հանդիսակից լի-
նել փափագելիդ մտերիմդ և ազնուական անձինդ, որով
և նոյին փառաց և քաջ անուան ազգասիրութեան յաղ-
գայ յազգս հայրորդ. նա զի՛ և որպէս խնամատարէր
ոմն վկայէր ՚ի հնումն՝ զմտաւ ածեալ զազնուականու-
թեն բանաւորանիս բնութե, [illegible]

Պատասխանի վերոյիշեալ Եղիային.

Ի բազմաց հետէ ՚ի վեր հասեալ եմ՝ հաստատութեան
խնամատութեան պատուական անձինդ. և այժմ ՚ի ձեռն
գեղեցիկ յորդորմանցդ առաւել ևս ծանեայ, եթէ
այր խնամատարախորհուրդ էք և սիրող աշխարհաշի-
նութեան. իբրև զի՝ [illegible] առա-
ւելեալ էք և մեծապէս սիրով մերոյ հայրենեաց գե-
ղեցիկ առաքինութե՝ զոր սակաւք ունին, թէպէտ և
բազումք երևեցին ունել. Ուստիմ և ես ինքն սէր
ազգի և փափագեմ յառաջադէմ պայծառութեան հայ-
րենեաց. զոր ըստ բանիցդ Աշխարհուն՝ ոչ այլ ուս-
տեք, բայց ՚ի բարեկարգ վարժարանացն գիտեմ հան-
դերձիլ. խոստովանիմ մտերմութեանդ՝ եթէ առաւել
ինձ յորդորեցայ ՚ի կատարումն փափաքանացս ՚ի գեղե-
ցիկ և ՚ի հաստատիմ բանից նամակի ձերոյ. գովեմ
զազնուական խորհուրդդ՝ որ սակս բարգաւաճութեան
բարեաց ազգիս. և յուսամ յորդորմունքն ածայինն՝ եթէ

ոչ 'ի գերև ելցէ քաջախորհուրդ յորդոր իմաստութեան ձերոյ։

# ԹՈՒՂԹ-Բ ԽՐԱՏՈՒ։

Խրատէն ծնողք զորդին՝ որ ռազմին 'ի պատերազմ։ Խաղ ընկալցի 'ի ձեռն։

Դու լինիցիս վկայես մեզ որդեակ մեր, եթէ միտք մեր և խորհուրդք հանապազ 'ի տուէ և 'ի գիշերի յանձին զքեւ, եթէ զի՞արդ արդեօք ընդ աճել մանկանց հասակի քոյ, և դու յառաջադէմ անդր ձգիս և զարգանաս հոգւով 'ի վիճակիդ յայդմիկ՝ յորում անկեալդ զքեզ տես։ Յուշ լիցի քեզ՝ զի մինչ աստ առ մեզ էիր, մեք ըստ ծնողական պարտուց զաղայ հասակ քո մնուցաք կաթամբ բարեպաշտութե և երկիւղին այ. տուաք քեզ և ըստ կարի ուսանել զսկզբունս գիտութեց. և արդ՝ յայսմ հետէ քանզի 'ի չափ հասեալ է քո ալուրս է և քեզ մեծապէս ջանիւ ընդունել և զքո պարտս՝ որ առ մեզ. այս է՝ այնպէս գնալ. զի ուղղութե եղիցիս պատճառ քոց ծնողաց՝ և յաջողեսցիս արդեօք 'ի սմա, եթէ նոմ սիրով ունկնդիր լիցիս խրատական բանից մերոց՝ զոր գրեմք առ քեզ և նոմ խնամով պնդեսցիս 'ի կատարումն նոցին։ Մի զանգիտեսցես եթէ [illegible] է, որպէս ասաց ոմն յիմաստնոց. քանզի անդէն զհետ երեւի և զայն՝ [illegible]։ Ձէք յաշխարհի վեհագոյն և շահաւէտագոյն քան զունկնդրութե

խրատուց. և չիք ինչ 'ի նմա առաւել յոյժ և անձ-
ղխտան՝ քան զայր անխրատ. մինչ զի և յիմաստասիրաց
ումն հարցեալ՝ եթէ զինչ ծանրագոյն բառնայ 'ի վ̄ր
իւր երկիր, ասէր. Զմարդ անկրթ. Ոչինչ է՝ զոր
միանգամ՛ ունիս, եթէ զսա չունիցիս. մարդ առանց
խրատու՝ ոչ երբէք ունիցի լինել մարդ. որպէս զի
և զոմն մեծատուն անխրատ տեսեալ Սոկրատայ,
ասէր. Ահաւասիկ անասուն ոսկի. Արդ լուր՝ զոր ասեմքս.
որչափ ինչ աստ առ մեզ 'ի տան քում ընկալար 'ի
քեզ 'ի տղայ տիոց գեղեցիկ սկզբունս՝ եթէ զբա-
րեպաշտութեն, և եթէ զգիտութեանց կալ քեզ զնս̄
իբրև սերմանս իմն բազմարդիւն շահեկանութեն՝ ար-
կեալս 'ի միտս քո և 'ի հոգի՝ իբրև 'ի պարարտ երկ
րի. որ քրտամբք հողագործին՝ որ ես դու՝ արձակեն
'ի խոնարհ զարմատս, և բուսանին 'ի վեր և աճին
լինին ծառք մեծամեծք և գեղեցիկք՝ ոստովք՝ ծաղ-
կամբք և պտղովք. Արդ դու աճեցուցեալ զսերման-
սն զայնոսիկ, ձգեա՛ նախ 'ի խորս զարմատս. իմա՛
զոր ասեմքս՝ զհիմն քո հաստատեա՛ նախ ամրութ̄բ
'ի վ̄ր առաքինութեն ա̄ծպաշտութեն. ապա բուսի՛ր
'ի վեր կոյս և բարձրացի՛ր, այս է՝ ժրացի՛ր և կրթեա՛
զանձն զմիտս քո քաջ սպառմամբ լինել 'ի մարդս գի-
տութեանց. ապա արձակեա՛ յարմատոյ անտի ա̄ծպաշ-
տութեն՝ բարունակս զանազանս բազմադիմի առաքի-
նութեանց, և զարդարեա՛ զնոսա բազում դալարագեղ
տերևովք՝ որ են բազմադէմ գիտութիւնք. Վարք ճշմարտի
է ծնունդ իմաստութեան. որոյ գիտութիւն էն պտուղ. ասէր
Պղատոն. ապա բղխեա՛ զծաղիկս գեղեցիկ յոստս առա-

քննութեանց ընդ տէրունականք գիտութեանց. այն ինքն է համաստհին և ճշմարիտ սէր առաքինութեան և գիտութեան. որով և փայլեսցիս իբրև ծաղիկ ոսկեփայլ առաջի տեառնդ, և ծանիցիս յաչս աշխարհի իբրև ճշմարիտ առաքինասէր և իմաստուսումնասէր. և եթէ զայս ամ արասցես ըստ օրինակիս՝ զոր ասացաք, ապա յետ այնորիկ ինքնին պտղաբերեսցի ՚ի քեզ և պտուղն ցանկալի. քանզի լուսեսցիս իբրև առաքինի և իմաստուն. գործեսցես իբրև առաքինի և իմաստուն. և երևեսցիս դու այնուհետև գեղեցիկ հոգւով և մտօք ՚ի մէջ ամ դասակացդ. քանզի ջերմեռանդն սիրով առնես ՚ի քեզ զխրատս մեր և պահեցես. Սոկրատէս հարցեալ, եթէ զինչ ՚ի կենդանեաց գեղեցիկ իցէ, ասէ. Մ–ա–ր–դ խ–ր–ա–տ–ո–ւ–ղ–ղ–ե–ա–լ. ՚ի վախճան բանիցս և զայս խրատ մեր փոյթ յանձին կալջիր կատարել յամ կեանս քո. մի երբէք յաղթեալ քո ՚ի սովորական ախտէ տղայամտութեան՝ փոփոխեսցիս ՚ի տեղւոջէ ՚ի տեղի. այլ կա՛ց այդր՝ ուր կաս. ջանա՛ այդր՝ ուր ջանաս. ուսի՛ր այդր՝ ուր ուսանիս. զա՛յս գիտեա, զի փոփոխումն տեղեաց՝ ո՛չ զխելս ուսուցանէ, և ո՛չ զանխմաստութիւն բառնայ: Որպէս զի պահպանութեամբ այսորիկ ամի՝ տուեալ քո մեզ ՚ի ժամու զքաղցր պտուղդ՝ և մեք ցնծասցուք ՚ի վերայ անձկալի պտղակիդ. և օրհնեսցուք զած՝ որ տնկեաց զքեզ յաշխարհի ՚ի փառս իւր և ՚ի պարծանս մեր:

Զծնողական սիրոյ ձերոյ զգեղեցիկ խրատաբանութիւնս. որդիական նուաստութի ընթերցայ ամ յարգանօք սրտի, և ընկալայ կամակար մտօք. ոչ պակաս և վայելուչ է որդւոյ լսել և ընդունել պատկառանօք զծնողայն բանս։ Ցիմում սրտի իբրև յանջինջ տախտակի դրոշմեցի զամ զբանս խրատուց՝ զոր 'ի ծնողական սիրոյ ձերմէ բղխեալ գրեցիք առ նուաստութիւս. փոյթ մեծ խնամով յանձին կալայց յամ 'ի կեանս իմ պահել զնոսա. խրատէր ոմն զորդին 'ի հնումն, եթէ Պօրճ է շէքմէյ (ծնողայն) գանճարըն ալըշէր տուտէլ պուն շըրպէյ. քանզի և որդեակը ծնողքդ ըստ այլոյ ուրումն բանի՝ Զօրլէ ալըր ճէքէրլէր պու շալը պուն հօրանթը. խրատք ձեր կեանք են հոգւոյ իմոյ և հաստատութի գլխոյ իմոյ և ամրութի բովանդակ կենաց իմոց. նոյին պահպանութե ակնունիմ անեղկեան յուսով ժառանգորդ լինել օրհնութեն այս և աղնուադաւթ ծնողացդ. և նոքօք զօրեալ ընուլ ըստ մասին զորդիական պարտս իմ առ ձեզ. ուր ընդբովանդակն հաստատանել՝ այս յանձնարկեալ է ինձ մինչև 'ի կենացս վախճան։ Աղաչեմ զորդեակը ծնողացդ, և յայլ նուէրս ոչ դադարել գրել առ նուաստութիւս զբանս խրատուց ձերոց, որք քաղցր են 'ի լսելիս իմ՝ քան զամ քաղցրութի. և որովք միայն քաջալերեալ զօրանամ՝ յառաջադէմ անդր ձգիլ յառաքինութիւս և 'ի գիտութիւս՝ ըստ անհրաժեշտ պարտուցս։

# ԱԶԱՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՔ

Ազատական արհեստքն որք յիմաստասիրայ եօթն հաշուին՝ են Քերականութիւն, Հռետորութիւն, Տրամաբանութիւն, Ուսումնականութի՛, Իրաւաբանութիւն, Իմաստասիրութի՛, Ա՛ծաբանութիւն։

## ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Որ հասարակաբար առեալ, իբր միապէս պատշաճեալ ամ՛ լեզուաց ըստ անյեղլի օրինաց ընդհանրական կարգի տրամախոհութեան, է գիտութիւն իմաստասիրական. այլ մասնաւորաբար առեալ ըստ միոյ ուրուք լեզուի պատշաճողութե՛, է արուեստ ուղղախօսութե՛ ձայնիւ կամ գրով ըստ իւրաքանչիւր լեզուի։

Գլխաւոր մասունք ի քերականութեան՝ են

Գիր, Վանկ, Բառ, Բան։

Լուսաբանութիւն.

Գիրն է գիծ ինչ նշանակիչ տառի։ Իսկ տառն է

հնչումն ինչ յօդելի և հեգելի. զի յօդի է այլում
հնչման. և հեգեալ է նմա՝ հնչէ զկատարեալ ձայն։
Վանկն է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ընդ-
բերան մարդոյ՝ բաղկացութեամբ ձայնաւոր և բաղաձայն
տառից. որգոն, * մա. զեն. ևն։
Բառն է ձայն նշանական. այսինքն ձայն, որ կար-
գեալ է ՚ի նշանակել ինչ։
Բանն է շարամանութիւն բառից՝ յայտնօղ տրամա-
խոհութեան մտաց։

Մասունք բանի՝ են

Անուն, Դերանուն, Բայ, Ընդունելութիւն,
Նախդրութ, Մակբայ, Շաղկապ, Միջարկութ.

Լուսաբանութիւն.

Անունն է մասն բանի, որով իրն յորջորջի. այսինքն՝ այն-
պիսի բառ, որով իրն առի այս ինչ կամ որ զէութիւն իւրն
նշանակէ. որպէս, * ծառ. լոյս. երկինք. շար. ևն։
Դերանունն է մասն բանի, որ փոխանակ անուան դնի,
և առ որոշեալ դէմս վերաբերի. որք են * ես, դու.
ինքն. իւր. իմ. քոյ. մեր. ձեր. սա. դա. նա. այս.
այդ. այն. սոյն. դոյն. նոյն. որ։
Բայն է մասն բանի, որ զառս, կամ զկիրս, և կամ
զլինելութիւն իրաց է ժամանակաւ նշանակէ՝ ըստ որո-
շեալ դիմաց. որգոն, հեղում. փոխեմ. գնամ. լինիմ։
Ընդունելութին է մասն բանի, որ նշանակէ զիրն յառ-
նելութեան, կամ ՚ի կրելութեան. և մերթ զառս՝ կամ զկիրս

ընդ ժամանակաւ։ Եւ է զոր՝ ըստ չորից վերջաւորութեանցս՝ օղ. եալ. լոյ. լի. ցի, գնօղ. գնեալ. գնելոյ. գնելի։

Նախադրութիւն է մասն բանի, որ ՚ի յառաջին յանուանս ցուցանէ զպարագայս ինչ իրին, զոր անունն նշանակէ։ Ոմանք ՚ի նախադրութեց են հոլովականք. որգոն, * ՚ի, յ, առ, առ ՚ի, ց, ընդ, զ. և ոմանք հոլովաւորք. որգոն, * ըստ. քան. վասն. ՚ի վերայ. ՚ի ներքոյ. և այլն։

Մակբայն է մասն բանի, որ զպարագայս գործողութեանց նշանակէ. որգոն, * ուր, երբ, զիարդ, մինչ, ահա. և այլն։

Շաղկապն է մասն բանի, որ յարէ ընդ միմեանս զմասունս բանի, նա և զնոյն իսկ զբանս. որգոն, * և. իսկ. թէ. զի. և այլն։

Միջարկութիւնն է մասն բանի, որ զբնական կիրս հոգւոյն յայտ առնէ. որգոն, * ով. աւաղ. վա՜հ. ևն։

## ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆ

Որ ըստ յունական ձայնի ՌԵՏՈՐԻԿԷ կոչի, որ ստուգաբանի ճարտար ասութեան. իսկ ըստ բուն նշանակութեան յայտ առնէ զարուեստ բարւոք խօսելոյ. որով դանազանի ՚ի քերականութենէ. զի այն է արուեստ ուղիղ խօսելոյ. իսկ սորա է պճնազարդ յօրինել զբանն ՚ի ձեռն ընտրելագունից գեղեցիկ բառից և ընտիր ընտիր իմաստից և ձևոց. որով և ճարտասանն դիմէ ՚ի վախճան իւր համոզելով կամ մղելով զկամս ըզ-

հեռ լինել վայելչականին, և տարհամոզելով խորշե
ցուցանել յանվայելչականէն, ևն։

## ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Որ ըստ յունայ լօճիգէ) լսի՝ է արուեստ բանական, որ ուղղէ զմիտս կամ զձեռնարկութիւնս ՚ի ճանաչումն ճշմարտութեան, և ՚ի ստացումն գիտութեան։

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Որ ըստ յունայ մաթեմաթիգի կոչի՝ է համառօտ անուն այն ամ գիտութեանց, որք թողեալ զնիւթն՝ քննեն զտեսակս և զյատկութիւնս չափելի քանակութեանց, աւանդելով զսկզբունս և զկանոնս գտանելոյ զհամեմատութիւնս, և զչափմունս նոցին. որով ՚ի յայտ գան բազում գաղտնիք բնութեան։

Մասունք ուսումնականութեան՝ են

Թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն, տեսաբանութիւն, հայելաբանութիւն, դիտակաբանութիւն, ընդօրինակութիւն, մեքենականութիւն, ջրակշռութիւն, ջրաբաշխութիւն, օդաչափութիւն, աստղաբաշխութիւն, աշխարհագրութիւն, նաւուղղութիւն, տօմարագրութիւն, ստուերաչափութիւն, ճարտարապետութիւն, հրարուեստութիւն, երաժշտութիւն։

# ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թուաբանութիւն յունական ձայնիւ առիթմէթիգէ ասացեալ՝ է նախկին մասն ուսումնականութեան, որ ուսուցանէ զբնութիւն և զյատկութիւն թուոց, կատարակաց, և համեմատութեանց, առնդելով զկանոնս յառաջատութեան և աճողութեան թուոյ՝ այլովքն հանդերձ. Այս ուսումն մայր համարի այլոց մասանց ուսումնականութեան, զի առանց սորա չկարէ մնալ յայլս. Թէպէտ սկիզբն սորա անյայտ. Դաւիթ անյաղթ ընծայէ զայն փիւնիկեցւոց, որք 'ի դարս հնութեան գոլով վաճառականք, հնարեցին առ չայս գիւտ պիտանի մարդկութեան. իսկ պիւթագորաս և այլք զնին ծաղկեցուցին.

Գլխաւոր գործք թուաբանութեան՝ են

Յաւելումն, Բարձումն, Բազմապատկումն, Բաժանումն,



## ԱՂԻՒՍԵԱԿ

# ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2 | 4 | 6 | 8 | 10 | 12 | 14 | 16 | 18 |
| 3 | 6 | 9 | 12 | 15 | 18 | 21 | 24 | 27 |
| 4 | 8 | 12 | 16 | 20 | 24 | 28 | 32 | 36 |
| 5 | 10 | 15 | 20 | 25 | 30 | 35 | 40 | 45 |
| 6 | 12 | 18 | 24 | 30 | 36 | 42 | 48 | 54 |
| 7 | 14 | 21 | 28 | 35 | 42 | 49 | 56 | 63 |
| 8 | 16 | 24 | 32 | 40 | 48 | 56 | 64 | 72 |
| 9 | 18 | 27 | 36 | 45 | 54 | 63 | 72 | 81 |

# ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹԻՒՆ։

Երկրաչափութիւնն գործնական՝ է մեքենական իմն արհեստ ծրագրելոյ զչափաբերական ձեւս՝ միջնորդութեամբ քանոնի եւ կարկնի, կամ այլոց առ 'ի նիւթ գործոյն պատշաճաւոր գործեաց։ Հիմնեալ է սոյն 'ի վերայ յատկութեանց եւ յարմարութեանց իրական մեծութեանցն՝ զորոց ճառեցեալ են 'ի սկզբունս գիտութեան Եւկլիդեայ, եւ յայլ համասեռ գործողութիւնս։

Գլխաւոր ձեւոց սահմանք երկրաչափութեան՝ են սոքին։

1. Կէտն, կամ մաթէմաթիկական կէտն՝ որ 'ի գիրս նախնեաց մերոց կոչի նշան, է այն՝ որոյ չիք ինչ մասն․ կամ տարածութիւն մարմնոյ։
2. Գիծն՝ է տարածութիւն ընդերկայն միայն, կամ է տարածութիւն առանց լայնութեան, եւ խորութեան․ եզերք կամ ծագք գծին՝ են կէտքն։
3. Ուղիղ գիծն է՝ որ հարթ հաւասար ձգի ընդ մէջ ծագաց իւրոց, այսէ՝ որոյ ոչինչ մասն անկեալ ընդ մէջ երկուց ծագաց իւրոց, որ է՝ ընդ մէջ սկզբնաւորին եւ աւարտիչ կէտիցն, չեղի զառ 'ի վեր, կամ զառ 'ի վայր յուղղութենէ գծից նոյին։
4. Մակերեւոյթն՝ որ առ նախնիս մեր կոչի եւ մակերեւութ, է մեծութիւն ինչ կամ տարածութիւն որ ունի միայն երկայնութիւն եւ լայնութիւն, վախճանոյ եզերք կամ ծագք մակերեւութին են մի կամ բազում գիծք։
5. Մակերեւոյթն տափարակ, կամ մակարդակ է այն՝ որ հարթ հաւասար տարածեալ կայ 'ի մէջ գծիցն

յորս եզերի, և որոյ և ոչ դոյզն ինչ մասն զատ 'ի վեր կամ զատ 'ի վայր խոտորի յուղղութենէ անտի դրից եզերաց իւրոց.

6. Մարմին կամ` հաստատուն, ըստ իւրում սեպհական և հասարակ նշանակութեան նշանակէ զնիւթեղէն էակս, կամ զգոյացութիւն` որք են տեսութ, և են շօշափման անկանին. բայց երկրաչափք առանձին իմն ամփոփմամբ 'ի կիր արկանեն զանուն զայս առ 'ի նշանակել զայնոսիկ քանակութիւնս, որոց են երեք չափմունք` այս է, երկայնութիւն, լայնութիւն, և խորութիւն, թէ ընդարձակագոյնք իցեն, և թէ լուծք. թէ յիրում գոյացեալք, և թէ բանիւ և եթ ըմբռնեալք, և ասեն այսպիսի քանակութիւնք մարմին, իբր զի բաղդատութիւն երկրաչափական գծի և մակերևութի, որք են սոսկ ընդ երկայն, կամ ընդ երկայն միայն և ընդ լայն տարածութիւնք, է թանձրաբանակ իմն և ստուարանիւթ, և առ այլովք տարածութիւնք իբր նիւթական իմն, և մարմնաւոր` առ անձնիւթակ անօք.

7. Եթէ գիծք եզերիչք ձևոյն` իցեն ուղիղ գիծ, կոչի ուղղագիծ ձև.

8. Ուղղահայեաց գիծն է այն որոյ երկու կէտք ուղղադիր կան 'ի վերայ միոյ կէտի այնր գծի առ որ է ուղղահայեաց.

9. Ուղիղ անկիւնէ, որոյ մի կողմն ամենևին ուղղորդ և առանց ընդ մի կողմն հակելոյ իջանէ 'ի վերայ միւսոյն. կամ որ նոյնէ, ուղիղ անկիւնէ, որոյ կողմանքն են միմեանց ուղղահայեաց.

10. Սուր անկիւնէ, որ փոքրէ, քան զուղիղ անկիւնն.

11. Բութ անկիւնն է որ մեծագոյն է քան զուղիղ անկիւն։

12. Զմայրն, կամ զմիջոյն՝ զոր պարագրէ բոլորշի գիծն անուանեմք բոլորակ։

13. Կէտն՝ յորում հաստատեալ կայ անշարժ ոտն կարկինոյն, կամ որ հաւասարապէս հեռի է յամ կէտից շրջապատին, ասի կենդրոն կամ միջակէտ։

14. Երկու կամ բազում բոլորակք՝ որք ունին ըզնոյն կեդրոն, ասին նոյնակեդրոնք կամ համակեդրոն բոլորակք։

15. Արտակեդրոն բոլորակք են այնք՝ որք ունին զայլ և այլ կեդրոնս։

16. Մասն բոլորակին՝ որ գրաւի 'ի մէջ կիսոյ շրջապատին և տրամագծին, անուանի կիսաբոլորակ։

17. Գիծն՝ որ 'ի կենդրոնէ ընդ որ կոյս և իցէ ձգի մինչև 'ի շրջապատն, ասի շառաւիղ կամ կիսատրամագիծ։

18. Գիծն որ ընդ մէջ բոլորակին ձգի շրջապատէ 'ի շրջապատ անցելով ընդ կեդրոն նորին, ասի տրամագիծ։

19. Գիծն՝ որ հպի միայն 'ի շրջապատ բոլորակին արտաքուստ բերեալ առ նովաւ առանց հատանելոյ զայն, անուանի շօշափօղ բոլորակին։

20. Գիծն՝ որ ընդ հակառակ վերնոյն՝ ձգի 'ի կէտէ ինչ որ արտաքոյ է բոլորակին, և հատեալ զշրջապատն բերի 'ի մէջ բոլորակին, անուանի հատանօղ բոլորակի։

21. Մասն բոլորակին՝ որ գրաւեալ է 'ի մէջ լարին, և մասին շրջապատի ձգելոյ 'ի վերայ նոյն լարի,

անուամբ ի հատուած բոլորակի. կամ որ նոյն է՝ հատուած բոլորակին է մասն բոլորակի, զոր հատանէ լարն։

22. Մասն շրջապատի՝ զոր հատանէ լարն, կամ որ անկանի ընդ մէջ երկուց շառաւիղաց. ասի աղեղն, կամ կամար։ Նոյնպէս աղեղն անուանի և մասն շրջապատի բոլորակին, որ չև ևս է ըստ ձևի կատարեալ։

23. Գիծն՝ որ շրջապատէ ՝ի շրջապատ ՝ի մէջ բոլորակին ձգի առանց անցանելոյ ընդ կեդրոնն, ասի լար, կամ նաև ձգանք։

24. Եռանկիւնն է ձև՝ որոյ են երեք կողմունք, և երեք անկիւնք։

25. Հաւասարակողմեան եռանկիւնն է, որոյ երեք կողմունք ևս են միմեանց հաւասար։

26. Հաւասարասրունք. կամ երկկողմնազոյգ եռանկիւնն է՝ որոյ երկու և եթ կողմունքն են միմեանց հաւասար։

27. Անհաւասարակողմեան եռանկիւնն է՝ որոյ և ոչ մի կողմն հաւասար է միւսոյն։

28. Ուղղանկիւն եռանկիւն է՝ որոյ մի անկիւնն է ուղիղ։

29. Բթանկիւն եռանկիւն է՝ որոյ մի անկիւնն է բութ։

30. Սրանկիւն եռանկիւն է՝ որոյ երեքին անկիւնքն ևս են սուր։

31. Քառանկիւնն ըստ այլևայլութեան կողմանց և անկեանց իւրոց, բաժանի ՝ի քառակուսի, յուղղանկիւն, ՝ի տարանկիւն, ՝ի տարանկիւնային, և ՝ի տրապիզեան։

32. Քառակուսին է՝ որոյ չորեքին կողմունքն են

հաւասար, և համօրէն չորս անկիւնքն են ուղիղ։
33. Տարանկիւն քառանկիւնն է այն՝ որոյ չորս կողմունքն են հաւասար, իսկ անկիւնքն՝ միայն հակադրեալքն են միմեանց հաւասար, բայց և ոչ մին է ուղիղ։
34. Զուգահեռագիծն՝ է քառանկիւն, որոյ հակադրեալ կողմունքն են միմեանց զուգահեռական։
35. Ուղղանկիւնն է որոյ չորեքին անկիւնքն են ուղիղ, բայց միայն հակադրեալ կողմունք նորին են հաւասար։
36. Տարանկիւնային քառանկիւնն է այն՝ որոյ հակադրեալ կողմունքն և հակադրեալ անկիւնքն են միմեանց հաւասար. բայց ոչ հաւասարակողմն, և ոչ հաւասարանկիւն է։
37. Տրապիզ կամ տրապիզեան քառանկիւնք, են ամենայն պարականոն քառանկիւնք ուստի քառանկիւնն որոյ հակադրեալ կողմունքն են հաւասար, ասի տրապիզեան։ Նմանապէս և քառանկիւնն՝ որոյ կողմունքն ոչ են միմեանց զուգահեռական. կամ երկուք և եթ են զուգահեռականք, տրապիզեան անուանի։
38. Գիծն՝ որ ՚ի զինչ և իցէ անկեանէ քառանկեան ձգի ՚ի հանդիպահայեաց իւր անկիւն, անուանի տրամանկիւն քառանկեան, մերթ նաև տրամագիծ։
39. Ամենայն ձևք՝ որոց անկեանցն թիւ առաւելու քան զչորս՝ հասարակ անուամբ կոչին բազմանկիւն. և ըստ այլևայլութեան թուոյ անկեանց սոցին պէսպէս տեսակք բազմանկեանց զանազանին, որոց իւրաքանչիւր է առանձին անուն, որ առեալ լինի ՚ի թուոյ անկեանց նոցին, ուստի եթէ հինգ են անկիւնք

բազմանկեան հնգանկիւն անուանի. եթէ վեց իցեն, վեցանկիւն կոչի. եթէ եօթն, եօթնանկիւն. ըստ այսմ իմն և զայլոց. Բայց աստ գիտելի է, զի բազման-կիւնք բաժանին ՚ի կանոնաւորակ, և ՚ի պարականոնս.

40. Կանոնաւորակ բազմանկիւնն է, որոյ թէ՛ կողմունք, և թէ՛ անկիւնք են հաւասար միմեանց.

41. Պարականոն բազմանկիւնն է, որոյ թէ՛ կողմունք, և թէ՛ անկիւնք ոչ են միմեանց հաւասար.

42. Զուգահեռական գիծք՝ են երկու ուղիղ գիծք՝ որք հաւասարապէս հեռի են ՚ի միմեանց՝ ըստ ամ համեմատեալ կէտից իւրեանց.

43. Զինչևիցէ կողմն եռանկեան կարէ կոչիլ խարիսխ նորին բայց հասարակօրէն խարիսխ ասի ստորին կողմն նորին, յորոյ վր իբր ՚ի վր հիման և խարսխի յեցեալ և հաստատեալ կան միւս կողմունքն.

44. Անկիւնն է բերումն, կամ՛ միտումն երկուց գծից, որք ՚ի նոյն մակարդակի փոփոխակի շօշափեն զմիմեանս, և ոչ են միմեանց ուղղադիր, այլ առ ՚ի չեղ բերին առ միմեանս.

45. Պարագրիչ բոլորշի գծին կոչի շրջապատ, կամ՛ շրջանակ բոլորակի երբեմն ևս շրջաբերութիւն.



# ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹԻՒՆ։

Աստղաբաշխութիւն է գիտութիւն երկնից, որ ուսուցանէ չափել և զննել զընթացս լուսաւորաց և զհեռաւորութիւն նոցա՝ գուշակելով զերևոյթս երկնից, և բաշխելով զանհամար աստեղս ՚ի զանազան խորանս երկնից. որք կոչին համաստեղութիւնք։

Մոլորակք որք ըստ այժմեան ներհուն աստղաբաշխից հաշուին եօթն՝ են Փայլածու. Արուսեակ. Երկիր. Հրատ. Լուսընթագ. Երևակ. և Հերշէլ։

1. Փայլածուն, քան զայլս՝ մերձաւոր է արեգական, և հեռի է ՚ի նմանէ 37 միլիոն մղոն. որոյ տրամագիծն է 3180 մղոն, և կատարէ զշրջան իւր յաւուրս. 88։

2. Արուսեակն, քան զայլս լուսափայլ՝ հեռի է յարեգակնէ 69 միլիոն մղոն, որոյ տրամագիծն է 7500 մղոն, և կատարէ զշրջան իւր յաւուրս 224։

3. Երկիրն, հեռի է յարեգակնէ 95 միլիոն մղոն, որոյ և տրամագիծն է 7928 մղոն, և կատարէ զշրջան իւր յաւուրս 365։

4. Հրատն, հեռի է յարեգակնէ 145 միլիոն մղոն, որոյ տրամագիծն է 5400 մղոն, և կատարէ զշրջան իւր յաւուրս 687։

5. Լուսընթագն, որ ունի երիզս լինել ՚ի սկաւառակին, և 4 արբանեակս, հեռի է յարեգակնէ 496 միլիոն մղոն, որոյ տրամագիծն է 94000 մղոն, և կատարէ զշրջան իւր յաւուրս 4332։

6. Երեւակն, որ ունի մանեակ ՚ի սկաւառակին, և 7 արբանեակս, հեռի է յարեգականէ 908 միլիոն մղոն. որոյ տրամագիծն է 78,000, մղոն, և կատարէ ըզշրջան իւր յաւուրս 10,759.

7. Հէրշէլ զոր ՚ի 13 մարտի 1781 Հերշէլ աստղաբաշխն նշմարեալ ՚ի գօտւոջն զոդիակոսի յորոյ անուն և կոչեցաւ Հէրշէլ հեռի է առ յարեգակնէ 1816 միլիոն մղոն. որոյ և տրամագիծն 35,109 մղոն, և կատարէ զշրջանս իւր յաւուրս 30,737.

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

1 Աշխարհագրութիւն որ ըստ յունաց լեզուին կոչի՝ է գիտութիւն, որ գծագրէ զմակերեւոյթս երկրագնտոյ որոյ ընական բաժանմունք՝ են ցամաք և ջուր.

2 Ցամաքն պարունակէ զերկիրս, զկղզիս զթերակղզիս և զցամաքակիրճս. և ջուրն՝ զովկիանոսս, զծովս, զխորշս ծովու, զնեղուցս և զգետս.

3 Երկիրն նմանի ովկիանոսի, զի որպէս երկիրն է մեծագոյն հատուած երկրի, սոյնպէս և ովկիանոսն է մեծագոյն հատուած ջուրց.

4 Երկու են մեծ և ընդարձակ երկիրք. այսինքն հին կամ արեւելեան երկիրն, որ պարունակէ զեւրոպիա, զասիա և զափրիկէ, և նոր կամ արեւմտեան երկիրն՝ որ պարունակէ զհիւսիսային և զհարաւային ամերիկա.

5 Կղզին է մաս ինչ երկրի պատեալ ՚ի ջուրց, որպէս մեծն բրիտանիա, իռլանդիա, ճամայիքա և բորնիոն

6 Ցամաքակղզին կամ Թերակղզին է սահման ինչ երկրի՝ գրեթէ շուրջ պատեալ 'ի ջուրց, որպէս Մորէա 'ի յոյնս.

7 Ցամաքակիրճն է լեզուաձև ցամաք ընդ մէջ երկուց ծովուց կամ է պարանոց երկրի որ միաւորէ զԹերակղզին ընդ երկրի. կամ զերկու երկիրս միանգամայն որպէս ցամաքակիրճն սուէզոյ, որ միաւորէ զափրիկէ ընդ ասիոյ. և ցամաքակիրճն պանամայ՝ որ միաւորէ զհիւսիսային ամերիկայն ընդ հարաւային ամերիկոյ.

8 Չորք են ովկիանոսք, այսինքն խաղաղական, ատլանտեան, հնդկաց և հիւսիսային.

9 Ծովն է փոքրագոյն հաւաքումն ջուրց, որպէս ծովն միջերկրական, ծովն բալթիկ և սեաւ ծովն.

10 Խորշ ծոց կամ գոգ ծովու է՝ որ ընթանայ ընդ ոչ սակաւ ընթացս՝ 'ի ներքս երկրի, որպէս ծոցն մեքսիկոնի, ծոցն գուինէայ և ծոցն բիսկայիայ.

11 Նեղուցն է անձուկ մասն ծովու ձևացուցեալ զանցս՝ 'ի միոյ ծովէ առ միւս ծով, որպէս նեղուցն ջիբրալթերայ, նեղուցն մագեղանայ, և նեղուցն դուվրեսի.

12 Սարաւանդ՝ գլուխ կամ հրուանդան է մասն երկրի ելեալ արտաքս 'ի ծովն կամ է մասն լերին բարձրացեալ 'ի վերայ ծովու որպէս գլուխն բարի յուսոյ, և գլուխն հորնի.

13 Ցամաքակղզին կամ Թերակղզին նմանի ծովու, քանզի ցամաքակղզին է մեծագոյն ինչ մասն երկրի յամենուստ շրջապատեալ 'ի ջուրց բայց 'ի յանձուկն նեղուցէն ուր միանայ ընդ մեծագոյն երկրի. և ծովն է մեծ տարածումն ջուրց շրջապատեալ 'ի ցամաքաց բայց

՚ի յանձուկն նեղուցէն որում միանայ ընդ ովկիանոսի

14 Ցամաքակիրճն նմանի նեղուցի, և կոչին՝ ծովակք զի կղզին բաղկանայ երկրաւ՝ շրջապատեալ ՚ի ջրոյ յամենուստ. որպ մեծն բրիթանիա։ Եւ ծովակն բաղկանայ ՚ի ջրոյ շրջապատելոյ յամենուստ ՚ի ցամաքացն. որպ ծովակն դենեւլրայ ՚ի սավոյիա։

15 Արշաւանդն նմանի ծոցոյ, զի արշաւանդն է բաց ձրացեալ մասն երկրի՝ և երկ առաջս ՚ի ծովն, որպ արշաւանդն փլորիդայ կամ կորնվալլոյ. և ծոյն է մեծ նեղուց ծովու ընթացեալ ՚ի բազում ջետս դէպ ՚ի ցամաքն, որպ ծոցքն բոնիոյ և փինլանդիոյ։

16 Խորշն է բազում ծովու ընթացեալ առ ցամաք, բայց ոչ՝ նա բազում առաւել ընդարձակ քան ծոցն, որպ խորշն բիսկայիոյ։

17 Նաւահանգիստ կամ ապաստանարան՝ է փոքրագոյն խորշ. Գոգ ծովու կամ փոքրիկ նաւահանգիստ է անձուկ իմն ջրանցարէ նմանօրինակ. ծովափն է ապաստանաձև հաստատուած ուր անվտանգ արկանեն զխարիսխ նաւու։

18 Նեղուցն կամ կիրճ ծովու, է անձուկ իմն ճանապարհ ջրոյ ՚ի միոյ ծովէ առ միւս ծով. որպ նեղուցն բրիթանիոյ, որ յօդէ զովկիանոսն ատլանտեան ընդ ծովուն գերմանիոյ։

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ժամանակագրութիւն՝ է գիտութիւն չափելոյ և որոշելոյ զժամանակս. և է կրկին. մին՝ պատմական, որ

պատահի 'ի քննել. և 'ի կարգել զերևելի գործս դիպեալս յիւրաքանչիւր կարգս. իսկ միւսն է ուսումնական, և աստղաբաշխական, որ զաստեղաբաշխական զննութիւն և զհաշիւս մերձեցուցանէ 'ի կարգել զԹուականս, և զտօմարս. և 'ի դասաւորել զեկեղեցական տօնս և զաւուրս. և սա կոչի և Տօմարագիտութիւն. և սոյն է տիրապէս տեսակ ուսումնականութեան, և ոչ առաջինն.

# ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ

# ՆԱԽՆԻ ՀԱՅԿԱԶԱՆՑ

որ տեւեաց ամս 1779.

Յետ ջրհեղեղին որդիք Նոյի՝ յաբեթ, սեմ և քամ՝, բնակեալք յլերին արարատայ՝ սերեցան որդւոց յորդիս. և բազմացան անդ յոյժ. Ապա առեալ սեմայ զորդիս իւր՝ չուեաց ընդ արեւմուտս հիւսիսոյ՝ գտանել իւր բնակութիւն. և հասեալ առ երկայնանիստ լերամբ 'ի դաշտ մի՝ ընդ որ դեռ անյայտ էր, դադարեալ առ գետովն ամիսս երկու. և զ լեառն՝ առ որով նստաւ, կոչեաց յանուն իւր սիմ. Զայն երկիր տուեալ միում 'ի կրտսերագոյն որդւոց իւրոց, որում անուն էր տարբան, դարձաւ անդրէն յարեւելս հարաւոյ՝ ուստի եկեալն էր, գտանել զայլ ևս պատշաճաւոր տեղի այլոց

որդւոյ իւրոյ։ Իսկ Տարբան ծնեալ անդ հան-դերձ ուստերօք և դստերօք և արամբք նոցին, կո-չեաց զդաւառն զայն յանուն իւր Տարոն. և նն կոչե-ցաւ յետոյ Տուրուբերան։ Բաժանեաց այսպէս զորդիս իւր յայլեայլ տեղիս այնր գաւառի. յորմէ և անդէն այն կոչեցաւ Ցրօն, ըստ ցրօնումն կամ բաժանումն։ Այնպէս և որդիք քամայ և յաբեթի բազմացեալ յոր-դիս՝ սփռեցան յերկրս այնր ծի յայլեայլ գաւառս ՚ի մեծն Հայաստան. որդիքն քամայ զսահմանօք արեւմը-տից. և որդիքն յաբեթի զսահմանօք լերինն մասեաց. և մինչ նոյ էր մի լեզու և մի բարբառ, և որպէս հաւանական թուի՝ այն էր լեզու Հայոց։ Եւ ծնաւ յաբեթ զգամեր. և գամեր ծնաւ զթորգոմ, և զաշ-քանազ. և թորգոմ ծնաւ զհայկ. յորմէ և ազգ մեր Հայք։ Իսկ Հայկ ըստ ստուգաբանութեն նշանակէ՝ Հայրիկ, ըստ միմիայն առաջին Հայր սերնդոց իւրոց՝ որք ասին Հայք, Զայս եղեալ՝ մատիցուք ՚ի հարա-զատ պատմութին մեր սկսեալ ՚ի Հայկայ.

### Ժամանակ Հայկայ.

Հայկ որդի Թորգոմայ՝ որդւոյ գամերի՝ որդւոյ յա-բեթի անդրանկանն նոյի՝ առ կենդանութեամբ նր բնա-կեալ ՚ի Հայաստան՝ ուր և այլք առ հասարակ, իբրև եղև 30 ամաց, կամ ըստ եօթանասնից 130 ամաց ՚ի բա-ժանել բնակչաց երկրին և ՚ի շինել նոյ հանդերձ որդւովք և ազխիւք իւրեանց յարարատեան ծէ յեր-կիրն սենաար ՚ի միջագետս, ինքն ևս գնաց ընդ նոս.

Ընդ 'ի շինել նց զաշտարակն 'ի բաբելոն, և 'ի խառ-
նակել լեզուացն, և 'ի սփռել բելայ 'ի վր ամենեցուն,
և 'ի կանգնել նորա զնինուէ քաղաք, եկաց Հայկ
յայնոսիկ կողմանս առանձին տամբ իւրով զամս ոչ
սակաւ ըդ իշխանութբ նորին բելայ. ուր և ծնաւ
զորդիս բազումս, զարմենակ, զմանաւազ, զխոռ և
զայլս, և բազմացաւ յոյժ.

Այլ ոչ ես կամելով հպատակել ընդ ձեռամբ բե-
լայ՝ առեալ զորդիս և զթոռունս իւր, որոց թիւ
հաշուի լինել իբր երեք հարիւր, ևս և զընդոծինս,
և զայլ բազում անձինս որք յարեցան 'ի նա, ել յնէն
բաբելոնի հանդերձ ամ աղխիւք. և խաղաց 'ի կողմն
հիւսիսոյ գնալ յերկիրն արարատայ. և եկեալ 'ի
դաշտավայր մի՝ բնակեցաւ 'ի լեռնոտի միում. Գը-
տեալ անդ հայկայ զբազում մարդիկ՝ որք յառաջագոյն
սփռեալ դադարեցին յայն տեղիս, և խօսէին 'ի լե-
զու նոյայ՝ հնազանդեցոյց զնս ըդ իւրև. Եւ զի իւր
նախնի լեզու էր նոյայն՝ 'ի լեզու նց միայարեցաւ.
Եւ շինեալ անդէն դաստակերտս՝ ետ 'ի ժառան-
գութի թոռին իւրում կադմեայ որդւոյ արմենակայ.
Եւ ինքն այլով աղխիւն խաղաց յարևմուտս հիւսիսոյ.
և եկեալ բնակեցաւ 'ի բարձրաւանդակ դաշտի մի-
ում. և անուանեաց զանուն տեղւոյն հարք, աւանդել՝
կամելով յետնոց իւրոց յիշել թէ անդ զառաջինն
բնակեցան հարք այնր ազգի՝ սերեալք 'ի տանէ թոր-
գոմայ. Այլ կառոյց անդ յիւր անուն աւան, և կո-
չեաց հայկաշէն. և որք միանգամ բնակեալ էին 'ի
հարաւակողմն այնր դաշտի, և ըստ նախագրելոյդ

խօսէին 'ի նոյեան լեզու, նոքա և ինքնակամ՝ հնա-
զանդ եղեն նմա։

Իսկ Բէլ առեալ զլուր վտարանջելոյն Հայկայ, առա-
քեաց առ նա զմի ոմն յորդւոց իւրոց հաւատարիմ՝
արամբք գալ 'ի հնազանդութիւն։ Այլ Հայկ խստուք
պատասխանեալ դարձոյց յետս զպատգամաւորսն։
Բարկացեալ ընդ այս Բէլ, և զօրաժողով լեալ եկն յեր-
կիրն Հայկայ՝ մօտ 'ի սահմանս Կադմեայ թոռինն։
Եւ Կադմոս զանձն հարեալ յերեսաց նորա՝ առաքեաց
սրա փութանակի առ Հայկ, և ծանոյց նմա զյարձա-
կումն Բէլայ. յայտ լիցի ասէ մեծիդ դիւցազանց, զի
դիմեալ գայ 'ի վր̅ քո Բէլ բազմութ̅բ քաջաց և
հսկայից. և ես իբրև գիտացի՝ թէ մերձեցաւ 'ի
սահմանս իմ՝ առաքեցի ծանուցանել քեզ զգալուստ
նր̅. և արդ փութասջիր խորհել՝ թէ զինչ ունիցես
առնել։ Եւ ինքն Կադմոս խուսափեալ է առ զընտա-
նիս իւր, և եկն առ Հայկ տագնապաւ։

Իսկ Բէլ վստահացեալ 'ի բազմութիւն արանցն՝ որք
ընդ նմա, և 'ի զօրութիւն իւր. իբրև զյորձանս սաս-
տիկ հեղեալ՝ փութայր հասանել հետևակօք 'ի սահ-
մանս բնակութեն Հայկայ։ Այլ արին Հայկ աձաղա-
րեալ՝ հաւաքեաց զորդիս և զթոռունս իւր արս քաջս
և հզօրս, հաստաբազուկս և կորովիս, և զայլ ևս
որք էին ընդ ձեռամբ իւրով՝ ամ̅քին աղեղնաւորք թե-
ւէտ և թուով սակաւք. և եհաս յեզր ծովակի միոյ
որոյ ջուրք էին աղի և ձկունք մանր. այն է վանայ
ծովն։ Անդ սակաւ մի զանգի առեալ՝ քաջալերեաց
զորս ընդ իւր էին, և ասէ. 'ի հանդիպել մեր զըն-

դին բելայ՝ դիմեցաք յայն կողմն Չակատու նորա՝ ուր էր նա ինքն բել. և զ յաջողութիւն մատանց մերոց ցուցեալ հարցաք զնա. և ցուցեցաք զթիկնապահս նորա. և մեր եղիցի յաղթութիւն. ապա թէ ոչ յաջողեսցի մեզ՝ մեռցուք քաջութեամբ, և ամենքին մեր ՚ի ծառայութիւն բելայ մնասցէ.

Եւ ապա անցեալ յառաջ ՚ի միասին՝ եկին ՚ի միջոյս դաշտաց և լերանց. և հանդարտեցին անդ ՚ի բարձրաւանդակի միում՝ որոյ ՚ի յաջմէ հոսէին ջուրք. Անտի հայեցեալ տեսին ՚ի հեռուստ՝ զի բազմութիւնք զօրացն բելայ իբրև զմրրկայոյզ ամպս թխպագին դիմեալ գային յանդուգն յարձակմամբ.

Եւ ինքն բել յամբոխէ անտի խուռն զատուցեալ լինէր արամբք՝ հասանէր ՚ի բլուրն որ կայր ՚ի հանդիպոյ ՚ի ձախմէ ջուրցն. և անտի իջեալ խաղայր ՚ի վր հայկայ. Եւ էր նա ագուցեալ ՚ի գլուխ իւր սաղաւարտ երկաթի՝ զարդս ունելով ՚ի գագաթան. և տախտակ պղնձի ՚ի վր լանջացն և թիկանց. և զահպանակ զրահից ՚ի բազուկս և ՚ի բարձս ոտից. գօտի ընդ մէջ. և սուր երկսայրի յագդեր իւրում. նիզակ մեծ յաջ ձեռին, և վահան ՚ի ձախոյ. յերկոսց կողմանց նր եւս վաշտակաւորք և նիզակաւորք քաջք.

Զայն տեսեալ հայկայ՝ փութացաւ և կարգեաց յաջմէ իւրմէ զարմենակ երկու եղբարբք, և ՚ի ձախմէ իւրմէ զկադմոս, և զայլ երկու որդիս իւր ընդ նմա. զի էին նորա արք հզօրք, և ինքն առաջի. և զայլս զկնի եռանկիւնի իմն ձեւով. Եւ եղև իբրև պատահեցան միմեանց կողմանքն երկոքին, դղրդիւն իմն

ահագին լինէր անդ. և 'ի հարկանել զլերինս սաս-
տիկ՝ բազումք անդէն տապալ լերինք կործանէին և
մեռանէին. և մարտն մնայր անպարտելի:

Զայսպիսի անակնունելի ելս տեսեալ Բելայ՝ զար-
հուրեալ յանձն իւր. և նահանջեալ յետս՝ խորհէր
և փութայր ելանել 'ի բլուրն յայն՝ ուստի իջեալն
էր. որպէս զի անդ իբր յապահովի ամրացեալ՝ սպաս
եսցէ գալստեան բովանդակ զօրուն՝ յորմէ անջատեալն
էր. և ինքն միւսանգամ ճակատ յարդարեսցէ:

Բայց քաջին Հայկայ իմացեալ զայս՝ յառաջ վարեաց
զանձն, և ընթացեալ 'ի վերայ նր. և քարշեալ զաղեղն
պինդ՝ ձգեաց և թողոյց զնետն եռեքթևեան 'ի նա
ուժգնակի. և նետն անցեալ ը՟ պղնձի տախտակ կըր-
ծոցն՝ ել ը՟ մէջ թիկանցն և անկաւ յերկիր. և Բէլ
անդէն կործանեալ և թաւալեալ մեռաւ 'ի հասակի
երեքհարիւր ամաց. և ամբոխն՝ որ ը՟նդ նմա տեսեալ
զայսպիսի ահագին գործ քաջութեն Հայկայ, ցրուեցան
անտի և փախեան:

Իսկ Հայկ առեալ զաւար անկելոցն, և կանգնեալ
անդէն զդաստակերտ՝ կոչեաց զտեղի պատերազմին
Հայք. զի անդ ցուցին Հայք զ քաջութի իւրեանց. և
զտեղին ուր անկաւ Բէլ՝ անուանեաց գերեզմանք.
Հրամայեաց ապա՝ պատել դեղովք զդին Բելայ, և
տանել 'ի Հարք, և թաղել 'ի բարձրաւանդակ տեղ-
ւոջ 'ի նշան իւրոյ քաջութե: Իսկ ապա տուեալ Կադ-
մեայ բազում ինչ յաւարէ անտի, եւս և արս հզօրս,
պատուիրեաց նմա գնալ 'ի տեղի իւր: Իսկ ինքն դարձ-
եալ 'ի Հարք գաւառ՝ հաստեաց յԹի անդ մէա-

պետական իշխանութիւն իւրումն ազգի ։ Ա՜յ այսր գոր-ծոյ՝ զոր գործեաց Հայկ, կոչէ զնա վարդան ՚ի Հնա-խօսութեան մխիթարեայ անեցւոյ, * Ճանային փառաւորա-խանձախնդիր||. զի ոչ պաշտելով ամե զպատկերն բելայ, սատակեաց զնա իբր զառաջնորդ կռապաշ-տութեան.

Ըստ մարիբասայ գրելոյն մովսէս խորենացին կոչէ զՀայկ՝ գեղեցկագոյն, գեղապատշաճ, քաջագանգուր, խաժ-ակն, անձնեայ, Հաստաբազուկ, Հաստաղեղն, կորովա-ձիգ, ուշեղ, խոհեմ և քաջ. Եւ կարի յիրաւունս զի ՚ի այսպիսի Հանգամանաց անձին յաւելի քաջութիւն ցուցեալ երևի արխ այս Հայկ. մանաւանդ ՚ի յաղթա-նակել Նր մեծին այն բելայ, և ՚ի նուաճել ընդ-իւրև զայլս.

Այն ասա յետ բաղումարքական գործոց և քաղաքա-կան կարգաց և Յի շինութեց, և Հիացուցիչ Հանդի-սից՝ որք գրէ գրիգոր մագիստրոս, և յոհան կա-թուղիկոս, կեցեալ ամս ոչ սակաւ՝ մեռաւ Հանգըս-տեամբ յիւրում Յի, յանձն առնելով արմենակայ որդ-ւոյ իւրում զազգ իւր բովանդակ.

Իսկ թէ յորում Հասակի մեռեալ իցէ՝ չունիմք ՚ի պատմութեց. բայց յաճախութենէ գրոց գիտեմք սաս-տիկ, զի յայն ժամանակս մինչև ՚ի չորս Հարիւր ամ երկարէր առ Հասարակ կեանք մարդկան՝ որք իւ-րեանց մահուամբ մեռանէին. և քանզի ժամանակակից էր նոյա Հայկ. Հարկ է ասել՝ թէ կեանքն Նր ձգե-ցաւ չորեքՀարիւր կամ երեքՀարիւր ամ. իսկ յետ ամենելոյ ՚ի բելայ և յետ սպանանելոյ զնա՝ կեցեալ

և տիրեալ իցէ ազգին Խուրոյ ամս 80. տես 'ի պատմ. ա. 3. և 'ի ծանօթ. ա. (5). Իսկ ող զՀայկայ ասացաք, նոյնպէս փոքր ինչ նուազութ՟ք պարտ է խմանալ և վս այլոց նահապետաց մերոց մինչև ցարամ. Արդ 'ի Հայկայ և յորդւոցն իւր սերեալ ազգք անուանեցան Հայք. որք կոչեցան ևս Թորգոմեանք կամ տուն Թորգոմայ յանուն Թորգոմայ Հօրն Հայկայ. ևս և Աքանազեանք յանուն Աքանազայ եղբօր Թորգոմայ. երբեմն և յաբեթեանք յանուն նախահաւուն Թորգոմայ. Սոյնպէս և Ծնն' ուր սփռեցան և բազմացան նքա, յանուն Հայկայ Հայք, կամ Հայաստանեայք.

Ունէր Հայկ և զեօթն եղբարս. ոյք են Քարթլոս, Բարդոմոսկան, Լեկա, Հերաոս, Կովկաս և Եգրէս. Գնացեալ Քարթլոսի 'ի լեառն' որ կոչի Արմազ, շինեաց անդ զամրոց' զոր կոչեաց որբէթ յանուն կրտսեր որդւոյ Խուրոյ. այս ամրոց շամշողդէ ևս կոչեցաւ. Ընդ եկեալ բնակեցան ազգ Ձինայ. և յանուն տեղւոյն կոչեցան որբեթեանք, որք նաև Ուռպելեանք ասացան. Սոյնպէս և երէց որդի Քարթլոսի շինեաց զՔաղաքն մծխիթա յանուն իւր. Իսկ ահա 'ի սոյանէ սերեցան ազգ Վրաց. Իսկ Լեկա կամ Լեկ կամ ղեկ միջին եղբայր Հայկայ հոշեալ ընդ արևելս Հիւսիսոյ' բազմացաւ անդ. և ազգ նորա կոչեցաւ Լեկզի. Սոյնպէս և այլ եղբարք նոցա սփռեցան. և բազմացան յայլ տեղիս. տես 'ի պատմ. ա. 3. 'ի վերջն.

Արմենակ որդի Հայկայ յետ մեռանելոյ հօր իւրոյ միապետեաց զՀայկազնեայս, եւ թողեալ 'ի Հարք զերկուս յեղբարց իւրոց զՄանաւազ եւ զԽոռ հանդերձ ազխիւ իւրեանց՝ ետ զբազմութիւն սերնդոց իւրոց եւ ընդոծնայն, եւ գնաց յարեւելս հիւսիսոյ. եւ եջ 'ի դաշտ մի պարափակեալ բարձրագագաթ լերամբք. ուր ընդ մէջ դաշտին անցանէր Է երկայնունի կարկաջահոս գետ յարեւմտից կուսէ. եւ առ լերամբքն բղխէին ականակիտ աղբերք. Ընդ 'ի հիւսիսոյ կողմանէ առ ստորոտով լերին միոյ բարձու եւ մեծի շինեաց Արմենակ տեղի բնակութեան. եւ անկեաց բնակաւ մեծ՝ սօսեաց, եւ զլեառն զայն կոչեաց յիւր անուն Արագած. զի Արմենագած, իբր թէ Արմենակայ տեղի. եւ զկալուածսն անուանեաց ըստ Արագածու. Ընդ կենաց Արմենակայ ամս բազում՝ յանձն արար որդւոյ իւրում Արամայիսայ զվերակացութիւն ազգին, եւ մեռաւ. պատուպանեալ ամս իբր 46. կամ ըստ եօթանասնից 96.

Իսկ Մանաւազ եղբայր Արմենակայ՝ ժառանգեաց զտեղին Հարք՝ բնակեալ եւ բազմացեալ անդ. եւ շինեաց քաղաք որ կոչի Մանաւազկերտ. եւ 'ի սմանէ սերեցան Մանաւազեանք. Իսկ որդի նորա Բազ ժառանգեաց ընդանուն յեզր Աղթամար ծովուն յարեւմտից հիւսիսոյ. եւ 'ի սմանէ սերեցան Բզնունիք. Որդիքս եւ Խոռ 'ի կողմանս յիւսիսոյ բազմացեալ կարգեաց զշէնս. եւ 'ի սմանէ սերեցան Խորխոռունիք.

Վաղարշակ, Թագաւ.

Աւանդի ՚ի հնախօսութիւն Հայոց՝ թէ կային արմենա-կայ և այլ երկոտասան եղբարք, յորոց եղան անուանք երկոտասան ամսոց։ Նոյն ասի և քսան և չորս քորք, յորոց եղան անուանք քսան և չորս ժամուց. տես ՚ի բառարանն հնագրոց ՚ի բառն ժամ։

Արամայիս որդի արմենակայ յետ մահու հօր իւրոյ պայազատեալ զազգն՝ շինեաց իւր քաղաք կոփածոյ քարամբք ՚ի դաշտի անդ արագածու յարալատեան Ծի առ եզերբ գետոյն գեհոնմնայ ՚ի վերայ բլրոյ միոյ. և անուանեաց զքաղաքն զայն յիւր անուն արմաւիր. և զգետն յանուն թոռին իւրոյ երասխայ՝ երասխ. և յայնմ հետէ այն քաղաք եղև առաջին և գլխաւոր յԾին Հայոց, և յետոյ Թագաւորանիստ.

Եղեն արամայիսայ որդիք բազում. յորոց մին շարայ անուն՝ այր շատակեր՝ եղև բազմածին յոյժ. որոյ վՅ որոշեալ զնա արամայիս յայլոց որդւոց իւրոյ՝ առա-քեաց հանդերձ աղխիւն ՚ի դաշտ մի մօտաւոր արգա-ւանդ և բերրի. ընդ որ անցանէր ախուրեան գետ. Ընդ բնակեալ շարայի բազմացաւ. և գաւառն այն կոչեցաւ յանուն նր շիրակ. և այս ՚ի շատակերութե նր, և յարգաւանդահող լինելոյ գաւառին եղ ՚ի մէջ ռամկաց բան այն՝ որ ասիւր առ շատակերս. * եթէ քո՝ շարայի որկորն է, մեր՝ շիրակայ ամբարքն չեն|| ։ Իսկ արամայիս կեցեալ ՚ի նահապետութե ամս իբր 40 կամ 90. մեռաւ։

Ամասիա որդի արամայիսայ յետ մահու հօր իւրոյ նըս-տաւ ՚ի տեղի նր յարմաւիր, և եղեն նր որդիք գե-ղամ, փառոխ և ցոլակ. Զասա առեալ Ձ իւր ամա-

նեայ՝ խաղաց մօտ 'ի լեառն Արարատայ. և անդ առ ստորոտամբ լերին 'ի վայելուչ և եղեր մերձ յակունս աղբերաց շինեաց բազում ծախիւք զերկուս աւանս հեռի 'ի միմեանց աւուր միոյ ճանապարհ. զմին յարևելակոյս, և զմիւսն յարևմուտս. և ետ զնա երկուց որդւոց իւրոց փառոխայ և ցոլակայ. յորոց այն տեղիք զանուն ընկալան, մին փառախոտ, և միւսն ցոլակերտ իսկ զլեառն արարատայ յիւր անուն անուանեաց մասիս, և զգաւառն՝ մասեաց ոտն։ Եւ ինքն հանդերձ գեղամաւ դարձ արարեալ յարմաւիր՝ եկաց զժամանակ ինչ և մեռաւ՝ պայազատեալ ամս իբր 32, կամ 82։ Գեղամ որդի ամասեայ յետ մահու հօր իւրոյ յաջորդեալ 'ի տեղի նորա յարմաւիր, զկնի քանի մի ամաց եթող անդ զորդի իւր զհարմա հանդերձ որդւովք նորին. և յանձն արարեալ նմա զպայազատութի ազգին՝ եանց 'ի միւս կողմն երասխ գետոյ, և խաղաց 'ի հիւսիսակողմն արևելից. և հասեալ յեզր սևան ծովու՝ շինեաց անդ իւր շէնս և աւանս և բնակարանս, զորս և կոչեաց գեղարքունիս, և զլեառն որ անդ կայր՝ անուանեաց գեղ կամ գեղամ. յորմէ և ծովակն այն

կոչեցաւ ծով գեղամայ։

Ընդ կացեալ գեղամայ զժամանակ ինչ՝ յանձն արար զտեղին զայն միւս որդւոյ իւրում՝ որ կոչիւր սիսակ, այր անձնեայ և գեղեցիկ, վայելչահասակ և քաջաղեղն, կորովաբան և քաղցրաբարոյ. որով և կոչեցաւ աղու, իբր թէ աղի՛ համեմեալ, այն է անոյշ։ Պարգեւեաց սմա գեղամ և զմեծ մասն ընչից իւրոց, և ետ 'ի ժառանգութի զբազում տեղիս հարաւային կողմանս

այնր ծովակի յարևելս կոյս։ Ուր բնակեալ սխակայ՝ ելից շինութբ զսահմանս տեղւոյն. և զնն կոչեաց յիւր անուն սխական, որ կոչի և սիւնիք. յորմէ սերեալ.

Նախարարութիւն սխակեանց և սիւնեաց։

Սա առաւել ևս ընդարձակեալ զտէրութիւն իւր ընդ-արևելս մինչև 'ի գետն կուր՝ նուաճեաց ընդ իւրև զբնակեալսն յայնոսիկ կողմանս, ևս և զբնակիչս յայն կոյս գետոյն կուրայ մինչև 'ի սահմանս կասպից ծո-վուն. որով և ցն այն անուանեցաւ աղուանք յերկրորդ-

անուանէ նր. որ և կոչեցաւ շիրուան։

Իսկ գեղամ՝ յետս դարձեալ, և եկեալ 'ի դաշտ մի՝ որ ընդ մէջ գետոյն երասխայ և ծովակին սևանայ՝ շինեաց քաղաք 'ի վր հեղեղատի առ ոտամբ լերին. և զայն քաղաք կոչեաց գեղամի կամ գեղամէ, որ յետոյ նորոգեալ 'ի միոյ 'ի թոռանց նր՝ որում անուն էր գառնիկ՝ կոչեցաւ գառնի։ Յետ այսր ծմի կեցեալ գեղամայ ժամանակս բազում՝ մեռաւ անդ 'ի գե-ղամէ. պայազատեալ է ամ ամս իբր 50. կամ 100։ Հարմա որդի գեղամայ՝ որ պայազատէր զազգն յարմա-ւիր, շինեաց պարիսպ քաղաքին վիմովք. և կանգնեաց 'ի քաղաքի անդ և արտաքոյ հոյակապ ապարանս. և սի-րեալ յետ հօր իւրոյ ամս իբր 31, կամ 70 մեռաւ. Թողեալ զմեծապետութիւն ազգին որդւոյ իւրում արամայ։

Արամորդի Հարմեայ յաջորդեալ ՚ի տեղի հօր իւրոյ եղև անուանի յոյժ ՅԾ ամ. վԾ զի խոհական և արիական գործոց զհետ լեալ՝ արար բազում քաջութիւնս. և ՚ի վՐ հայրենեաց խնամարկեալ հարձակեաց ըզ-նոյն ՚ի լերանցն կովկասու մինչև ՚ի լերինս տորոսի՝ վանելով զթշնամիս, որք նորոգ սկսեալ էին մուտ առնել յայն Ծ, և նեղել զազգն.

Սա ՚ի սոյանէ՞ էր նիւքար իշխանն մեղայ այլ ոյ ՓՅ մա-րայ՝ այր հզօր. որ ՚ի յետոյն ժամանակս հարմեայ հաւաքեալ զօրօք ՚ի սահմանս ուլեք Հայոց՝ ՚ի հարկի կացուցեալ էր զնա ամս երկուս, և հանդերձեալ էր յարձակիլ ՚ի ներքս. Իսկ արամ ժողովեալ ՚ի Հայ-ոց արս քաջս և առոյգս, աղեղնաւորս և գեղարդա-ւորս իբր յիսուն հազար, և դիմեալ յայն կողմն իւրոյ Թին՝ ուր տիրեալ էր նիւքար. յաւուր միում յանկար-ծակի յառաջ քան զծագել արևու եհաս և անկաւ ՚ի վՐ նր. և ՚ի դիմի հարեալ սաստկեաց զբազմութի ամբոխից նր. և կալեալ զնա ինքն զնիւքար էած յար-մաւիր. և հրամայեաց ցից երկաթի վարել ՚ի ճակատ նր, և վարսել ՚ի ծայր աշտարակի պարսպին ՚ի տե-սիլ անցաւորաց. և զԹն նիւքարայ ՄԾ մասին կացոյց ՚ի հարկի մինչև ըլեաւն գարասպ.

Յետ իբր երից ամաց դիմեալ յԹն Հայոց բարշամ իշխանն բաբելոնացւոց քառասուն հազար հետևակօք, և հինգ հազար հեծելազօրօք. Առեալ յայն ժամ արամ ամեայ զաղեղնաւորս և վաղակաւորս իւր՝ յարձակեցաւ.

՚ի վերայ նորա․ և յանակնկալ պաշտօն պատահեալ՝
նմա՝ հալածական արար զզօրս նորա․ և սատակեաց
զբազումս ՚ի նոցանէ․ և կալեալ զբարշամ սպան ընդ
խաղաց ապա յարևմուտս ՚ի կողմանս կապադովկեա-
ցւոց քաղաքաւն հազար հետևակօք, և երկու հազար
հեծելովք․ իսկ պայազատ իշխան այնորիկ կողմանց՝
որ ՚ի տանէն քամայ՝ անուանեալ Թէ տիրել ունէր արամ
սահմանաց ծովու․ ել ընդդէմ նորա սաստիկ պատերազ-
մաւ։ Եւ արամ հասեալ ՚ի վերայ նորա՝ փախստա-
կան տարաւ զնա, և եարկ ՚ի կղզի ինչ միջերկրա-
կան ծովուն (որ Թուի լինել կիպրոս)։ Եւ ապա
դարձ առաքեալ ՚ի կապադովկիա՝ եդ անդ մարզպան
զմի ոմն յազգէ իւրմէ մշակ անուն, և տուեալ հազար
զօր ՃԷ նմա ՚ի վերայ երկրին․ և հրամայեաց՝ զի բը-
նակիչք երկրին այնորիկ խօսեսցին ՚ի լեզու հայոց․ և
ինքն գնաց յետս իւր ՚ի հայս․ և անդ ևս եղեալ կրկին
բազում գործս քաջութեան յայլ և այլ սահմանս․ և արար
բազում ուղղութիւնս․ և այնչափ եղև անուանի, մինչև
յանուն նորա կոչել այլոց ազգաց զերկիր մեր՝ արմէնիա
և զազգս՝ արմէն կամ էրմէնի, այսինքն է արամեան։
իսկ մշակ մարզպան (որ ՚ի գիրս յունաց մոսոք կոչի)
շինեաց անդ ՚ի կապադովկիա՝ քաղաք, և պարսպեաց
որմովք․ և կոչեաց զայն յանուն իւր մշակ․ իսկ բնա-
կիչք տեղւոյն ոչ կարելով ուղիղ արտասանել՝ անուանա-
նեցին մաժակ․ որ և յետոյ կոչեցաւ կեսարիա․ այն է
զայսէրի։
Եւ քանզի այն երկիր՝ զոր էառ արամ՝՝ արտաքոյ է մեծին
հայոց, վասն կոչեցաւ առաջին հայք (արտաքոյ մեծի)

Հայաստանի). և մասնաւոր յորջորջմամբ կոչեցաւ ՚ի յանուն արմենիա. և զի արամ հետ զհետէ եառ և զայլ բազում տեղիս յայնոսիկ կողմանս և ելից բնակչօք, և ետ նոցա խօսել հայերէն. սմին իրի նաև այնոքիկ սահմանք կոչեցան երկրորդ Հայք, և երրորդ Հայք. երեքին ՚ի Միասին անուանեալ փոքր Հայք. Եւ զի առ երի կայ նոյ մին ՚ի հնգետասան ազգ մեծին Հայոց առ եփրատաւ, հայեցոյ առ սոսա կոչեցաւ այն չորրորդ Հայք. Եւ եղև ՚ի թագաւորել նինոսի յորդւոյ անտի բելայ ՚ի վերայ ասորեստանի տիեզերական իշխանութե, և ՚ի գործել նորա մեծամեծս, տեղեկացեալ ՚ի պատմութեց՝ թէ բել նախահաւ իւր սպանեալ իցէ ՚ի հայկայ՝ երկնէր ՚ի սրտի առնուլ վրէժ յորդւոյ նորա. որոյ վս կամեցաւ յարձակիլ ՚ի վերայ արամայ. բայց խորհրդով աւագանւոյն նահանջեցաւ՝ զանգիտեալ ՚ի համբաւոյ արիական գործոյն արամայ. խաղաղութ խօսեցեալ առա զնմա՝ անուանեալ զնա երկրորդ իւր. և ետ նմա ածել վարսակալ մարգարտեայ, որ յայնմ ժամանակի մեծի փառաց էր նշան։ Եւ արամ պայազատեալ զորդ իւր արայ իբր 58. փոխանակեցաւ. թողեալ զտէրութիւն

ազգին որդւոյ իւրում արայի.

Արայ որդի արամայ՝ որ վս գեղոյ դիմացն կոչեցաւ գեղեցիկ. պայազատեալ զհայս՝ պատուեցաւ ՚ի նինոսէ. և նորոգ զարդարեաց զազգ Հայոց. յորմէ և ազգն՝ յորում էր գլխաւոր քաղաքն արմաւիր, կոչեցաւ արարատ՝ կամ այրարատ. յորմէ և բոլոր Հայաստան, ևս և իշխանութին Հայոց անուանեցաւ այրարատեան,

Նա կեցեալ ամս քանի մի՝ ծնաւ զկայրդոս ՚ի Նուէարդայ կնոջէ իւրմէ.

Եւ եղեւ ՚ի մեռանիլ յաւուրս մը Նինոսի՝ Թագաւորեաց ՚ի վերայ աստրեստանեայց կին նորա Շամիրամ. և սա եղեւ ՚ի կանայս որ Թագաւորեաց զառաջինն. Այս կին գոլով վավաշոտ՝ լուեալ զգեղեցկութէ արայի՝ պատգամաւորս յղեաց առ նա՝ գալ և ամուսնանալ ընդ իւր, և Թագաւորել ՚ի Նինուէ. և կամ յետ կատարելոյ զկամս իւր դառնալ յետ բազմապատիկ պարգևօք. Եւ զկնի բազում պատգամաւորութեց իբրև ոչ էառ յանձն արայ զայսպիսի հրաւէր ամօթալի՝ դիմեաց Շամիրամ ՚ի վերայ նորա պատերազմաւ. այլ հրամայեաց զօրաց իւրոց, զի զգուշասցին արայի կենդանութն ունել զնա.

Ել արայ զօրօք ըդէմ նորա. և ՚ի խառնիլ ճակատուցն՝ անկաւ արայ ՚ի մարտի և մեռաւ. պայազատեալ ամս իբր 26. Լուեալ Շամիրամայ զմահ արայի՝ քուէարեցաւ և սգացաւ. և հրամայեաց գտանել զդի նորա, և դնել ՚ի տեղի զգուշաւոր. զի գուցէ դիւթութբ հնարեսցի կենդանացուցանել զնա. իսկ զօրք հայոց գրգռեալ միաբանգամ վրէժխնդիր լինել մահուան արայի՝ պատրաստեցան մտ զօրութբ ՚ի պատերազմ ընդդէմ Շամիրամայ. Այլ Շամիրամ իբրև ետես՝ թէ դիւթութբ չկարայ յարուցանել զարայ, մանաւանդ թէ նեխեցաւ դի նորա, հրամայեաց ընկենուլ զնա ՚ի վիհ մի մեծ, և ծածկել. և փոխան նորա զմի ոմն ՚ի հոմանեաց իւրոց զարդարեալ՝ համբաւեաց թէ դիքն լիզեալ զարայն յարուցին ՚ի կենաց

Յայսմ համբաւոյ զօրք Հայոց Հանդարտեալ դա-
դարեցան ՚ի պատերազմէ. և Շամիրամ ՚ի սէր Արային
զԿարդոս որդի նորա՝ որ էր երկոտասան ամաց, անուա
նեալ Արայ, և կացոյց ՚ի տեղի նորա։ Կացեալ Շա-
միրամայ ՚ի Հայս զժամանակ ինչ, և տեսեալ ըզ-
գեղեցկութիւն երկրին Հայոց, և զմաքրութիւն օդոյն
և զբղխմունս ականակիտ աղբերաց, շինեաց յեզր ծո-
վուն աղթամարայ (յորևելից է Հարաւակողմն) քա-
ղաք հրաշակերտ. աշխատեցուցեալ յայս գործ երկո
տասան Հազար գործաւորս և վեցհարիւր Ճարտարա
պետս յամ արհեստից. այն է քաղաքն Շամիրամակերտ.
որ յետոյ Վան կոչեցաւ. և եղև իբր ամառանոց Շա-
միրամայ.

Կարդոս՝ որ և Արայ Արայեան կոչեցաւ, յետ միապե
տելոյ զՀայս ծնաւ զԱնուշաւան. և նուիրեաց զայն
՚ի սօսին՝ որ յանտառս սօսեացն Արմենակայ մօտ
յարմաւիր. զի որ նուիրեալ լինէր ՚ի նոսին՝ սուրբ
համարիւր և դիւցազն. վասն զի կարծէին՝ թէ դիք
բնակին ՚ի սօսին անդ. յայս իսկ և Անուշաւան սօս
կոչեցաւ որ սօսանուէր.

Յայն աւուրսն յարեաւ Նինուաս որդի Շամիրամայ ը-
դէմ մօր իւրոյ. և ՚ի գործուիլ ահեղ պատերազմաց՝
փախեաւ Շամիրամ ՚ի Հայս. և միաբանեալ ընդ Կար-
դոսի՝ յարձակեցաւ ՚ի վր̄ Նինուասայ. և մեռաւ ՚ի
ձեռամբ ը̄ Կարդոսի ՚ի Հասակի 62 ամաց. իսկ Կար-
դոս ՚ի Հասակի 30 ամաց, պայազատեալ զՀայս ամս
իբր 18.

Անուշաւան որդի Կարդոսի ՚ի տղայութեան Հասակի՝

գոլով իբր 14 ամաց՝ անկաւ ՚ի ձեռս Նինոսեայ և եկաց յարքունիս նր իբր գերեալ որդի իշխանի. Եւ սակայն յետոյ ՚ի զարգանալ իւրում հաճոյացեալ մեծամեծաց վն անուշութե բարուցն՝ միջնորդութբ նց ազատեալ ՚ի ձեռաց նր՝ հասեալ յինքն զմաս ինչ իւրոյ ՏՆ՝ խոստանալով տալ նմա հարկս. Եւ եղև սա այր բազմահանճար և զօրաւոր. որ և զկնի ժամանակաց գրաւեաց յինքն զՏ իւր համայն. և արար բազում գործս ուղղութե. և կեցեալ յետ մահուն կարդոսի ամս իբր 63. մեռաւ.

## Ժամանակք պարէպայ մինչև ցԱղայորդէ.

Յետ անուշաւանայ ՚ի զարմից նր ոչ գտաւ որ տիրող ՏՆ հայոց. այլ ոմանք որք սերեալ էին ՚ի հայկայ՝ բռնացեալ տիրեցին մինչև ՚ի թագաւորել պարոյրայ. զորս առաջի արասցուք կարգաւ.

Պարէտ ոմն ՚ի հայկազանց անուն իշխան հզօր՝ եւ տասարդ անպարտելի՝ ՚ի մեռանիլ անուշաւանայ նուաճել իւր զազգս հայոց՝ տիրեաց բռնաւորաբ ՏՆն, ընդ բազումս բազում անգամ պատերազմելով. և կեցեալ աւելի քան զամս 50. մեռաւ. ՚ի սորա աւուրս վախճանեցաւ յովսէփ նահապետն յեգիպտոս ՚ի հասակի 120 ամաց.

Արբակ յետ մահուն պարետայ տիրեաց ՚ի վն հայոց ամս իբր 44.

Զաւան այր զօրաւոր պայազատեաց յետ արբակայ ամս իբր 37. ՚ի սորա աւուրս հասուցեալ սկիզբն մովսէ-

պետութե՛ աթենացւոց. և յետ այնր սկիզբն միապե-
տութե՛ լակեդեմոնացւոց յՅին մօռայի.

Փառնակ առաջին՝ տիրեաց յետ զաւանայ ամս իբր 53. Սա վանեցաւ յարքայէն եգիպտացւոց 'ի սեսոստրեայ. Եւ 'ի մեկնիլն 'ի Հայաստանէ՝ ձեռն էարկ փառնակ շինել և բազմացուցանել զամուրս. 'Ի սորա աւուրս ելին որդիքն իսրայէլի յեգիպտոսէ յամի
2513 կամ 3712.

Սուր յետ փառնակայ առաջնոյ պայազատեաց զՀայս ամս իբր 45. Սա գտաւ սուսեր Հատու ընդդէմ թշնամեաց. և եղև սիրելի զօրաց իւրոց. 'Ի սորա աւուրս մտին որդիքն իսրայէլի յերկիրն քանանացւոց և ժառանգեցին զայն. Եւ յ՞Հէ նդ̃ ոմանք 'ի քանանացւոց խոյս ետուն յՅ̃ մեր 'ի Հայս. որոց առաջնորդ էր քանանիդաս ոմն այր Ճոխ և երևելի. յորմէ սերեցաւ 'ի Հայս նախարարութի քանանիդեանց, որք են գնթունիք.

Հաւանակ կամ՝ Հոնակ յետ սուրայ պայազատեաց
զՀայս ամս 30.

Վաշտակ յետ Հաւանակայ տիրեաց ամս իբր 22.

Հայկակ առաջին յետ վաշտակայ ամս իբր 18. Սա եղև այր խորոխտ և պատերազմասէր. որ և քաջութ̃ նուաճեաց զամենդես զարքայն ասորեստանի, յամի 2634. կամ 3833. Եւ 'ի նստիլ յաջորդի նր̃ բեղոքեայ՝ կամելով Հայկակայ զնա ևս յաղթահարել՝ 'ի պարտութի մատնեցաւ յերեսաց նր̃. և անկաւ 'ի մարտի.

Ամբակ առաջին՝ յետ Հայկակայ առաջնոյ տիրեաց
Հայոց ամս իբր 14.

Առնակ յետ ամբակայ առաջնոյ ամս իբր 17.

Շաւարշ առաջին յետ Անուշաւանայ ամս իբր 6. առ շի-
նեալ զշաւարշան քաղաք.

Նորայր յետ Շաւարշայ առաջնոյ ամս իբր 24.

Վստամ՝ յետ Նորայրայ ամս իբր 13.

Կար՝ յետ Վստամայ ամս իբր 4.

Գոռակ՝ յետ Կարայ ամս իբր 18.

Հրանտ առաջին յետ Գոռակայ ամս իբր 25. ՚Ի սորա աւուրս շինեաց բիւզ որդի պոսիդոնի կամ նեպտոնէ զբիւզանդիոն. որ յետոյ կոչեցաւ կոստանդնուպօլիս.

Ընձակ յետ Հրանտայ առաջնոյ ամս իբր 13.

Գղակ յետ Ընձակայ ամս իբր 30.

Հօրոյ յետ Գղակայ ամս իբր 3.

Զարմայր յետ Հօրոյայ ամս իբր 12. Վանեաց սա զբազումս, և եղև երևելի, և զօրութի նորա զարհուրելի։ Յաւուրս սր եղև մեծ պատերազմն ը տրոյիայն և ը յոյնս. Եւ զի բարեկամ էր սա տրոյեայ, ել՝ գնաց յօգնութի նց, և ՚ի պատերազմին ընդ յոյնս՝ եցոյց բազում քաջութիւ. և յետոյ մարտուցեալ սաստկութբ ը քաջին աքիլլէայ՝ սպանաւ ՚ի նմանէ յամի իբր 2818. կամ 4017. Եւ իբրև եհաս լուր մահու նորա ՚ի հայս՝ անկաւ խռովութի յէշ-
խանս հայոց ամս իբր 2.

Շաւարշ երկրորդ՝ ՚ի ցեղէ առաջնոյն շաւարշայ՝ երիտասարդ առոյգ և զօրաւոր՝ յետ երկուց ամաց մահուն զարմայրայ բռնացաւ ՚ի տեղիս տեղիս յՑէն հայոց. և հնազանդեցուցեալ զազգն՝ պայազատեաց
ամս իբր 43.

Պերճ առաջին յՑէն սխենեայ այր աջդ և հզօր յետ

Ջուարշայ տիրեաց ցին Հայոց ամս իբր 35։ Սա գու-
մարեալ զօր բազում եւ նորոգ. կարգ. զինուորական
յաՀարկութիւն շրջակայ ազգաց. եւ տարածեալ զբա-
զուկ իշխանութեան իւրոյ ՚ի Հեռաւոր տեղիս նուա-
ճեաց զբազում ազգս։ ՚ի սր աւուրս էր. Հեղի քա-
Հանայապետ Հրէից։

Արբուն քաջ յետ պերճայ առաջնոյ տիրեաց ազգին
զամս իբր 27. եւ ՚ի սր աւուրս ծնաւ սաւուղ թա-
գաւոր ՚ի վերայ իսրայէլացւոց։

Պերճ երկրորդ՝ յետ արբունայ պայազատէր զազգն
ամս իբր 40. յորոյ աւուրս թագաւորեաց դաւիթ
արքայ։

Բազուկ երկայնակեաց յետ պերճայ երկրորդի ամս
իբր 50. ՚ի սորա աւուրս եղեւ Հիմնարկութիւն
տաճարին սողոմոնի։

Հոյ յետ բազուկայ ամս իբր 44. զսա կոչեցին Հրա-
չակերտ (տեսլեամբ)։

Յուսակ յետ Հոյայ ամս իբր 31։

Ամբակ երկրորդ՝ յետ յուսակայ ամս իբր 27։

Կայպակ յետ ամբակայ երկրորդի ամս իբր 45։ Սա
Հզօր գտեալ քան զբազումս ՚ի նախնեաց՝ արար բա-
զում գործս քաջութեան, եւ վանեաց զթշնամիս իւրս

Փառնաւազ առաջին յետ կայպակայ ամս իբր 33։

Փառնակ երկրորդ՝ յետ փառնաւազայ առաջնոյ ամս
իբր 40։ Սա զամ աւուրս իւր յանՀոգս կեցեալ՝ ոտ-
նակոխ արար զծ իւր օտար ազգաց. եւ բազում զա-
ւառք անկան ընդ ձեռուք աւարեսանեայցս։

Սկայորդի յետ փառնակայ երկրորդի տիրեաց բա-

զումբաջութիւն ամս իբր 17։ Սա զօրացեալ յոյժ
գրաւեաց յինքն զբոլոր Հայաստան։ Ցաւուրս սորա
երեւեալ Հռոմուլոս, որ շինեաց զՀռոմ։

Ժամանակ Պարոյրոյ թագաւորելոյ մինչեւ ցԵրուանդ առաջին

Յայս վայր ուր միանգամ տիրեցին ազգի մերում 'ի
Հայկազանցն, թէպէտ եւ թագաւորակերպ վարէին զիշ
խանութիւն իւրեանց, բայց ոչ կոչէին թագաւոր, եւ
ոչ ոք եդ թագ 'ի գլուխ իւր. այլ իբր նահապետ
կառավարէին զազգն. Բայց յետ այսորիկ 'ի տիրել
պարոյրայ նահապետի՝ ինքն եւ յաջորդք իւր թագա
ւորական պատուով ճոխացեալ եղեն մինչեւ 'ի վաղ
ճանէ. ահա ունիս տեսանել արդ.
Պարոյր որդի Սկայորդւոյ զկնի մահու նր պայազա
տեաց զազգն յերկրորդ ամի շինութե Հռոմայ. սա
աւուել եւս շքեղացոյց զնահապետութի ազգին՝ քա
ջութեբ եւ իմաստութեբ իշխեալ 'ի վր Հայոց. Իւ յետ
զամս հինգ միապետելոյ, թագաւորութբ եւս պերճա
ցաւ զամս 43. այլ թէ զիարդ՝ գրեսցի սակաւուք.
'Ի պայազատել նր զազգն թագաւորէր 'ի Նինուէ
'ի վր ասորեստանեայց Սարդանապալ՝ այր զեղխ եւ
վաւաշ. որոյ վս տաղտկացեալ էին 'ի նմանէ իշխանք
նորա եւ կուսակալք. յորս զօրաւորագոյն գտեալ վաշ
բակէս իշխանն Մարաց՝ յինքն յանկոյց զայլս, մանա
ւանդ զպարոյր նահապետ ազգին Հայոց. եւ զբելեսոս
իշխանն բաբելոնի՝ այն է բաղադան, որ եւ Նաբոնա
սար ասի. խոստացեալ նց տալ զպատիւ թագաւորութե

նԹէ միաբանեցին ը̅ իւր ընդէմ սարդանապաղոյ· ժողովեալ առա ելեցուն մ̅ց զօր բազում՝ դիմեցին ՚ի վ̅ր նինուէի, և առին զայն· Թագաւորեաց յայնժամ վարբակէս փոխանակ սարդանապաղոյ· և ըստ խոստման իւրումեա շուք և պատիւ Թագաւորութ միրումն պարոյրայ՝ Թագաւորել որդւոց յորդիս ՚է Հայս յամի Ծի 3257· կամ 4456· Այնպէս և բեղեսեայ ետ Թագաւորել ՚ի բաբելոն ազգովին· և ինքն գնացեալ ՚ի մարս պայազատեաց անդ միահեծան

տէրութեամբ։

Իսկ ՚ի վ̅ր նինուէի Թագաւորեաց Թագլաթփաղասար· որոյ որդին սաղմանասար էառ զսամարիա· և որդին նորա սենեքերիմ դիմեաց զօրու ծանու ՚ի վ̅ր երուսաղէմի յաւուրս եզեկեայ արքայի յուդայ։ Եւ ՚ի սատակիլ զօրաց իւրոց ՚ի հրեշտակէ տեառն՝ կոր ՚ի գլուխ դարձաւ ՚ի նինուէ· և կարծելով Թէ չամծքն բարկացեալ են ՚ի վ̅ր իւր՝ կամեցաւ զոհել ասրաքայ կռոց իւրոց զերկոսին որդիս իւր զերիցագոյնսն զադրամելէք և զսանասար· զոր իբրև գիտացին նոքա՝ ՚ի կալ նորա առաջի ասրաքայ՝ սպանին զնա անդէն· և անտի փախուցեալ ՚ի Հայս՝ անկան

առ պարոյր Թագաւոր մեր։

Պատուով ընկալեալ զն̅ա պարոյր՝ ետ ն̅ց տեղի բնակուէ· զսանասար բնակեցոյց յարեւմտից Հարաւոյ Ծի Հայոց մերձ ՚ի սահմանս ասորեստանի· և ՚ի սմանէ բազմացեալ եղին զսիմ լեառն· և կոչեցան յանուն նախնոյն իւրեանց սանասունք՝ ռամկօրէն սասունք։ Այնպէս և զադրամելէք զերրայր սանասարայ բնա-

ձգեցոյց յարեւելից Հարաւոյ այնր կողման. և 'ի սմանէ սերեցան արծրունիք և գնունիք արք հզօրք և հոյակապք. Սա յանցանել ժամանակաց աճեալ եւս բազմացեալ և զօրացեալ՝ գրաւեցին և զբովանդակութիւն վասպուրականի. յորմէ նաև վասպուրականք կոչեցան. Եւ ինքն պարոյր բարեբաստիկ՝ պերճացեալ փառօք, և կացեալ 'ի պայազատութե ազգին է ամ ամս 48. մեռաւ խաղաղութե 'ի 50 ամի շինութե Հռովմայ.

Հրաչեայ որդի պարոյրայ՝ որ վն հրաշափայլութե աչացն զայս անուն ընկալաւ, Թագաւորեաց 'ի տեղի նորա յաւուրս եզեկեայ արքայի յուդայ ամս 22.

Փառնաւազ երկրորդ՝ որդի հրաչէի յաւուրս մանասէի որդւոյ եզեկեայ Թագաւորեաց ամս 13.

Պաճոյճ որդի փառնաւազայ երկրորդի ամս իբր 35.

Կոռնակ որդի պաճոյճայ ամս իբր 8.

Փաւոս որդի կոռնակայ ամս իբր 17.

Հայկակ երկրորդ՝ որդի փաւոսայ ամս իբր 36. Սա միաբանեցաւ ը մեծին նաբուգոդոնոսորայ արքային բաբելացւոց 'ի գնալ նորա 'ի վերայ երուսաղէմի. Եւ իբրև գերեաց նաբուգոդոնոսոր զ յուդայ և տարաւ 'ի բաբելոն, հայկակ Թագաւոր հայոց էառ զմի 'ի գլխաւորաց անտի գերելոց՝ ուր կոչիւր շամբատ՝ հանդերձ ընտանեօք նորին. և ածեալ զնա ընդ իւր 'ի հայս՝ բնակեցոյց [illegible] պատուով. Եւ 'ի սմանէ սերեցաւ ազին բագարատ՝ որ էր յաւուրս վաղարշակայ. յորոյ անուն ազգ նր բագրատունիք կոչեցան. 'ի մէջ որոյ բազումք սմբատ անուանեցան

՚յանուն նախնոյն իւրեանց շամբատայ. և ումանք ևս աշոտ յանուն որդւոյ նորա սմբատայ.

Երուանդ առաջին՝ սակաւակեաց սպանեալ՝ որդի հայկակայ երկրորդի թագաւորեաց 'ի տեղի նորա ամս 4.

Զքոյր մր էառ 'ի կնութիւն մի ումն յերևելի իշխանաց վարդգէս անուն. և շինեաց յանուն իւր քաղաք դքաստաղ գետով. զոր յետ ժամանակաց նորոգ շինեալ վաղարշայ թագաւորին հայոց՝ անուանեաց վաղարշապատ.

## Ժամանակ Տիգրանայ հայկազնոյ.

Տիգրան երուանդեան երիտասարդ գեղեցիկ և վայելչահասակ, վեհանձն և հզօր, արդարակորով և լայնախորհուրդ, քաղցրաբարոյ և առաքինութ գովելի, թագաւորեալ 'ի վր հայոց՝ գերագոյն զօրացաւ քան զա͞մ թագաւորս մեր, ևս և քան զբազում թագաւորս այլոց ազգաց. և արար բազում ինչ. նախ մեծամեծ քաջութ հարձակեալ յոյժ զսահմանս տէրութ իւրոյ. երկրորդ՝ զբազում ազգս նաև զյոյնս նուաճեալ՝ բազում ժամանակօք կալոյց հարկատու. երրորդ՝ ը ա͞մ վայելչութ շքեղացոյց զազգս մեր՝ 'ի պէտս, 'ի կերակուրս, 'ի քաղաքականութիւնս, 'ի հարստութիւնս. և յոյժ մեծապէս 'ի զինուորական կարգս. մինչև լինել նմա առաւելութ իմն անուանի և երևելի.

Յաւուրս ժամանակաց այսոցիկ 'ի թագաւորել կիւ-

րոսի 'ի վերայ ողորմելւոյ՝ Հրեշտակութիւն առաքելոյ առ
նա տիգրան հանդէպ ընդ պատարագօք. և դաշամբ ուխ-
տի միայն ընդ նմա, յամի օգնական լինել և նիզակա-
կից. (տես 'ի պատմ. Հայ. Ա. II.) Իբրև լուեալ
զայս աժդահակ արքայ մարաց՝ զահի հարաւ. զի կի-
րոս թշնամացեալ էր ընդ աժդահակայ. և յօգնա-
կան լինել նմա տիգրանայ, ոչ կարէր ինքն զդէմ ու-
նել. և մինչդեռ յայս հոգս էր նա՝ յաւելաւ նմա և
այլ իմն կասկած երկիւղի. 'ի լսելն անդ՝ թէ նաև ար-
քայն բաբելացւոց ունի միաբանել ընդ կիւրոսի.
Ցայսպիսի վարանս ծփեալ աժդահակայ եսես յե-
րազի՝ զի կին մի նստեալ ի վերայ բարձր լերին՝ երկ-
նեաց և ծնաւ զերիս դիւցազունս կատարեալս հա-
սակաւ. մին 'ի սոցունց նստեալ 'ի վերայ առիւծու
սլանայր յարևմուտս. երկրորդն նստեալ 'ի վերայ ընձու
ընթանայր 'ի հիւսիս. իսկ երրորդն հզօրագոյն նս-
տեալ 'ի վերայ վիշապի յարձակէր 'ի վերայ մարաց.
և աժդահակ մենամարտեալ ընդ նմա վիրաւորեցաւ.
և վախճան կենացն 'ի ձեռս նորա դարձաւ.
Գիտաց աժդահակ թէ մին յերից անտի է նաբու-
գոդոնոսոր թագաւորն բաբելոնի. և միւսն կիւրոս.
իսկ որ յարձակեցաւ 'ի վերայ իւր՝ իցէ խորոտան տիգրան.
* որոյ արշաւանօք աստ անպարտելի իշխանութիւն
մարաց նուաճեսցի ընդ ձեռամբ կիւրոսի||. Այս խոր-
հուրդ արարեալ ընդ իշխանս իւր՝ հաստատեցաւ 'ի մտի
պատրաստիլ տալ 'ի մարտ ընդդէմ կիւրոսի և նա-
բուգոդոնոսորայ. իսկ զտիգրան դաւաճանութեամբ կորու-
սանել. Սմին իրի հրեշտակս առաքեալ առ նա

ընծայիւք և թղթով խնդրեաց միաբանեալ նմա,
առնուլ զգօրս նր զօրագլխութեամբ ի կռուիւ իւր, և
կործանել զնա դշխոյն դշխոյից.

Ոչ գիտացեալ տիկնոջն զդաւաճանութիւն աժդահակայ՝ հաճեցաւ տալ նմա զզօրս իւր. վն և թագաւորական օրինօք և պատուով յուղարկեաց զնա առնա. և աժդահակ կարգեաց զնա ի վերոյ քան զամ կանայս. և զփորձ առեալ զիմաստութն նորա գրեթէ զամ իւր խորհրդով նորա կատարէր. Հրաման ետ եհան, զի ամենքին հնազանդեսցին անիշխանութե նորա. և զայս առնէր առ ի հաճել զմիտս նորա, և որսալ զնա ի կամս իւր ի սպանումն եղբօր իւրոյ տիգրանայ. Այսպէս յաւուր միում ի խօսելն ընդ նմա ասէ ցնա. ո՞չ գիտես զի կին եղբօր քո զարուհի խանդացեալ ընդ տիկնութի քո՝ գրգռեալ է զնա ի վերայ իմ և ի վերայ քո. և ահա եղբայր քո միաբանեալ ընդ կնոջն խորհի սպանանել զիս և զքեզ, և թագաւորել ի վերայ մարաց, և զարուհեաց լինիլ տիկին ի վր ամենայնի: Եւ յետ բազում խօսից ասէ ցնա յայտնապէս. այսպ պարտ է քեզ խորհել զխորհուրդ վն պահպանութե եղբօր քո. ապա թէ ոչ անկեալ ի տիկնութէ քումմէ խայտառակիս առաջի ամ տիկնայց. Իսկ թագուհին խորագէտ՝ իմացեալ զդաւաճանութի նորա՝ խօսեցաւ ընդ նմա քաղցրութբ. և առ երեսս հաւանեցաւ ընդ բանս նորա: Եւ ապա ի ծածուկ ի ձեռն մտերիմ և հաւատարիմ արանց ծանոյց եղբօր իւրում զնենգութիւն աժդահակայ.

Եւ քանզի գիտէր տիգրան՝ թէ հանդերձեալ է

կիւրոս գալ ՚ի վերայ աժդահակայ՝ ազդ արար նմա փութալ ՚ի նոյն. և ինքն ժողովեալ զօր բազում խաղայ ՚ի մարս, և ետ պատերազմ ընդ աժդահակայ

ամիսս հինգ.

Պատճառ երկարելոյ մարտին այս էր. նախ զի տիգրան սպասէր գալստեան կիւրոսի. և երկրորդ՝ զի ջանայր տիգրան չզայրացուցանել զաժդահակ ընդդէմ տիգրանուհեայ. այլ երկարեալ զգործն՝ գուն

գործէր կորզել զնա ՚ի ձեռաց նորա։

Եւ եղև իբրև հնարիւք իմ̄ն զերծաւ տիգրանուհի, սաստկացոյց տիգրան զպատերազմ. յորում վայրի եհաս և կիւրոս իւրովքն հանդերձ։ Եւ ՚ի խառնիլ անդ զօրացն՝ յարձակեալ տիգրանայ ՚ի վերայ աժդահակայ՝ եհար ընդ սիրտ նորա զընդարձակ տէգ նիզակի իւրոյ իբրև զշամփուր. և անդրէն յետս քարշեալ զնիզակն՝ զկէս մասին թոքոյ նորին եբեր արտաքս. և նա անդէն տապաստ անկեալ մեռաւ։ Այլ տիգրան յառաջ մղեալ զմարտն՝ եհար խսպառ և վանեաց զզօրս աժդահակայ. և գերեաց յազգէ նո̄ իբր տասն հազար ոգիս. ընդ որս էառ և զկանայս աժդահակայ։ Եւ ՚ի կատարիլ այսր՝ կիւրոս տիրեաց նո̄ր ՚ի վերայ մարաց, և էառ զթագաւորութիւնն զայն

՚ի ձեռն տիգրանայ.

Դարձ արարեալ տիգրանայ բազում աւարաւ և գերութ̄՝ յուղարկեաց նախ զքոյր իւր զտիգրանուհի ՚ի քաղաքն՝ զոր շինեալ էր յանուն իւր՝ այն է տիգրանակերտ. և զգաւառս տեղւոյն ետ նմա ՚ի կալուածս. իսկ զկանայս աժդահակայ և զպատանիս նոյին հան-

դերձ բազմութք գերեայն բնակեցոյց առ եղերբ Երաս-
խայ յայլև այլ աւանս և 'ի քաղաքս մինչև ցնախ-
ջուան 'ի համդիպոյ։ Ուրսերեալքն 'ի կանանց և 'ի
պատանեկայն ամդահակայ կոչեցան 'ի հայոց վիշա-
պազունք, թէ սերեալք յամդահակայ։ զի ամդահակ
վիշապ լսի։ Իւ եղև յետ այսորիկ 'ի պատերազմին
կիւրոսի ընդ կրեսոսի՝ միաբան ընդ նմա և տիգրան։
որով նուաճեաց կիւրոս զկրեսոս. և տիրեաց Թա-
գաւորութեն նր։ Այսպէս 'ի գնալ կիւրոսի 'ի վր բա-
բելոնի գնաց ընդ նմա և տիգրան, մինչև էառ կիւրոս
զբաբելոն։ և թագաւորեցոյց անդ զդարեհ քեռի իւր
զորդի ամդահակայ հաւուն իւրոյ։ Իւ Թէ յիրաւի
ընդ նմա էր և տիգրան արքայ հայոց՝ յայտնի երևի
'ի գուշակութեն երեմեայ 'ի խօսել նորա զառմանէն
բաբելոնի։* առէք ասէ նշան 'ի վերայ երկրիդ, փող
հարէք ընդ ազգս ամ: հրաւիրեցէք 'ի վերայ դորա
գունդս. պատուէր տուք յինէն այրարատեան Թա-
գաւորութեն և ասքանազեան գնդին. կանգնեցէք ընդ
նոյա նետակալս. ելէք 'ի վերայ||. երեմ. ծա. 27.
Արդ յայտ է թէ յայնժամ 'ի յառմանն բաբելոնի՝
Թագաւոր արարատեան Ձի տիգրան էր. Տիրեալ
ապս տիգրանայ 'ի Թագաւորութե իւրումամն իբր
45. վախճանեցաւ յետ հինգ ամաց մահուն կիւրոսի.
Թողեալ զեր'ս որդիս զծնեալս 'ի զարուհեայ Թա-
գուհւոյն. զբաբ. զտիրան, և զվահագն.

Ժամանակ վահագնի մինչև ցնոհէ.

Վահագն որդի տիգրանայ առաջնոյ քաջագոյն գը-

տեւալ քան զեղբարս իւր տիրեաց 'ի վերայ Հայոց. եւ Թագաւորեաց փոխանակ Հօր իւրոյ. եւ եղեւ զօրաւոր քան զբազումս. եւ գործեաց մեծամեծ գործս արութեան Հանգոյն Հերակլեայ, մինչեւ յօրինել Հայոցն վերայ 'ի վն նր բազում երգս ազգի ազգի այլաբանութիւնք 'ի կոյս դիւցազնական անձինն եւ յաջողակ քաջագործութեանց նորին. յորոց ինչ ինչ երգիւր եւ յաւուրս Թարգմանչացն մերոց. յորս ասիւր եւ այս, Թէ պատերազմեալ իցէ նորա ընդ վիշապս. գուցէ ընդ մարաց եղելոյ յազգէ աժդահակայ:

Կեցեալ սորա 'ի Թագաւորութեան ամս իբր 27, մեռաւ. եւ ապա վն բազմադիմի եւ երեւելի գործոց նորա կանգնեցին յեշին վերայ արձան յանուն նորին 'ի չափ Հասակի նորուն. եւ ընծայուցեալ զնա պաշտէին զոհիւք. Եւ զի ոմ ասացաք, նման գտաւ սա Հերակլեայ՝ Հերակլէս եւս կոչէին զնա. եւ յասելն Հերակլէս՝ զսա խմանային. 'ի սր զարմէ սերեալ վահունիք. յորոց բազումք յետ ժամանակաց քուրմ լեալ՝ պաշտօն մատուցանէին նախնւոյն իւրեանց անուն վահագնի:

Առաւան կրտսեր որդի վահագնի Թագաւորեաց փոխանակ Հօր իւրոյ ամս իբր 18. յորմէ ցեղեցան առաւենեանք:

Ներսեհ որդի առաւանայ Թագաւորեաց 'ի տեղի նորա ամս 35.

Զարեհ որդի ներսեհի ամս իբր 46. յորմէ ծագեաց ցեղն զարեհաւանեան:

Արմոգ որդի զարեհի յետ նր տիրեաց ամս իբր 9.

Բայկամ որդի արմոգայ յետ նր ամս իբր 14.

Վան որդի Բայգամայ յետ նորա ամս իբր 20։ Սանատրուկեայ զմեծ քաղաքն Շամիրամակերտ. և յիւր անուն կոչեաց զնա Վան.

Վահէ որդի Վանայ յետ նորա Թագաւորեաց ամս իբր 23։ Սա զօրացեալ յիշխանութեան իւրում՝ ետ պատերազմ՝ ընդ այնոսիկ որք տիրապետել կամէին ՚ի կողմանս Հայոց. և. վանեալ զնոսա քաջութեամբ՝ Թափեաց ՚ի ձեռաց նոցա զամենայն երկիր իւր։ Եւ եղև ՚ի խաղալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ ՚ի վերայ Դարեհի պարսից արքայի՝ առաքեաց Վահէ յօգնութիւն Դարեհի 40000 հետևակաց և 7000 հեծելոյ։ Եւ զի վանեցան զօրք իւր և զօրք պարսից յԱղեքսանդրէ, զօրաժողով լեալ ՚ի հեռաւոր և ՚ի մօտաւոր ազգաց՝ ՚ի Հոնաց, յԱլանաց, յԱղուանից, ՚ի Վրաց, և ՚ի կողմանցն Կովկասու, և ՚ի Կորդուաց, և յամ սահմանաց Հայոց՝ դիմեաց յոխորտանօք ՚ի վերայ Աղեքսանդրի. և ՚ի դիմի հարեալ զօրաց նորա՝ որոց Թիւ անցեալ էր ըստ չափ, առնել արար բազում հարուածս. բայց ՚ի վերջոյ ՚ի պարտութիւն մատնեալ՝ անկաւ ՚ի մարտի անդ և մեռաւ. և բազումք ՚ի զօրաց նորա կոտորեցան. և բազումք ևս գերեցան. և մնացեալքն ՚ի փախուստ դարձան և ցրուեցան. և Հայաստան անկաւ ընդ իշխանութեամբ Աղեքսանդրի. և յայնմ օրէ բարձաւ Թագաւորութիւն Հայոց ՚ի տանէ Հայկազանց մինչև ցԹագաւորել Արշակունեաց։

## ԿԵՐԱԿՈՒՐ ԿԱՄ ՈՒՏԵՍՏ·

Նախաճաշակ, Ճաշ, Ընթրիք, Հաց,
Նաշիհ, Ալիւր, Քաքար, Միս,
Կովենի, Որթենի, Ոչխարենի, Խոզենի,
Կերակուր, Երշիկ, Ապուխտ, Կարկանդակ,
Խմորխալ, Կոդի, Իւղ, Ձէթ,
Պանիր, Քացախ, Համեմունք, Թան,
Փլաւ, Մեղր, Մածուն, Խորոված,
Տապակածոյք, Աղցան, Զամչեղէն, Ձուաղեղ։

## ԸՄՊԵԼԻՔ·

Ջուր, Կաթն, Գինի, Ցքի,
Օղի, Գարեջուր, Օշարակ, Թէյ։

## ԱՆՕԹՔ ՎԱՍՆ ԸՄՊԵԼԵԱՑ·

Թաս, Սկահ, Ըմպանակ, Սկահակ,
Բաժակ, Կուժ, Սոռման, Շիշ,
Սրուակ, Թակոյկ, Սկիհ, Կթղայ։





## ԿԱՀԿՔ ԵՒ ԿԱՐԱՍԻՔ ՏԱՆ.

| | | | |
|---|---|---|---|
| Սեղան, | Ընձեռոյիկ, | Ղենջակ, | Թաշկինակ, |
| Դաստառակ կոնք, | | Լոգարան, | Տաշտ, |
| Սան, | Սկաւառակ, | Ափսէ, | Պնակ, |
| Ամանոց, | Դաշխուրան, | Աթոռ, | Գահ, |
| Բազմոց, | Նստարան, | Գորգ, | Օթոց, |
| Արկղ | Տապանակ, | Սնդուկ, | Գզրոց, |
| Տուփ, | Ճամփուր, | Պոյան, | Կաւկիթայ, |
| Թաղար, | Կուժ, | Քեսատ, | Տապակ, |
| Փուքք, | Լապտեր, | Ջահ, | Կերոն, |
| Մոմեղէն, | Կանթեղ, | Ճրագ, | Մոմ, |
| Լոյս, | Աշտանակ, | Կողով, | Զամբիւղ, |
| Սակառլի, | Տակառ, | Ընօթ, | Դոյլ, |
| Ջրմուղ, | Ջրհան, | Անկողին, | Մահիճ, |
| Ննջարան, | Վարագոյր, | Փեղկ, | Առագաստ, |
| Ծածկարին, | Բարձ, | Ծածկոյթ | Հայելի, |
| Աղեկաթ, | Րոք, | Մկրատ, | Թել. |
| Ասղանի, | Ժապաւէն, | Ասեղն, | Մատնոց: |



## ՅԱՂԱԳՍ ԳԻՒՂՕՐԷԻՑ ԵՒ ԱՅԼՈՑ.

| | | | |
|---|---|---|---|
| Գիւղ, | Ընտանի, | Մայրի, | Թաւուտ, |
| Դաշտ, | Անդ, | Արտ, | Ագարակ, |
| Անդաստան, | Ծառ, | Տունկ, | Թուփ, |
| Գետին, | Կալուած, | Բունձ, | Սերմն, |
| Ցողուն, | Եղէգն, | Հատ, | Յարդ, |
| Խոտ, | Խոտանոց, | Գարի, | Ցորեան, |
| Պարտէզ, | Ցանկապատ, | Խրամ, | Ակօս, |
| Կալ, | Արօտ, | Խրճիթ, | Հիւղ։ |



## ՄՇԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ.

| | | |
|---|---|---|
| Արօր, | Խոփ, | Մանգաղ, |
| Գերանդի, | Մաղ, | Տրմուխ, |
| Երեկժանի, | Բահ, | Հեծանոց, |
| Բրիչ, | Սայլ, | Լուծ, |
| Առանցք, | Խարազան, | Խթան, |
| Երասան, | Հունձք, | Քաղ։ |



# ՇԻՆՈՒԹԻՒՆՔ.

Շինուած, Մատուռն, Մեհեան, Աշտարակ, Ամրոց, Հիւղ, Պանդոկ,
Քաղաք, Տաճար, Ատրուշան, Բերդ, Տուն, Տեսարան, Հայարարոց,
Եկեղեցի, Սեղան, Մզկիթ, Դղեակ, Պալատ, Իջեւան, Փուռն։

## Լուսաբանութիւն։

Եկեղեցին՝ որոյ անունն ինքնին զմիութիւն և զհամախոհութիւն նշանակէ, է ժողովարան կամ տեղին, ուր լինի համաժողովումն հաւատացելոց առ 'ի դաւանել զհաւատն քի և պաշտել զԱծ։

Պարտէ՛ քրիստոնէին գնալ յեկեղեցին և անդ կալ յաղօթս. Թէպէտ յամ տեղիս է Աճ. բայց որ զԱծ դէմ յանդիման կամի տեսանել և խօսել՝ յեկեղեցւոջն աղօթեսցէ. ուր զԹագաւորն յիւր արքունական տեսանեմք, Թէպէտ ամ երկիր նր լի է նա։

Քրիստոնէական վարդապետութիւն եկեղեցւոյ է այն՝ զոր ք՟ն փրկիչն մեր ուսոյց մեզ գործով, և բանիւ վարդապետութե՟ իւրոյ, զոր և վարժապետաց կամ ծնողաց պարտէ ուսուցանել մանկանց առ ՝ի սնել ՝ի բերան։ Որպէս տեսցի ՝ի հետագայդ.

# ՕՐԻՆԱԿ.

Վարժապետ.

Ո՞վ ես դու, և զի՞նչ հաւատ քո.

Աշակերտ.

Ազգաւ հայ ՝ի հայկայ, և հաւատով քրիստոնեայ.

Վարժապետ.

Զի՞նչ է նշանն քրիստոնէի.

Աշակերտ.

Ս՟բ խաչն, որով տեառնագրեմ զերեսս իմ՝ Յանուն Հօր, և Որդւոյ, և Հոգւոյ ս՟բյ. ամէն.

Վարժապետ.

Զի՞նչ է քրիստոնեայն.

Աշակերտ.

Է աշակերտ և հետևօղ Ք՟ի, մկրտեալ յանուն ամենա-

սուրբ Երրորդութեան, և ունօղ զդաւանութիւն հաւատոյն, և օրինակն գիր։

Վարժապետ։

Զինչ իմանաս ասելովդ ամենասուրբ Երրորդութիւն։

Աշակերտ։

Իմանամ զՀայր, զՈրդի, և զՀոգի Սուրբ, որք են երեք անձինք ՚ի մի Ած։

Վարժապետ։

Ո՞վ է Հայրն, մեկնեա ինձ։

Աշակերտ։

Է Ած, մին յերրորդութենէն։

Վարժապետ։

Ո՞վ է Որդին, լուսաբանեա։

Աշակերտ։

Է Ած, մին յերրորդութենէն նմանապէս։

Վարժապետ։

Ո՞վ է Հոգին Սուրբ, պարզաբանեա։

Աշակերտ։

Է Ած, և մին յերրորդութենէն ըստ նմին օրինակի։

Վարժապետ։

Ապա ուրեմն երեք Ածք են։

Աշակերտ.

Քաւ ՚ի տեառնէ, ոչ են երեք Ածք. զի թէպէտ Հայր և Որդի, և Սբ Հոգի են երեք անձինք դաւանեալք, բայց ոչ երեք Ածք, այլ մի միայն Ած, զի ունին զմի և զնոյն էութիւն, բնութիւն և զգոյացութիւն։

Վարժապետ.

Զինչ օրինակ կարես տալ ինձ վն ամենասուրբ երրորդութեան, որ է մի միայն Ած։

Աշակերտ.

Քանզի, որպ հոգի մարդոյ մի է, բայց ունի զերիս կարողութիւնս, այսինքն՝ զմիտս, զկամս և զյիշողութիւն. նոյնպէս և ամենասուրբ երրորդութիւն է մի Ած միայն, բայց երեք անձինք, այ՝ Հայր, Որդի, և Հոգի Սբ։

Վարժապետ.

Ո՞րպէս ճանաչես, և հաւատաս զՔս գոլ Ած։

Աշակերտ.

Ճանաչեմ և հաւատամ զՔս գոլ ճշմարիտ Ած, և ճշմարիտ մարդ. Քանզի է ճշմարիտ որդի Այ, և ճշմարիտ որդի սբյ կուսին մարեմայ. ըստ վկայութեան Սբ Գրոց։

Վարժապետ.

Ո՞ւր է Քս՝ որ է Ած՝. էջ յերկնից յերկիր, և էառ ՚ի Սբ կուսէն մարեմայ զմարմին, և եղև մարդ։

Աշակերտ.

Վն ազատելոյ զմեզ 'ի ձեռաց սատանայի. և վն յուսացուցանելոյ մեզ զճանապարհ երկրին կենդանեաց և արքայութն այ։

Վարդապետ.

Ո՞րով կերպիւ ազատեաց զմեզ 'ի ձեռաց սատանայի։

Աշակերտ.

Զարչարեալ մեռանելով 'ի վերայ սրյ խաչափայտին, և քարոզելով զսր աւետարանն իւր։

Վարդապետ.

Եթէ քս անձ էր, ուրեմն զի՞արդ չարչարեցաւ, և զի՞արդ մեռաւ. կարե՞ս արդեօք տալ զօրինակ իմն վն այդր։

Աշակերտ.

Այո՛, կարեմ տալ քեզ զօրինակ մի վն հարցմանդ։ Զի ոպ հուրն մտեալ յերկաթն՝ և տանջի 'ի դարբնայն հուր՝ ընդ երկաթոյն, և անտանջելի մնայ հուրն։ Սոյնպէս և աձութին մտեալ 'ի մարդկային մարմինն՝ չարչարեցաւ և մեռաւ ը մարմնոյն, և մնաց անչարչարելի և անմահ։

Վարդապետ.

Առ ի՞նչ վախճան ստեղծաւ մարդն։

Աշակերտ.

Զի սիրիցէ նա զմեզ, և ծառայիցէ նմա պահելով զամ՟ պատուիրանս նր ՚ի կեանս յայս. և յետ սորա կենալս՝ արժանաւորեսցի տեսութեան այ, և վայելեսցի նովաւ, որ է ծայրագոյն երջանկութիւն անվախճան։

Վարժապետ.

Ի մէջ ամ՟ աղօթից, ո՞ր աղօթքն է առաւել հարկաւոր քրիստոնէին։

Աշակերտ.

Աղօթքն տէրունական, զոր ինքն Քս տէրն մեր շարադրեաց, և ուսոյց իւրոց աշակերտաց։ Եւ յետ տէրունական աղօթիցն՝ է առաւել վեհագոյն և յոյժ շահաւէտ, և արդիւնաւոր՝ գաբրիէլեան ողջոյնն։

Վարժապետ.

Ասա զտէրունական աղօթքն, զի լուայց։

Աշակերտ.

Հայր մեր որ յերկինս ես (տես էջ 90։)

Վարժապետ.

Ասա զգաբրիէլեան ողջոյնն, զի լուայց։

Աշակերտ.

Ողջոյն քեզ մարիամ. լի շնորհօք, տէր ընդ քեզ՝ օրհնեալ ես դու ՚ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո յս՟. սրբուհի մարիամ մայր այ՟, բարե-

խօսեա վասն մեր մեղաւորացս՝ այժմ և 'ի ժամու մահ-ուան մերոյ. ամէն։

Վարժապետ.

Գ՞ոն և այլ աղօթք, զորս պարտ է քրիստոնէին ուսանիլ։

Աշակերտ.

Այո, է հանգանակն նիկիական, կամ քրիստոնէական դաւանութիւն միութեան և երրորդութեան այ. և խորհրդոյն մարդեղութեան որդւոյն աստուծոյ, որ յամ աւուր յեկեղեցւոջն ասի։

Վարժապետ.

Ասա ինձ, ո՞րն է քրիստոնէական դաւանութիւնն։

Աշակերտ.

Հաւատամք 'ի մի այ Հայրն ամենակալ. յարարիչն երկնի և երկրի. երևելեաց և աներևութից. Եւ 'ի մի տէր յիսուս քրիստոս Որդին աստուծոյ. ծնեալն յայ հօրէ միածին. այսինքն յէութէ հօր. Աստ յայ. լոյս 'ի լուսոյ. այ ճշմարիտ յայ ճշմարտէ. Ծնունդ և ոչ արարած. Նոյն ինքն 'ի բնութէ հօր. որով ամ ինչ եղև յերկինս և 'ի վերայ երկրի. երևելիք և աներևոյթք։

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից մարմնացաւ. մարդացաւ. ծնաւ կատարելապէս 'ի մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով։

Որով կեան զմարմինս դհոգի և զմիտ․ և զամենայն որ ինչ է ՚ի մարդ․ Ճշմարտապէս և ոչ կարծեօք․ Զարչարեալ, խաչեալ, թաղեալ․ յերրորդ աւուր յարուցեալ․ ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս․ որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին․ յանեղն և ՚ի կատարեալն։ Որ խօսեցաւ յօրէնս և ՚ի մարգարէս և յաւետարանս։ Որ էջն ՚ի յորդանան․ քարոզեաց զառաքեալսն և բնակեցաւ ՚ի սուրբս։ Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի։ ՚ի մի մկրտութիւն․ յապաշխարութիւն․ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց։ ՚ի յարութիւն մեռելոց․ ՚ի դատաստանն յաւիտենից․ հոգւոց և մարմնոց։ Յարքայութիւն երկնից և ՚ի կեանսն յաւիտենականս։ Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդի․ կամ էր երբեմն յորժամ ոչ էր սուրբ Հոգի։ կամ թէ՝ յոչ էից եղեն կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին։ Եւ թէ՝ փոփոխելիք են կամ այլայլելիք՝ զայնպիսիսն նզովէ կաթուղիկէ և առաքելական սուրբ եկեղեցի։

՚Ի սրբոյ լուսաւորչէն մերմէ ասացեալ։

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս․ երկրպագանելով սուրբ Երրորդութեան և միոյ աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ Ամէն։



Մուհեան է տուն կամ տաճար նուիրեալ՝ ի պաշտօն դիւաց ուր ժողովին կռապաշտք առ ՚ի պաշտել զկուռս։ Սկիզբն կռապաշտութեան, և բազմածութեան ասի լինել յազգէն Քամայ, կամ առ Քանանացւոց, յորոց էր Բէլ. որ յետ թագաւորելոյ յամի Ծի իւր 1815 ամ ժամանակագրաց, հրամայեաց երկրպագանել ինքեան որպ այ· իսկ որդի նր ՚ի յիշատակ հօր իւրոյ կանգնեաց սան՝ սեղան ՚ի պաշտել զնա· ապա այլք զկնի սկսան պաշտել զմեծարոյ անձինս, և զլուսաւորս երկնից՝ համարելով. թէ երևելի մարդիկ մեռանման եղեալ՝ ի լուսաւորս իւրեն փոխեալ. այսպէս դնէ և Յովհան իմաստասէր։ Այս անօրէնութիւն էանց առա յեգիպտացիս, և ՚ի փիւնիկեցիս, անտի առ պարսիկս, առ հայս, և ՚ի հնդկանէ ՚ի յոյնս, և ՚ի հռովմայեցիս։

## ԿՈՂՄՈՒՆՔ ՏԱՆ

| | | |
|---|---|---|
| Ընդունարան, | Սրահ, | Ճաշարան, |
| Ննջարան, | Դահլիճ, | Խոհարան, |
| Վերնայարկ, | Սենեակ, | Համբարոց, |
| Գաւիթ, | Դուռն, | Փականք, |

| | | |
|---|---|---|
| Բանալի, | Նիգ, | Ծղնիք, |
| Սեամ, | Պատուհան, | Որմ, |
| Ցարկ, | Ցարկածածկոյթ, | Կամար, |
| Կամարայարկ, | Գերան, | Կրակարան, |
| Սալայատակ, | Աստիճան, | Սիւն։ |

Լուսաւորութիւն։

Ուսուցանողն նշանակէ առանձին սենեակն ուր են հաճոյս զբաղին և պարապին յուսմունս։

Նիւթք՝ որովք շինին շինուածք՝ են։

| | | | |
|---|---|---|---|
| Աղիւս, | Կղմինտր, | Կիր, | Կաւ, |
| Բեւեռ, | Սեպ, | Տախտակ, | Քար։ |



## ՊԱՏԵՐԱԶՄ.

| | | |
|---|---|---|
| Պատերազմ, | Խաղաղութիւն, | Զինուորութիւն, |
| Թշնամի, | Զօրք, | Գունդ, |
| Խումբ, | Հեծելազօր, | Հետեւակ, |
| Դաս, | Զօրապետ, | Զօրագլուխ, |
| Դրօշակակիր, | Փողահար, | Թմբկահար, |
| Զինուոր, | Նետաձիգ, | Նիզակաւոր։ |

Դէտ, Փահանորդ, Կալանաւոր,
Պատանդ, Ճակատամարտ, Զինադադարութիւն,
Փախուստ, Դարան, Սպանութիւն,
Յաղթութիւն, Աւար, Բանակ,
Վրան, Ըմբոստութիւն, Ամրոց։



## ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹԻՒՆՔ։

Հրացան, Ռումբ, Թնդանօթ, Ատրճանակ,
Սուր, Դաշնակ, Պատենանք, Տէգ,
Նիզակ, Արձէնք, Աղեղն, Կապարճք,
Նետ, Պարսատիկ, Սաղաւարտ, Վահան,
Լանջապանակ, Կապարան, Բիր, Լախտ։



## ԾՈՎԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹԻՒՆՔ։

Նաւախումբ, Նաւ, Մակոյկ, Կուր։

Մասունք նաւու.

| | | | |
|---|---|---|---|
| Ողնափայտ, | Խելք, | Ղեկ, | Կայմ. |

Խառնուրդք.

| | | |
|---|---|---|
| Առագաստ, | Առագաստակալ, | Չուան, |
| Մալուխ, | Խարիսխ, | Նաւախիճ, |
| Բեռն, | Թի, | Հէն, |
| Բեռնաւարձ, | Ծովամարտ, | Նաւաբեկումն. |

## ԶԳԵՍՏ ԿԱՄ ՀԱՆԴԵՐՁ·

| | | |
|---|---|---|
| Զգեստ, | Հանդերձ, | Ձորձ, |
| Պատմուճան, | Ագանելիք, | Խոյր, |
| Գլխարկ, | Վերարկու, | Վարապանակ, |
| Վեղար, | Զրահ, | Շրջազգեստ, |
| Թիկնոց, | Լօդիկ, | Փիլոն, |
| Աղաբողոն, | Ծածկոյթ, | Շապիկ, |
| Պատրուակ, | Վարտիք, | Անդրավարտիկ, |
| Կօշիկ, | Մոյգ, | Օդ, |
| Հողաթափ, | Մուճակ, | Գուլպայ, |
| Զանկապան, | Գտակ, | Արտախուրակ, |
| Քօղ, | Շղաշատեռ, | Բաճկոն, |
| Վտաւակ, | Տառատոկ, | Կողպատ, |
| Գօտի, | Կամար, | Շրջանակ, |
| Լանջանոց, | Ձեռնոց, | Թաթպան, |
| Թաշկինակ, | Ընձեռոյիկ, | Դաստառակ, |
| Վարշամակ, | Մուշտակ, | Փանդամ. |

Զարդք՝ զորս ընծայեն կանայք՝ են

Հիւսուած, Գինդ, Քայլ,
Մանեակ, Քայլամանեակ, Քօղեք,
Մեհեւանդ, Ապարանջանք, Մատանի,
Գօրշապահանգ, Կոճակ, Կեղծամ։

Լուսաբանութիւն.

Որք իմաստունք էին յիւրաքանչիւր ազգս հաստատել ջանացան բանիւք եւ գրովք թէ՝ Ճշմարիտ զարդ կանանց՝ պարկեշտութիւն է, ամօթխածութիւն, համեստութիւն 'ի զարդս եւ 'ի խօսս. իսկ արտաքին պաճուճանք՝ թեթեւամտութեան են նշանակ. զի ո՞ր գեղեցկութիւն իցէ յայնմանէ՝ որ հասարակ է կնոջ հարստի եւ աղքատի, մաքրասիրի եւ անմաքրի։ Եթէ 'ի բնէ վայելչագեղ իցէ. զարդուց ոչ կարօտի այնպիսին, եւ եթէ 'անգեղեցիկ, զարդքն յերեւան ածեն զտգեղութիւն նորա։

## ԿՏԱՒԵՂԷՆ.

Կտաւ, Չուխայ, Կերպաս, Մետաքս,
Ասր, Գեղմն, Բամբակ, Վուշ։

Հասակ եւ Ա[illegible]ութիւն.

Տղայութի, Մանկութի, Պատանեկութի,

| | | |
|---|---|---|
| Երիտասարդութիւն, | Ծերութիւն, | Զաւակութիւն, |
| Ցաւխտնեկանութիւն, | Տղայ, | Պատանի, |
| Աղջիկ, | Օրիորդ, | Մանկամարդ, |
| Ծեր, | Ծերունի, | Պառաւ, |
| Հայր, | Մայր, | Պապ, |
| Հաւ, | Հանի, | Մամուկ, |
| Որդի, | Դուստր, | Եղբայր, |
| Քոյր, | Թոռն, | Թոռնեակ, |
| Հօրեղբայր, | Մօրեղբայր, | Հօրաքոյր, |
| Մօրաքոյր, | Եղբօրորդի, | Քեռի, |
| Քեռորդի, | Քեռայր, | Այր, |
| Կանամբի, | Կին, | Ամուսին, |
| Քենի, | Քենէկալ, | Ամուրի, |
| Կոյս, | Կուսան, | Ընկեր, |
| Ընկերորդի, | Սկեսրայր, | Զոքանչ, |
| Սկեսուր, | Փեսայ, | Հարսն, |
| Նու, | Մօրու, | Հօրու. |

Լուսաբանութիւն,

Ու հրէայս չէ օրէն տղախնամին որդւոյն հայր կո- չել զնշնօղ, այլ միայն որդի ազատին կոչէ զայն անուն.

## ԳԵՐԴԱՍՏԱՆ,

| | | |
|---|---|---|
| Տէր, | Տիրուհի, | Տանուտէր, |
| Տանտիկին, | Կոչնական, | Ծառայ. |

# ԳՈՐԾ ԿԱՄ ԱՐՀԵՍՏ.

| | | |
|---|---|---|
| Դեղավաճառ, | Արհեստաւոր, | Հացագործ, |
| Սափրիչ. | Վարսավէր, | Պղնձագործ, |
| Գրավաճառ, | Մսավաճառ, | Հիւսն, |
| Տախտակագործ, | Խոհարար, | Վարձուոր, |
| Պարանյիկ, | Ներկարար, | Պայտար, |
| Նաւակավար, | Ձկնորս, | Ձկնավաճառ, |
| Թափիչ. | Պարտիզպան, | Ոսկերիչ. |
| Խոյրարար, | Երկրագործ, | Ձեռնածու, |
| Աշխատաւոր, | Օրէնսգէտ, | Նաւավար, |
| Վաճառական, | Ողօրէպան, | Նկարիչ. |
| Բժիշկ, | Նաւուղիղ, | Փողահար, |
| Խաղացող, | Հերկագործ, | Դռնապան, |
| Բրուտ, | Հնձող, | Հովիւ, |
| Նաւաշէն, | Կարուակ, | Տնտես, |
| Վիրաբոյժ, | Խաղախորդ, | Սայլորդ, |
| Ոստայնանկ, | Գործաւոր, | Գօտէմարդ. |

Լուսաբանութիւն.

Երևելիք 'ի վաճառականութեան էին նախ փիւնիկեցիք
եգիպտացիք, և հռովմայեցիք. որք հնարեցին հա-
տանել զդրամս և գնել այնու զիրս. յետոյ ծաղկե-
ցան և վենետիկեցիք. որոց ամենեցուն յաղթեաց հայ
ոց վաճառականութիւն, ոչ միայն նոյն իսկ եւրոպացիք.
մինչ զի՛ 'ի հնդիկս և յայլ տէրութիս հայք ծաղկե-
ցուցին զվաճառականութիւն. և տիրապէս անուանեցան
վաճառական նաև յօտարաց.

## ՅԱՂԱԳՍ ԳՈՐԾԵԱՑ·

| | | |
|---|---|---|
| Մուրճ, | Բուռն, | Կայծն, |
| Տապար, | Քերիչ, | Հարթիչ, |
| Ցղկինչ, | Հարթաչափ, | Գչիր, |
| Լծակ, | Սամինձ, | Սալ, |
| Պտուտակ, | Խարտոց, | Քանդակիչ, |
| Ունելիք, | Սղոց, | Դուր, |
| Ագյան, | Բուրաւ, | Քանոն, |

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔ·

| | | |
|---|---|---|
| Ջութակ, | Սաղմոսարան, | Ջնար, |
| Տաւիղ, | Քնար, | Կնդնդոց, |
| Ըղիք, | Լար, | Վին, |
| Սրինգ, | Թմբուկ, | Փող: |

Լեզուախօսութիւն, բարբառ կամ ձայն կենդանեաց, թռչնոց, զեռնոց, հօտից, այծից և այլոց բազմաց նմանեաց՝ յոյժ տարբեր են ՚ի միմեանց. այլ թէ զի-արդ իւրաքանչիւրոյն ձայն կամ հնչիւն՝ բացատրես-ցուք, նախ՝

Մարդն՝ կենդանի ձայնիւ խօսէ և բարբառէ: Մա-նուկն՝ ճչէ, ճիչ բառնայ: Ձին՝ վրնջէ, խխնջէ: Էշն՝ զռնչէ: Շունն՝ հաչէ: Կատուն՝ մլաւէ: Առիւծն՝ բառաչէ, մռնչէ: Գայլն՝ ոռնայ: Վագրն՝ մռմռչէ, մռմռայ: Կապիկն՝ կարկաչէ: Խոզն՝

խանչէ ։ Խոզքոռակն՝ ճչէ ։ Աքաղաղն՝ խօսէ ։ Սագն՝ կառաչէ ։ Հնդկահաւն՝ կլանէ ։ Բադն՝ կարկաչէ ։ Տատրակն՝ մնչէ ։ Ծիծառն՝ ճռուողէ, ճչէ ։ Աղաւնին՝ մնչէ ։ Արտուտն՝ գեղգեղէ, երգէ ։ Սոխակն՝ նուագէ, երգէ ։ Օձն՝ շշէ, սուլէ ։ Ճագարն՝ ոռնայ, կաղկանձէ ։ Բուն՝ կարկաչէ ։ Մարին՝ գըրգայ, կռթայ ։ Ագռաւն՝ կռնչէ, կարկաչէ ։ Ոչխարն՝ մայէ ։ Այծն՝ մայէ, մկկայ ։ Եզն՝ բառանչէ, բառաչէ ։ Ցուլն՝ բառանչէ, մռնչէ ։ Գորտն՝ կռնչէ ։ Պղինձն՝ ղօղանջէ ։ Ջուրն՝ կարկաչէ ։ Ամպն՝ գոռայ ։

## Յաղագս չորից եղանակաց ։

Գարուն, Ամառն, Աշուն, Ձմեռն ։

### Լուսաբանութիւն ։

Գարուն է առաջին եղանակ տարւոյն, որ սկսանի 'ի քսան և մի երորդ օրէն մարտի ։ և եղերի մինչև 'ի քսան և մի երորդ օրն յունիսի ։ Ամառն սկսանի 'ի քսան և մի երորդ օրէն յունիսի մինչև 'ի քսան և երկու երորդ օրն սեպտեմբերի ։ Աշուն սկսանի 'ի քսան և մի երորդ օրէն սեպտեմբերի մինչև 'ի քսան և մի երորդ օրն դեկտեմբերի ։ Ձմեռն սկսանի 'ի քսան և մի երորդ օրէն դեկտեմբերի մինչև 'ի քսան և մի երորդ օրն մարտի ։

Ամ, Ամիս, Եօթնեակ, Օր ։

## Լուսաբանութիւն.

Ամ՝ կամ տարին բաղկանայ ՚ի 365 աւուրց և 6 ժամուց։ Ամիսն բաղկանայ ՚ի 30 աւուրց՝ Եօթնակն կամ շաբաթն բաղկանայ ՚ի 7 աւուրց. որոց անուանքն ասին՝ Կիւրակէ. Երկուշաբաթի. Երեքշաբաթի. Չորեքշաբաթի. Հինգշաբթի. Ուրբաթ. Շաբաթ. Իսկ օրն բաղկանայ ՚ի 24 ժամուց. որոց իւրաքանչիւր ժամն ունի յատուկ անուն, որպ ՚ի վայր։

### Անուանք 12 ժամուց տուընջեան.

| | | |
|---|---|---|
| 1. Այգ. | 2. Ծայգ, | 3. Զայրացեալ, |
| 4. Ճառագայթեալ, | 5. Շառաւիղեալ, | 6. Երկրատես, |
| 7. Շանթակող, | 8. Հրակաթ, | 9. Հուրփայլեալ, |
| 10. Թաղանթեալ, | 11. Առաղօտ, | 12. Արփող. |

### Անուանք 12 ժամուց գիշերոյ.

| | | |
|---|---|---|
| 1. Խաւարակ, | 2. Աղջամուղջ, | 3. Մթացեալ, |
| 4. Շաղաւոտ, | 5. Կամաւոտ, | 6. Բաւական, |
| 7. Խօթափեալ, | 8. Գիզակ, | 9. Լուսաճեմ, |
| 10. Առաւօտ, | 11. Լուսափայլ, | 12. Փայլածու. |

### Գլխաւոր ժամանք աւուր՝ կոչեն

Օր, Առաւօտ, Միջօրէ,
Երեկոյ, Գիշեր, Հասարակ գիշեր.

# ԱՂՕԹՔ Ի ԿԻՐԱԿԷԻ.

Լոյս անքննին, ինքնութիւն անեղ, անհաս էութիւն անսահ-մանելի իսկութիւն, անբաժանելի միաւորական որ երրոր-դութիւն, օրհնեալ գովեալ և փառաւորեալ յաւի-տեան։ Քո են երկինք, և քո է երկիր. և զամենայն ինչ դու արարեր, յոչ գոյից 'ի գոյ ածելով յաւուրս յայս-միկ. սահմանագործելով միանգամայն և զլոյս 'ի յուսա-կութիւն յայտարարութեան երևելեացս 'ի փառս արարչա-գործ ամենահասանիչ զօրութեանդ.

Իսկ յերկրորդումս արարչութեան համագոյակից բանդ հօր և որ հոգւոյն եկեալ 'ի նորոգութիւն հնութեան՝ 'ի սմին աւուր յարուցեալ ինքնապանծ ազատութեամբ, լոյս ծագեցեր նստելոցս 'ի խաւարի և 'ի ստուերս մահու. Իսկ եղեալ յերկինս փառօք՝ առաքեցեր այսօր զփա-ռակից և զմխիթարիչ որ զոգիդ, 'ի հաստատել զնոր քո եկեղեցի որ 'ի վէմդ կենդանի, ևս և 'ի հրատարակել զօրէնս շնորհաց, և յաւետաւորել ազգաց 'ի ձեռն աշակերտացդ զյարութիւն կենաց. որում ակն ունիմք հասանել 'ի տէրունեան աւուրս։

Ցայսքան և յայսպիսի մեծամեծ բարերարութիւնս մար-դասիրութեան քո յայտնեալ իմ և զմայլեալ, անդստին անդնդային խաւարաւ մեղաց պատեցայ և պաշարեցայ թշնամեաւականս. և անդրէն միւսանգամ յապակա-նութիւն դարձեալ՝ կամաւ կորուսի և անկայ յոչէութիւն հոգևորական վիճակի և գերբնական կենաց. Այլ դու տէր ամենակալ՝ կա՛լ զիս կրկին, ընկա՛լ վերըս-տին. և հաստատեա 'ի գոյաւորութիւն կենդանութեան հոգ-

ւոյ. և լուսաւորեա՛ լուսով ամենակեցոյց յարութեան
քո զընկղմեալս ՚ի խոր խաւարի։ Տո՛ւր և զկենդա-
նարար մր զհոգիդ ՚ի նորոգումն օրինաց մտաց խղճի՛ց
անարատ սրբութեամբ մատուցանել քեզ այսօր և զամ՛
աւուրս կենաց իմոց զծառայութիւն իմ՝ հանդերձ պա-
տարագաւ օրհնութեան, և արժանաւոր գտանիլ առ քեզ
ժամանելոյ և ընդ քեզ յառնելոյ յաւուրն յետնում
յանապական և յանմահական կենսն. և օրհնել զքեզ
ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ յաւիտեան և յաւի-
տեանս. ամէն։

## ԱՂՕԹՔ ՑԵՐԿՈՒՇԱԲԹԻ.

Տէր որ զօրութեանց և արարիչ ամ՛ լինելութեանց. դու
ինքն ինքնաբաւ բարութիւն. դու ինքն ամենիշխան տէ-
րութիւն. դու ինքն ամենահայեաց տեսչութիւն. դու ինքն
տէր յաւուրս յայսմիկ զջուրս ՚ի ջուրց բաժանելով ՚ի
վերին և ՚ի ստորին՝ սահման կարգեցեր ՚ի մէջի ընդ-
տարածութիւն օդոյ ՚ի հաստատութեան։ Որով զհողեղինացս
էութիւն յիմանալեաց անտի անջրպետեալ կացուցեր, եդեալ
՚ի մէջի իբր հաստատութիւն ամենազօր հրամանաւդ
զբարձրութիւն երկնից։ Քեզ փառք և գոհութիւն և յամ՛
բանաւորաց օրհնութիւն և երկրպագութիւն յաւիտեանս
յաւիտենից. Քո է տէր կարողութիւն, և քո ամենազօ-
րութիւն. դու սկիզբն ամի և վախճան ամին։
Դու միայն Որ, դու միայն տէր՝ դու միայն բարձ-
րեալ յամի յաւիտեան։
Դու ինքն տէր ամ՛ իմ յափշտակեա՛, բաժանեա՛, և

վերացո՛ զխորհուրդս չորից մտաց իմոց՝ ՚ի ստորայնոյ աստի չորից յերկրաւորաց յօժարութեանց է անջըր-պետութիւն վերնայնոյ՝ ՚ի տեսութիւն սքանչելի բարձրութեան քո. եւ միացո՛ է լուսաւորաց խորհուրդս անմարմնոց, ճանաչել ճշմարտութեամբ հաւատոյ ըզփառս քո. եւ ընդ նոսին օրհնել, գովել եւ փառաւորել զամենասուրբ զերրորդութիւնդ. եւ ըստ նոցին կարգի կատարել զհաճոյս կամաց քոց. Յա̃մ զքեզ խնդրել, յա̃մ զքեզ սիրել, յա̃մ զքեզ պաշտել. ՚Ի քեզ ծառայել, առ քեզ դիմել, ՚ի քեզ յուսալ, ՚ի քէն առաջնորդիլ, զքէն խորհիլ եւ խօսիլ, քեւ յառնել եւ գործել, զքեւ փարիլ եւ բարիլ ընդ քեզ միանալ եւ բերկրիլ. Վ̃ն սիրոյ քո սիրել զսիրելիս եւ զատելիս. վ̃ն սիրոյ քո տանիլ վշտաց եւ թշնամանաց. վ̃ն սիրոյ քո խորշիլ ՚ի չարէ, եւ առնել զբարին. Կարողացո՛ զիս տէր՝ ՚ի սոսին, եւ հաստատեա՛ զանձն իմ յա̃մ յայսոսիկ. եւ յաջողեա՛ ինձ յաւուրս յայսմիկ՝ ՚ի սկսանիլ եօթնեկիս՝ սկիզբն առնել բարւոյ՝ նորոգութեամբ կենաց. եւ ժամանել լիութեամբ ՚ի լրումն ընթացից աւուրցս, ՚ի փառս միայնոյ ա̃ծութե̃դ. որ ես օրհնեալ յաւիտեան.

## ԱՂՕԹՔ ՅԵՐԵՔՇԱԲԱԹԻ.

Ընկերպարան տեսութիւն անձինս մերոց վարակելոյ՝ յանհնարին տխրութիւն մաշէ զիս. Ոչ տեսանի յիս՝ ոչ զգաստութիւն մտաց, եւ ոչ զգուշութի̃ կամաց. ոչ ուղղութիւն բանից, եւ ոչ ամբծութիւն գործոց.

ոչ կարգադրութիւն դնասցիս, և ոչ արթնութիւն ընթասցիս. ոչ արուեստաւորութն նաւարկութեան վարուց, և ոչ թեւարկութիւն լուղարկութեան կենաց. ոչ խոհականութիւն խորհրդոց. և ոչ որոշողութիւն ընտրութեանց. Ցամի վատթարեալ և վայրենացեալ. յամի յիմարեալ և տրորեալ. յամի խաւարեալ և խարխափեալ. յամի վարանեալ և տարտամեալ. յամի վարակեալ և վայրասուզեալ. Ոչ լոյս երեսաց յերկնաւոր Թագաւորէդ, և ոչ այցելութն գիմաց յամենարդար դատաւորէդ. Ըմոթ անհնարին իջեալ պատեալ է զինև. զի յամենաբարերար խնամոցդ յանչափ գթասիրեալ՝ չափ մի ոչ ցուցի երախտեացդ մեծի. յերկնային անձրևացդ առատ ոռոգեալ իբր անբեր երկիր՝ խոպանացեալ գտայ. երատեալ առ ՚ի քէն բազում մասամբք և բազում իրօք՝ յամի անպատ երևեցայ. Յայցելութեդ քում անըղպատ ճշմարտեալ միայն. և ՚ի խօսիլդ ընդ ՚ի ներքուստ՝ ՚ի վէգ եկի, և ապառումն պատասխանեցի. Առ քեզ գոչել ոչ համարձակիմ, և առ սէր քո ցեմ ոչ իւիք վստահիմ. ՚ի գոչելս իմ՝ սաստիմ, և ՚ի դիմելս իմ քարկոծիմ. Առ գումարումն մարգարէից առաքելոց եղեալ՝ ՚ի պատգամաց նոցին կոչկոծիմ և կոծիմ. առ նահապետացն գունդ, և առ հայրն հաւատոյ բողոք արձակեալ՝ ՚ի հայեցուածոյ նոցին տարագրիմ և մերժիմ. առ յառաջընթաց բարեխօսութն կարապետին քում յովհաննու ապաւինեալ՝ ՚ի ապաւինելեաց հեծանոյսաստ բանից նորին կասիմ, հալիմ և ջնջիմ. Այլ դարձեալ վերստին յոյս

ռուեալ վստահութեն 'ի յուսադիր յորդորմանց նոյ՝ նո-
ցին խրախուսանօք առ ամէն տէր բարձրաձայն աղա-
ղակեմ. Դու տէր տէր՝ որ զամ'ենեցուն գաղտնութեն
հոգւոյ իբրեւ զխաւար փարատես, եւ զամ դժնդա-
կութի խաւարն սրտի՝ իբր զմէգ ցրուես, փարատեա՛
աղաչեմ զվարանմունս իմ. եւ ցրուեա՛ զտագնապ մըր-
ցոլութեանս. խնայեա՛ յիս. ողորմեա՛ ինձ. եւ ցոյց
առ իս զքաղցրութի մարդասիրութե քո։

Արկին ատամնօք քաջալերս առեալ յարարչագործ
բարերարութե քումմէ՝ պաղատիմ եւ աղերսեմ առ
հաստիչդ համայնից, եւ առ գոյացուցիչդ ամի. որ 'ի
ամին աւուր ամփոփեալ զջուրս 'ի ծով՝ զ ցամաքն
երեւելի կացուցեր. եւ ընդոյն բազմազան տնկովք զար-
դարեցեր եւ պտղատու ծառովք վայելչացուցեր։
Ըստ նոյին հրեղէն եւ 'ի հնումն անդ ամփոփեալ
զզանազան ազգս իբրեւ զջուրս զազգ որդւոյդ լուսոյ՝
իբրեւ զդրախտ՝ բանաւոր բուսովք՝ նահապետական
դասուք եւ մարգարէական պտղովք բարեկարգեցեր.
եւ 'ի լրումն հնութե առ պանծալի տնկագործութիւնս
բոյս՝ զմեզ 'ի ննունդս կանանց յառաջընթացութե
պատրաստեալ բազմածնութեր։

Իսկ այժմ աղաչեմ զքեզ տէր, դու ինքն աշատարար
հրամանաւդ ամփոփեա՛ յինէն զամենահեղձոյց հո-
սանս ախտից ջուրց շրջապատողաց զհոգիս. եւ երկ-
նային շնորհօք քո զարդարեա՛ բոլոր զանձն իմ. եւ ամե-
նազարդիկ պտղաւօք հոգւոյդ մըյ՝ վայելչացո՛ զինեւն
իմ. իսկ 'ի ձեռն աղերսարկութե ընտրելոց քոց նահապե-
տաց եւ մարգարէից, եւ գոչման ձայնի յովհաննու կա-

րապետին, ընկալցիս 'ի մասն վիճակի սրբոց քոց, փառաւորել զքեզ ընդ նոսին յարքայութեան քում, և գոհանալ զքէն յաւիտեանս։

# ԱՂՕԹՔ 'Ի ՉՈՐԵՔՇԱԲԱԹԻ։

'Ի քո ինքնաբաւ յամենիշխան տէրութիդ 'ի վեր ուղղեալ զանապական զիմ ծառայութիւն, տէր տէրանց, Աստուած. և յամենահաստ զօրութիւն արարչական իշխանութեդ յափշտակեալ մտացս խորհրդով. և 'ի հրաշակերտ կարգ ձեռակերտացդ ակն եդեալ և հիացեալ մտաչիմ առաջի ահաւոր և անհաս բարձրութեան բարեխնամ Թագաւորութեդ, օրհնել զանպարագրելի զիսկութիւն փառաց Աստուածութեան քո. և գովել զանըմբռնելի մեծութիւն անեղ և ահեղ ինքնութեդ, և գոհութիւն մատուցանել անկշռելի և անբաւելի բարերարութեան մարդասիրիդ։

Դու տէր յաւուրս յայսմիկ սահմանս եդեր հաստատութեան յատակս երկնից 'ի լուսաւորութիւն գոյից երևելեաց, և յազդումն էից երկրաւորաց, յորոշումն աւուրց և ժամանակաց և 'ի չափ ամաց և եղանակաց։ Արարեր, և եղեն. հրամայեցեր և հաստատեցան։ Եւ յայնմ ցուցեր զամենակարող զօրութիւն հրամանի քո՛ բարձրացեալ, մեծացեալ. յաղթանակեալ, և փառաւորեալ։ Բարեկարգեալ բարեզարդեալ՝ աղաչեմ և յիմանալի աստեղս՝ հոգւոյ իմոյ 'ի միտս և 'ի կամս 'ի հրամանատար վերինս մասին իբրև երկնի՝ 'ի լուսաւորել զլուսաւորական տեսողութիւն, և 'ի ուղղել զզգայութիւնս ըն-քումն 'ի զգաստութիւն, 'ի զգուշութիւն և 'ի բարեյօժա-

րութն․ Կատարեան կարգաւորեան զբնաւոր և ըղ-
բանաւոր շարժութն․ անդէպ և անզուսպ գնայիս․
Կազդուրեան խնամարկեան զտկարացեալ և զկարկա-
մեալ աղքատուս անձն իշխանութես․ Ցաւդարեան յօրին-
եան զխախտեալ և զխորտակեալ ներքին մասունս․
Կանգնեան նորոգեան զխանգարեալ և զխարխալեալ
շինուածս․ Վերայն ամրայն զանկեալ և զկործանեալ
տունս․ Հանդերձեան յարմարեան զեղծեալ և զապա-
կանեալ պատկերս․

Ո՜վ լոյսդ անճառելի որդի միոյ կենդանւոյ հաւատից-
լուսաւորայ․ դու որ 'ի սմին աւուր վաճառեցար
խաւարելոյ մն գնելոյ զիս, աղաչեմ զքեզ՝ ծագեա
առ հեռացեալս 'ի լուսոյ քո զճառագայթ երկնային
շնորհացդ․ և փարատեա 'ի գիշերայելոյս զխաւար-
մունս աղջամղջին խորհրդոյս․ Կոչեա առ քեզ 'ի մթա-
նէ զապստամբեալս 'ի խնամոց քոց․ փութահայն 'ի քեզ
զտարակուսեալս 'ի յուսոյ քո․ բորբոքեա փչմամբդ
'ի քեզ զցրտացեալս 'ի սիրոյ քո․ մերձեցո առ քեզ
զմերժեալս յերեսաց քոց․ միայն Տր քեզ զանջատեալս
'ի գթոյ քո։

Ե՛կ տէր իմ, եկ էջ բանդ ած նկարագիր էութե հօր 'ի
հոգի իմ․ որ իջեր այսօր յարգանդ կուսին աւետեօք
գաբրիէլի․ Լեր ինձ հովանի ամենազօր հայրդ
երկնաւոր․ որ հովանացար այսօր անարատ մօր միած-
նի քո․ Մաքրեա և զարդարեա զսիրտ իմ կենդանարար
Տր Հոգի․ որ մաքրազարդեցեր զորովայն կուսին 'ի
բնակութի քում էակցին․ և հարսնացուցեր զնա այսօր
քումդ անյեղական որդութե։

Ո՛վ ինքնաբուն բարութիւն անճառ, երանութիւն օրհնեալ
և զիս յաւուրս յայսմիկ բարեխօսութ սբ ածածնին,
և տաճարացո՛ զհոգի իմ ամենասուրբ երրորդութեդ,
և միածնութեդ. որ ես օրհնեալ յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն.

## ԱՂՕԹՔ ՚Ի ՀԻՆԳՇԱԲԱԹԻ.

Կեցո՛ զիս ած, զի հասին ջուրք մինչեւ յանձն իմ. և շրջանք անբերելի նեղութեանց պաշարեցին զհոգիս. Իջեալ կամ ՚ի խորս տխրալից տրտմութե. և յանյատակ անդունդս տարակուսանաց տատանիմ. Ցորձանք փորձանաց վտանգեն զիս. և պտոյտք խեղդիչ խորհրդոց ընկլուզանեն զկեանս իմ. Խստութիւնք վիշապաց ծովու յուսահատութե կլլեալ են զսիրտ իմ. և Թեւաւորաց թռիչք դիւական թելադրութեց յափշտակեալ են զմիտս իմ.

Այլ դու բազմագութ և բարեխնամ ամենահնար մարդասէր տէր, կարկառեա՛ զամենազօր բազուկ քո յամենակալական գերիս. ձգեա՛ զաշխս ընհակեցոյց ձեռն քո յամենատատան ոգիս. ապրեցո՛ զանձն իմ յոգեսպառ և յոգեկործոյս վարանմանց. ազատեա՛ յանել և յանհնարաւոր պաշարմանց. արձակեա՛ յանզերծ և յանլուծանելի չար կապանաց. Միթէ տկարանայցէ աջ քո տէր ՚ի փրկել. միթէ չիցէ բաւական ձեռն քո ՚ի կեցուցանել. միթէ կարօտ ինչ իցէ բան հրամանի քո ՚ի կոչել և ՚ի կորզել զանձն իմ ՚ի դժոխային անձկութե. Դու հայեցեր զիմ, և ՚ի քէն է

ամ. դու իշխես ամի, դու դատաւորես զամ. դու հաս-տեցեր. դու կարգեցեր. դու պատրաստեցեր։ Դու պարագրես զամ. դու գրաւես. դու խնամես. դու պահպանես։ Եւ արդ չիցէ դիւրին առաջի քո և առ ի յուսանել պտղելոց և զմարդասիրելոց. և ամենաբաւական հրամանաւդ հանել յապականութե զստեղծս իմ։

Դու ինքն ամենակարօղ արարիչդ ամենարուեստ ճար-տարութե քով գոյացուցեր ՚ի սմին աւուր ՚ի ջուրս զձկունս մեծամեծս և փոքունս յոգնատարազս և ըզ-պեսպիսազուղակս. և ՚ի ջուրց անտի ստեղծագործե-ցեր այսօր յօդս զթռչունս բազմատեսակս և բազմա-ձայնս, գեղեցկատեսիլս և քաղցրախօսս։ Որոց ամե-նեսուն, և իւրաքանչիւր մասանց զննութի՝ քարոզ են անսահման իմաստութե քո, և անբաւ կարողութեդ։ Եւ բարբառքն նց յորդորումն են մարդկութեն՝ յօրհ-ներանութի փառաց քոց. եւս և ՚ի զգաստութի բարե-կարգութե անարատ վարուց բանաւորաց և ՚ի քաջա-լերութի յուսոյ՝ առ ՚ի բարձրելոյդ զայցելութի գտա-նելոյ, և ՚ի մարդասիրէդ խնամ սիրոյ տեսանելոյ։ Դու ինքն իմաստութի յաւիտենական կարգեցեր և յերկրորդումն արարչութե զնք առաքեալս քո և զաշակերտս՝ լինել ձկնորսս հեթանոսաց իբր ձկանց. և որսորդս հրեից իբր թռչնոց։ Եւ ՚ի սմին աւուր ը նոսին բազմեալ յընթրիս պասեքի՝ կարգեցեր կազ-մեցեր սեղան խորհրդոյ մարմնոյ և արեան քո։ Եւ յանդիման նց համբարձար այսօր փառօք առ հայր յերկինս։

Եւ արդ Հայեաց տէր յայս ամ և յայլ ամ զարմանա-հրաշ մեծագործութի ամենակարօղ զօրութ քո. որով ուղղեցեր և ուղղես զբովանդակութի էիցս համան-գամայն։ Հայեաց և յանճառելի մարդասիրութի քո որով հաճիս և ախորժես ցուցանել առ որդիս մարդ-կան զգութ սիրոյ քո. Ցո՛յց աղաչեմ և առ իս զողոր-մութի քո մեծ. և հան 'ի վշտաց զանձն իմ. անդորրեա՛ 'ի գերութէ ախտից զհոգի իմ. և հանգո՛ 'ի ծառայ-ութէ մեղաց զկեանս իմ. փարատեսցեն յինէն զմթութի մտաց խաւարի. և լոյս արա ինձ 'ի խորութ մառախ-լապատ վայրի։ Յօժարեցո՛ զսիրտ իմ 'ի գործել զբարիս, և արիացո՛ զամ կարողութիւ իմ 'ի ծառայութի երկնաւոր Թագաւորիդ. ուսո՛ ինձ լուծել անարատ և անվտանգ 'ի ջուրս փորձութեց, և թռչել թևօք մտա-ծութեց 'ի Խանաչութի մեծ վայելչութ քոյ և 'ի ծանօ-թութի բազմապատիկ երախտեացդ. և ես օրհնեցից զքեզ զբարերարդ իմ յաւիտեան։

## ԱՂՕԹՔ 'Ի ՅՈՒՐԲԱԹՈՒ.

'Ի լուսէ ամենաբարերար առատաբաշխ անբաւ բա-րութեն և քաղցրութեն քո լցեալ լիացեալ յամ սրտէ գոհանամ զքէն, և փառս մատուցանեմ քում ամենա-կալ ամենապսակ սքանչելի մեծութեդ։ Օրհնութի գովութի և փառաբանութի ինքնահրամանի, ինքնիշխան ինքնազօր, ամենայաղթ թագաւորութեանդ։

Դու ինքն ամենահրաշ կարողութի. դու ինքն ամե-նահաստիչ զօրութիւն. դու ինքն ամենագթած տէ-

րութիւն։ Ամենեւին եւ յամի ինքնակատար իշխա-
նութիւն. ինքնահաստ առատութիւն. ինքնաբաւ
բարերարութի։ Անհաս բարձրութի. անճառ մար-
դասիրութիւն. անբաւ գթութիւն։ Լիապատուղ
երանութիւն. ցանկալի ժառանգութիւն. անսպառա-
գիր յաւիտենականութիւն։

Դու ամենատուած բարերար, կամելով քոյով միայն
ոբ հաճութբ ստեղծագործել զմարդն, իբր պալատ
բնակութե նր գոյացուցեր զերեւելի զայս Ծ. եւ յետ
զարդարելոյ զառաստաղ նորին զերկին. եւ զյատակ
նորուն զերկիր՝ ամ գոյիւք. էացուցեր 'ի սմին աւուր
'ի հրաշալինին վայելչութե հողագնդոյս զբազմադիմի
եւ զյոգնայլխսի կենդանիս չորքոտանեայս, սողնոց եւ
զեռնոց։

Եւ 'ի լրման ամ պատրաստութե՝ առեալ հող յերկրէ՝
ստեղծեր այսօր զմարդն 'ի պատկեր քո եւ 'ի նմանութ
պանծալի։ 'Ի հողոյ երկրի արարեր զնա, զի ծանիցէ՝
թէ ուր բնակէ՝ անտի կերպարանի. որպ զի խոնար-
հեսցի։ Պատուելով ապա զնա իբրեւ զթագաւոր երկ-
րաւորայս ամի՝ հրաւիրեցեր բնակիլ 'ի ներքին սե-
նեկի 'ի դրախտին փափկութե իւր յարքունիս։ Այլ
յանկանիլ նր, եւ յաղականիլ վիճակի նորին, եւ յեղ-
ծանիլ սկզբնական արդարութեն ճաշակմամբ պտղոյ
փայտին յանցանաց 'ի պատրանաց չարին՝ ահա եհաս
'ի նա եւ յորդիս նր, եւ յիս ընոսա վճիռ յաւիտենա-
կան դատապարտութե։ Իսկ դու բանդ ամ ոչ տանե-
լով տեսանել զմարդն յայսպիսի խորտակեալ թըշ-
ուառութե իբրեւ զոչինչ վայրենացեալ եւ իբրեւ

դրամ արքայական ՚ի տասանց կորուսանել, ոչ արարեր անտես. այլ խնդրել եկիր ՚ի խնդրել և ՚ի նորոգել. Եւ ՚ի սմին աւուր ՚ի փայտ խաչի բևեռելովդ և ՚ի նմին զդառնութի մահու ճաշակելով ազատեցեր զնա և զիս ընդ նմա ՚ի դատապարտութե անտի, յամօթ արարեալ զպատրանս չարին. իսկ ես անարգս և անպիտանս յանձն՝ ամ իրօք ապերախտ գտայ ընդդէմ ամի. փոխանակ քոյդ լինելոյ՝ չարին բաժին վաճառեցայ. փոխանակ փրկութե գտանելոյ՝ տարագրութե հետևեցայ. փոխանակ յարդարութի հասանելոյ՝ անիրաւութե մաշեցայ. փոխանակ զգաստանալոյ ՚ի հոգևոր յիմարութի համբուրեցի. փոխանակ բերկրելոյ ՚ի բարիսդ՝ ՚ի չարիս զեղծայ. փոխանակ զքեզ պաշտելոյ՝ ախտից ծառայեցի. փոխանակ ՚ի քեզ յարելոյ՝ ՚ի մեղս զաղտեցայ.

Փոխանակ ՚ի լոյս գնալոյ՝ ընդ խաւար մոլորեցայ. փոխանակ ուղիղ ընթանալոյ՝ չարաչար գայթակղեցայ. փոխանակ յարքայութի մերձենալոյ՝ ընդ դժոխոց դաշն կռեցի. փոխանակ ժառանգ փառաց սահմանելոյ՝ սանդարամետին գերի գրեցայ. փոխանակ քեզ զինուորելոյ՝ ընդ դրօշակաւ սատանայի պարանեցայ.

Փոխանակ ազատութե ՚ի քեզ պարծելոյ՝ ՚ի շղթայս չար սովորութեց կապեցայ. փոխանակ խաչելոյ զմարմինս իմ կարեօք և ցանկութբ՝ բագին դիւաց կազմեցի. փոխանակ ՚ի վերինս թռանելոյ՝ ՚ի թակարդ սատանայնոյ ըմբռնեցայ. փոխանակ յերկնային անանց երանութեան վերանալոյ՝ յաւիտենական դատապարտութե պարտաւոր դատակնքեցայ.

Աւա՞ղ աղէտիցս, թէ զի՞նչ յայսքան տարապարտ մոլեգ-նութեանց յիմարեցայ և ցնորեցայ, և կամակար կորստեան դրունեցայ։ Աւաղեսցեն երկինք զեղկելիս աւաղեսցէ և երկիր. սասանեսցեք խաւարեսցին ՚ի վր իմ, և ամպք կոծեսցին քոյ կայծակամբք. եդեմ սուգ առցէ ընդ իմ, և կենդանիք ողբասցեն զինև, մանաւանդ թէ երգի-ծանիցեն և թշնամանիցեն զիս. զի եմ զնս վատթարս արձանայայ։

Ամաչեմ ասել. շուն անարգ ընդ միոյ պատառոյ ՚ի մահ մատնէ զինքն վասն իւրոյ բարերարին, և ոչ եր-բեք ընդդէմ նմին անխրաւի։ Այլ ես եմ զօրինակդ անարգագոյն դասայ առաջի քո տէր. զի ոչ պատառ-ոյ հացի, այլ զանձն քո նուէր ՚ի մահ ՚ի փրկանս իմ. ետուր և զմարմին քո և զարիւն հանապազոր-դեան կերակուր անմահութե փոխանակ պտղոյն դառ-նութե։ Իսկ ես յոր անբան անզգայացայ և անզգամա-ցայ։ Եւ արդ զինչ ասացից կամ զինչ խորհեցայց. զինչ տաց պատասխանի ՚ի յանդիմանելդ զիս յայս ամե Երկնչիմ երկրորդել. լաւ ես էր ինձ բնաւ երբեք ոչ կերպարանիլ ՚ի մարդ բանաւոր՝ է բանական բը-նութե հաւասարիլ յանարգ դդայաւոր, և ապիրա-տագոյն գոլ համարիլ է զանբան չինչաւոր։ Որպէս զո-րովայն՚ն որ երկնեաց զիս ընդ ողբալոյ բանաւորին մեծի. աշխար մեծ օժանի յորում ես ծնայ։ Մի՛ համարեսցի յաւուրս տարւոյ օրն այն, յորում անկայ ես ընդ անխ-ծիւք նախապատեղծին ադամայ. որով յայսչափ ոճիրս եղեւ նոյն նորայ շաղախեցայ։ Անիծեա՛լ լիցի ժամն այն, յորում ՚ի բարերարէդ վրիպեցայ. ՚ի փրկչէդ իմմէ

հեռացայ· 'ի լուսոյդ կենաց խոտորեցայ· և 'ի կարիս
աղքան մոլորութեանց տարորեցայ·

Այլ դու ամենագութ ամենաբարի փրկիչ որ մինչև ցօրս ցայս պահեա զիս մատնութե մահու և դժոխոյ է իջեալս 'ի ներքոյ երկրի չարեօք ոչ պարտաւորեցեր՝ աղաչեմ զքեզ, մի յանդիմաներ զիս· մի մերժեր· մի անարգեր· մի դատապարտեր· այլ գթա և խընայեա յիս· Դարձո զերեսս քո յապերախտութեանց իմոց· և լուացո զինև զանօրէնութիւնս իմ զամ: զի հանդիսասցի և փառաւորեսցի ողորմութիւն և անոխակալութիւն քո առաջի հրեշտակաց քոց· և եղիցի ուրախութիւն յերկինս վս մեղաւորիս· Ջնջեա զիմ չարիս ամենայն արեամբ քով· մաքրեա զ յանցանս իմ պատուական քրտամբք քով· կազդուրեա զտկարացեալս երկրպագելի չարչարանօք քո· և նորոգեա զապականեալս ամենակեցոյց խաչելութե քով· Խոցուածով կենարար կողիդ բղխ յուսահատելոյս զգութն այցելութե յուսոյ· և արժանացո զանարժանս է աջակողմեան աւազակին խաչակից լինել քեզ 'ի կեանս իմ· և է նմին հասանել առ քեզ 'ի վայելչութի դրախտին յարքայութե քում· և օրհնել զքեզ է հօր և է սբյ
հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից· ամէն·

## ԱՂՕԹՔ ՅԱՒՈՒՐ ՇԱԲԱԹՈՒ·

Եւ արդ հասեալ աւուրս հանգստեան շաբաթու 'ի բարձրելոյդ օրհնելոյ· յորում հանգեար անաշխատ բնութի 'ի նորագործելոյ զարարածոց տեսակս գո-

Համամ զքեն և օրհնեմ զքեզ։ Օրհնեմ վերստին․
և կրկին գոհանամ, որ՝ի սմին աւուր նոյն ինքն բանդ-
ած յետ կենագործելոյ զիս՝ հանդերձ յերեկոյէ աշ-
խատակիր մարմնոյ ՝ի նորափոր վիմի կնքելոյ անուամբ
էիդ, անապական մնալով վէմդ կենդանի։
Հանգի՛ր և այժմ յիս աղաչեմ զքեզ․ և հանգո՛ ընդ-
վաստակեալս մեղօք․ անդորրեա՛ զվարանեալս վշ-
տօք․ կազդուրեա՛ զծանրաբեռնեալս հոգւովքս։ Զխռ-
ովմունս կրիցս խաղաղեա՛․ զյարձակմունս ախտիցս
դադարեցո՛․ զկոհակս ալեաց սրտիս հանդարտեցո՛։
Մխիթարեա՛ զիս ՝ի սգալս․ սփոփեա՛ զիս ՝ի յող-
բալս․ քաջալերեա՛ զիս ՝ի լքանելս։ Թաղեա՛ զհնու-
թ-
ջնչաւոր մարդոյս ՝ի նորոգումն վարուց․ կնքեա՛ ընդ-
կեանս իմ ՝ի տիպ նմանութեն նորոգողիդ․ հաստատեա՛
զգայթակղութիւն գնացիցս ՝ի պնդութիւն վիմիդ․
Ժողովեա՛ զցրումն և զխնդումն խորհրդոյս․ կառա-
վարեա՛ զկոյրնթաց շաւիղ մտացս․ բարեկարգեա՛ զան-
բարի շարժումն կամացս․ յարդարեա՛ զանհարթութիւն
բանիցս․ հաստատեա՛ զանդէպ տատանումն զգածման
ցս․ ամփոփեա՛ զանկայելուն շարունակ զգայութեցս․
ոչ հայել աչացս՝ յարատ, ոչ լսել ականջացս՝ թիւր,
ոչ խօսել բերանոյս՝ սուտ, ոչ գործել ձեռացս՝ չար,
ոչ գնալ ոտիցս՝ զարտուղի, և ոչ մոլորիլ իմիք ըն
ուղի։ Մոռացի՛ր աղաչեմ զչարիս իմ․ զոր գիտութբ
և անգիտութբ գործեցի առաջի քո․ մոռասցի՛ր և զա-
պերախտութիւն իմ, որովք ապաշնորհ գտայ առ բազ-
մերախտ բարերարդ․ մոռացի՛ր և զտմարդի բերմունս
քիմ, որովք զայրացուցի զընկերս։ Ջնջեա՛ տէր զհն-

հաշիւ անօրէնութեանց իմոց. զորս գրեալ ունիս 'ի դըպ-
րութեան քում։ Պատառեա՛ զմուրհակ յանցանացս. զոր յի-
մարութեան իմոյ առաջադրեալ է։ Բարձ 'ի միջոյ զտումար
գաղտնեաց իմոց. զոր ձեռամբ իմով կնքեցի. զի մի՛
յաւուրն յայտնութեան երևեսցին ապիրատութիւնք իմ յայտ
յանդիմանն հրեշտակաց և մրդ, ես և դատապարտելոց
և գիտնոց. Այժմ մէն վարանիմ և տագնապիմ ի յի-
շելն իմ զհրապարակութի յանդիմանութեանս. այժմ մէն սար-
սիմ և դողամ։ այժմ մէն հալիմ և մաշիմ։ Դու ես բա-
կումողորմ տէր՝ այժմ ներեա. այժմ քաւեա. այժմ
լուա. այժմ սրբեա։ Այժմ է ժամ նորոգելոյ զիս.
'ի յետնում աւուր շաբաթ է հանգչելոյ յայսպիսիս
աշխատելոյ։

Մի՛ ոխս պահեր խոնարհեցելումս մինչև յերկիր. մի՛
վրէժս խնդրեր յամօթապարտելոյս իսպառ. մի՛ 'ի
դատ մտաներ ընդ դատակնքելոյս 'ի մահ. Մի՛ մեծ
երևեսցի չարութիւն իմ առաջի անհաս ներողութեանդ.
մի՛ բարձր երևեսցի եղջիւր անզգամութեան իմոյ առաջի
անքննելի գթածութեանդ. մի՛ անթողլի ցուցցի յանցաւո-
րութիւն իմ առաջի անսահման երկայնմտութեանդ. Յաղթես-
ցէ մարդասիրութիւն քո իմում չարասիրութեան. մեծասցի
ողորմութիւն քո յանկարծելի պարտաւորութեանս. բարձրաս-
ցի բարեգթութիւն քո քան զնեղելս իմ թշնամեաց իմոց։
Գիտեմ՝ զի անօրինեցայ. գիտեմ՝ զի չարաչար յան-
ցեայ. այլ գիտեմ և ս՝ զի սիրես ներել. ախորժիս
քաւել. յօժարիս սրբել. Քանզի ոչ կամիս զկորուստ
մեղաւորին, այլ զդառնալ նորա և զկեալ, և հանգ-
չել 'ի փրկութեան քում։ Յայդ և 'ի դոյն ահա տանե-

նաւաղայր կամեցողութիւն քո վստահացեալ՝ առ քեզ ապաւինիմ: Եւ արկեալ զանձն իմ զգարշապարօք ոտիցդ յնի փրկչիդ իմոյ՝ պաղատիմ: ողորմեա ինձ տէր, ողորմեա ինձ. եւ քաւեա զանօրէնութիւն իմ զմեծ իւ. արդ շատ է տէր, հանգո զիս, հանգիր եւ դու 'ի ձայնէ բողոքմանցս. Առ զիս եւ ժամանեցո 'ի հանգիստ քո 'ի թագաւորութիւնդ երկնից, ուր են ժողովք սրբոց քոց հայրապետաց եւ մարտիրոսաց, Ճգնաւորաց եւ կուսանաց. Հանգո ընդ նոսին բարեխօսութ՟ նոցին եւ զհոգիս ննջեցելոց մերոց 'ի հանգիստդ յաւիտենից. եւ արժանի արա զամենեսեան զմեզ՝ օրհնել զքեզ 'ի փառս արքայութեան քո ընդ հօր եւ ընդ սրբոյ հոգւոյդ յաւիտեանս յաւիտենից. ամէն.

## Մաղթանք զօրաւորք՝ արհաւրաց գիշերայնոյ.

Ընկղմեալ քաղցրութեամբ՝ տէր ած հզօր՝ զդառնացուցիս զաղաչանս. մատիր գթութեամբ՝ առ պատկառեալս դիմօք. փարատեա՝ ամենապարգեւ, զամօթական տխրութիւնս. բարձ յինէն՝ ողորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՝ հնարաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա միշտ յաղթօղդ զխաբողին հաճութիս. բաղադրեա վերնային, զմոլելոյն մառախուղ. կնքեա կենացուցիչդ զկորուսչին ընթացմունս. ցրուեա ծածկատես, զմրմռնողին չար գլումունս. խորտակեա անքննին, զմարտողին դիմեցմունս. Տեառնագրեա քո անուամբդ՝ զլուսանցոյս երդ յար-

կէս· պարփակեա՛ քո ձեռամբդ՝ զատասատաղ տանձա-
րիս· գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոյ սենե-
կիս· կնքեսցէ զքո նշանդ՝ ՚ի հետս ելից մաղթո-
ղիս· ամրասցէ քո աջովդ՝ զհանգստեանս խշտի· մաք-
րեսցես ՚ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս· պա-
հեսցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն ոգւոյս՝
անխարդախ պահեսցես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս·
կացուսցես շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ· կար-
գեսցես ՚ի գլուխ՝ ընդդէմ դիւացն դասու։ Տո՛ւր
հանգիստ ընկրկութե մահահանգոյն նիրհման ՚ի խո-
րութե գիշերիս, բարեխօսութբ հայցուածոյսբ ածա-
նիդ՝ և ամենայն ընտրելոց· Ամփոփեալ պարուրեա՛
զպատուհան տեսութեց՝ զգայարանայս իմաստից՝ ան-
զարհուրելի զետեղմամբ՝ ՚ի ծփական խռովութեց,
կենցաղական զբաղմանց· անրջական երազոց· խօլա-
կանայ ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ՝ անմխասելի
պաշտպանեալ, Եւ ըսթափեալ վերստին ՚ի ննջմանէ
ծանրութե՝ ամենայնգաստ արթնութբ, հոգենորոգ
զուարթութբ ՚ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղ-
թանաց՝ բուրմամբ հաւատոյ՝ քեզ ամենօրհնեալ Թա-
գաւոր փառաց անձառելի, փառաբանողաց երկնագո-
մար խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Զի դու
փառաւորեալ ես յամենայն արարածոյ յաւիտեանս յա-
ւիտենից· ամէն։

Ամէնք աղօթայ եղեալք ԺԵ կարգի նշ, առ դիւրա-
գիւտ լինելոյ խնդրողաց·

| Հայոց. | Աղուանից. | Հրէից. |
| --- | --- | --- |
| Նաւասարդ. | Շամս. | Թիշրի. |
| Հոռի. | Ըդամ. | Խեշուան. |
| Սահմի. | Շբաթ. | Քասլեւ. |
| Տրէ. | Նախայ. | Թեբեթ. |
| Քաղոց. | Ղամար. | Սեբաթ. |
| Արաց. | Նադար. | Ադար. |
| Մեհեկան. | Թիրայ. | Վէ ադար. |
| Արեգ. | Դամայ. | Նիսան. |
| Ահեկան. | Համիրայ. | Եար. |
| Մարերի. | Արամ. | Սիվան. |
| Մարգաց. | Ոլդան. | Թամուզ. |
| Հրոտից. | Նիրհան | Աբ. |
| Աւելեաց. | Աւելեաց. | Իլուլ. |
| Համայեցեայց. | Տօնելեաց. | Տօնից. |
| Յունվար. | Քեանունի սա՛. | Մուհարրէմ. |
| Փետրվար. | Շուպաթ. | Սէֆէր. |
| Մարտ. | Մարտ. | Րէպիւլէվվէլ. |
| Ապրիլ. | Նիսան. | Րէպիւլախր. |
| Մայիս. | Մայիս. | Ճէմազիւլ էվ՛. |
| Յունիս. | Հազիրան. | Ճէմազիւլախր. |
| Յուլիս. | Թեմուզ. | Րէճէպ. |
| Օգոստոս. | Աւսստօս. | Շապան. |
| Սեպտեմբեր. | Իլուլ. | Րամազան. |
| Հոկտեմբեր. | Թշրինի էվ՛. | Շէվվալ. |
| Նոյեմբեր. | Թշրինի սա՛. | Զիլգատէ. |
| Դեկտեմբեր. | Քեանունի էվ՛. | Զիլհիճճէ. |

## Լուսաբանութիւն.

Անուանքս ամսոց՝ որով ՚ի հնումն վարէին նախնիք մեր՝ յարդ. նշանակեալ կան ՚ի յայսմաւուրս. որք առեալ են յանուանց երեւելի անձանց ազգիս. Անուանք ամսոց հռովմայեցւոց առեալ են ՚ի կռոց մինչեւ ցյունիս. Իսկ յուլիս յառաջ կոչէր հինգերորդ. եւ ապա ՚ի պատիւ յուլիոսի կայսեր ծնելոյ ՚ի նոյն ամիս՝ այսպէս կոչեցաւ, որպէս եւ օգոստոս կոչեցաւ յանուն կայսեր՝ որ եղեւ հիւպատոս եւ կայսր ՚ի նոյն ամիս. Իսկ այլ ամիսք կոչին եօթներորդ. ութերորդ, մինչեւ տասներորդ. որ է դեկտեմբեր.

Զորս վրիպեցաք՝ աստէն, ՚ի սմին առհասարակ,
զայնս ծմ՝ ՚ի միտս քո՝ ա՛ռ հա՛ս աբձգ.

ՎԱԽՃԱՆ.



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

120